

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS

Հ. Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն Ի Ա Ն Վ Ա Ն Լ Ե Ջ Վ Ի Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. А Ч А Р Я Н А
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵՋՈՒ
ԵՎ
ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(Հայերենագիտական հանդես)

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменовдческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

1 (34)
2026



ԵՐԵՎԱՆ. ЕРЕВАН. YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ԿԳՄՍՆ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լոյս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Քլիսավոր խմբագիր Վ. Գ. Համբարձումյան
Խմբագրի տեղակալ Ն. Մ. Սիմոնյան
Պատասխանատու քարտուղար Մ. Ա. Սարգսյան

Խմբագրական խորհուրդ

Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Վ., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Հովհաննիսյան Գ. Ռ., Մոլոդիչենկո Ե. (ՌԴ), Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա), Մարկո Բաիս (Իտալիա), Անդրեա Սկալա (Իտալիա), Մանանա Միկաձե (Վրաստան)

Բաժինների խմբագիրներ

Գալստյան Ա. Վ. (հայերեն), Բրուտյան Լ. Գ. (ռուսերեն), Հովհաննիսյան Գ. Ռ. (անգլերեն)

Главный редактор В. Г. Амбарцумян
Заместитель редактора Н. М. Симонян
Ответственный секретарь М. А. Саргсян

Редакционная коллегия

Брутян Л. Г., Галстян А. В., Катвалян В. Л., Молодниченко Е. (РФ), Мохаммади М. М. (ИРИ), Оганисян Г. Р., Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К., Тонапетян-Демопулос А. (Франция), Марко Баис (Италия), Андреа Скала (Италия), Манана Микадзе (Грузия).

Редакторы разделов

Галстян А. В. (армянский), Брутян Л. Г. (русский), Оганисян Г. Р. (английский)

Editor-in- chief V. G. Hambardzumyan
Vice-editor N. M. Simonyan
Responsible secretary M. A. Sargsyan

Editorial Board

Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. V., Hovhannisyan G. R., Katvalyan V. L., Khachatryan G. K., Mohammadi M. M. (Iran), Tragut J. (Austria), Tonapetyan- Demopoulos A. (France), Marco Bais (Italy), Andrea Scala (Italy), Manana Mikadze (Georgia).

Editors of sections

Galstyan A. V. (Armenian), Brutyan L. G. (Russian), Hovhannisyan G. R. (English)

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2025

ՀՈԴՎԱԾՆԵՐ. STATUTE. ARTICLES.

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՆԱՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ* ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Բ. գ. դ., պրոֆ.

vazgengurgeni@mail.ru

vazgenhambardzumyan@aspu.

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-3

Համառոտագիր

Հայերենի և թոխարական լեզուների ցեղակցային առնչությունների հարցը մինչև օրս չի եղել առանձին ուսումնասիրության առարկա: Կան առանձին դիտարկումներ հայերենին վերաբերող տարբեր ուսումնասիրություններում:

Թոխարական լեզուների (պայմանական՝ Ա և Բ) փաստական նյութը թվագրվում է V-VI դդ., ինչպես որ հին գրական հայերենի դեպքում է: Այդ լեզուները երբեմն համարվում են ընդհանուր թոխարականի բարբառներ, որ այս առումով օրինակ է հին գրական հայերենի բարբառների հետ համեմատության համար: Եթե հայերենի դեպքում նույն V դ. է, ապա թոխարական Ա և թոխարական Բ անվանումներով լեզուների («բարբառների») միջև կա ժամանակային հեռավորություն, ինչպես նաև լեզվական նյութի ծավալի տարբերություն:

Հայ-թոխարական լեզվական զուգաբանությունների քննությունը, հատկապես հնչյունական համակարգի և բառապաշարի մակարդակում, կարևոր է հնդեվրոպական լեզուների ընդհանուր պատմության համար:

Աշխատանքում անդրադառնում ենք հնդեվրոպական ատամնային բաղաձայնների արտացոլմանը հիշյալ ցեղակից լեզուներում:

Օգտագործված է հասանելի փաստական նյութի միայն մի մասը: Նկատի ենք առնում նաև հարցի վերաբերյալ նախկինում եղած հիմնական աշխատանքները:

Բանալի բառեր և կապակցություններ. հին գրական հայերեն, թոխարական լեզուներ («Ա» և «Բ»), ատամնային բաղաձայններ, ատամնայինների հնչունական հարաբերակցություն, զուգաբանություններ:

* Ներկայացվել է՝ 10. 04.2026 թ., գրախոսվել է՝ 06. 05. 2026 թ.:

**THE REFLEXES OF INDO-EUROPEAN DENTAL CONSONANTS IN
ARMENIAN AND THE TOCHARIAN LANGUAGES
VAZGEN HAMBARDZUMYAN**

ASPU after Ch. Abovyan
Institute of Language after H. Acharyan
Doctor of Philological Sciences, prof.
vazgengurgeni@mail.ru
vazgenhambardzumyan@aspu.

Abstract

The question of the genetic relationship between Armenian and the Tocharian languages has not yet been the subject of a separate comprehensive study.

The extant documentary evidence for the Tocharian languages (conventionally designated as Tocharian A and Tocharian B) dates to the fifth and sixth centuries CE, as does the evidence for Classical Armenian. The two Tocharian varieties are sometimes regarded as dialects of a common Proto-Tocharian, a perspective that invites comparison with the dialectal evidence of Classical Armenian. Unlike the case of Armenian, whose earliest written records belong to the fifth century, Tocharian A and Tocharian B are separated by a chronological gap and differ considerably in the quantity of preserved linguistic material.

The investigation of Armenian–Tocharian linguistic correspondences, particularly at the levels of phonology and lexicon, is of considerable importance for the reconstruction of the historical development of the Indo-European languages.

The present brief study examines the differentiation and development of Indo-European dental consonants in Armenian and the Tocharian languages.

Only a portion of the available linguistic evidence has been considered. The discussion also takes into account the principal previous studies devoted to this topic.

Keywords and phrases: Classical Armenian; Tocharian A; Tocharian B; Indo-European dental consonants; phonological correspondences of dental consonants; linguistic correspondences.

**РЕФЛЕКСЫ ИНДОЕВРОПЕЙСКИХ ДЕНТАЛЬНЫХ СОГЛАСНЫХ В
АРМЯНСКОМ И ТОХАРСКИХ ЯЗЫКАХ
ВАЗГЕН АМБАРЦУМЯН**

АГПУ имени Х. Абовяна
Институт языка имени Р. Ачаряна
Д. ф. н., проф.
vazgengurgeni@mail.ru
vazgenhambardzumyan@aspu.

Аннотация

Вопрос о генетическом родстве армянского и тохарских языков до настоящего времени не становился предметом специального исследования.

Фактический материал тохарских языков (условно обозначаемых как тохарский А и тохарский В) датируется V–VI вв., как и материал древнеармянского литературного языка (грабара). Тохарские А и В нередко рассматриваются как диалекты единого тохарского языка; в этом отношении представляется целесообразным учитывать также данные диалектов древнеармянского литературного языка. Однако, если в случае древнеармянского языка речь идет преимущественно о памятниках V в., то между тохарским А и тохарским В наблюдается определенная хронологическая дистанция, а также различия в объеме сохранившегося языкового материала.

Исследование армяно-тохарских языковых соответствий, особенно на уровне фонологической системы и словарного состава, имеет важное значение для реконструкции общей истории индоевропейских языков.

В настоящей краткой работе рассматривается проблема развития индоевропейских дентальных согласных в армянском и тохарских языках.

В исследовании использована лишь часть доступного фактического материала. Учтены также основные работы, опубликованные ранее по данной проблематике.

Ключевые слова и словосочетания: древнеармянский литературный язык, тохарские языки (А и В), дентальные согласные, фонетические соответствия дентальных согласных, языковые соответствия.

Ներածություն

Թոխարական լեզուները գիտությանը հայտնի են դարձել համեմատաբար ավելի ուշ, մոտավորապես նույն ժամանակ, ինչ անատոլիական (խեթալուական) լեզուները (1900-1910-ական թթ.): Հայտնի են բնագրերի վերծանման և վերլուծության վերաբերյալ մեծ թվով աշխատություններ, կազմվել են տարբեր ծավալի և բնութագրման բառարաններ, գրվել են լեզուների հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականական կառուցվածքի առանձնահատկությունները ներկայացնող նկարագրական աշխատանքներ:

Այս թեմայի առնչությամբ առավել ուշագրավ են այն աշխատանքները, որոնք վերաբերում են թոխարական և հնդեվրոպական մյուս լեզուների ծագումնային և ցեղակցային առնչությունների հարցերին [Krauze 1959: 39-42. Meillet 1914: 1-19. Meillet 1935: 225-226. Meillet 1912: 135-152 և այլն. Blažek 1991: 123-128. Blažek 1991: 129-133. Benveniste 1959: 90-108. Blažek 1995: 233-238. Evangelisti 1959: 109-118. Windekens 1942: 932-940. Նաև 1943: 30-41, 1976: 697].

Հայոց լեզվի նախագրային շրջանի ընդհանուր պատմությանը վերաբերող աշխատություններում թոխարական լեզուների տվյալները հաշվի են առնված կողմնակիորեն: Ներկայումս հայտնի է փաստական

ավելի մեծ թվով նյութ (հատկապես բառարաններ և բառացանկեր), ինչպես նաև տարբեր բնույթի ուսումնասիրություններ թոխարական լեզուների վերաբերյալ, որոնց հաշվով էլ հնարավոր է անդրադառնալ հայերենի հետ այդ լեզուների ծագումնային ընդհանրություններին՝ իբրև հնչյունական և բառաքերականական առնչությունների արտահայտություն:

Տեսամեթոդական հիմքերը

Աշխատանքը գրված է հնդեվրոպական լեզուների տեսական այն հիմունքների նկատառումով, որոնք գործադրվում են առհասարակ ցեղակից կապերի վերհանման, լեզուների հնչյունական-իմաստային համեմատության, ինչպես նաև տիպաբանության ոլորտում [հմմտ. Anreiter 1984. Benveniste 1935. Lane 1938: 20-38. 1945: 18-26]:

Հայերենի և թոխարական լեզուների դեպքում բերվում են հնդեվրոպական ատամնային բաղաձայնների համապատասխանությունների և հեռացվածության նվազագույն օրինակներ, ընդ որում եթե թոխարական լեզուներն այդ իրողությունները հասցրել են գրեթե միօրինակության, ապա հայերենում նկատվում է, այսպես կոչված, բազմօրինակություն, որ հավանաբար իր բացատրությունն ունի պատմական գործընթացների բազմազանության մեջ: Նկատելի է նաև հակառակ երևույթը՝ միօրինակություն հայերենում, բազմազան ձևեր թոխարականում:

Այս նկատառումով հիշյալ երևույթների քննությունը ենթադրում է պատմամշակութային առնչությունների և տեղայնացումների հնարավոր արծարծումներ:

Հետազոտության մեթոդները

Հոդվածում առավելապես կիրառված են պատմահամեմատության մեթոդների միջոցները (զուգահեռ համեմատություն, ցեղակից այլ լեզուների տվյալների հնարավոր վկայաբերում, իրողությունների դիտարկում), հայերենի (հատկապես բարբառների) հետ համադրում, որոշ դեպքերում տիպաբանական զուգահեռների մատնանշում:

Արդյունքները

Թոխարական լեզուների ատամնային բաղաձայնների ուսումնասիրությանը նվիրված է հատուկ աշխատություն, որը գիտության մեջ համարվում է արժեքավոր, այլև լիովին ընդունելի է առհասարակ հնդեվրոպական լեզուների հնչյունական համակարգի պատմահամեմատական ուսումնասիրության համար [Burrou 1976: 129-133. Evangelisti 1959: 109-118.

Иванов 1959: 5-37. Gamkrelidze, Ivanov 1984, Hilmarsson, 1991. նաև 1991-1993: 176-186. Pisani 1948: 313-324. Ringe 1991: 137- 146]:

Նման քննությունը, հայտնի է, հիմնված է դասական համեմատաբանության սկզբունքների վրա, հատկապես սկզբունք, որ մի կողմից՝ հիմնվում է լեզուների, ընդունված է ասել, կենտում-սատեմային (centum-satem) դասակարգումային տարբերական վրա, որի տեսանկյունից թոխարական լեզուները բնորոշվում են իբրև կենտումային բնույթի լեզուներ, մյուս կողմից՝ հայերենի համար տրվում է, այսպես կոչված, բաղաձայնական համակարգի տեղաշարժի ենթարկված լեզվի բնորոշում: Այնինչ նորագույն ուսումնասիրություններում կատարվել են բավականին հեռանկարային ճշգրտումներ, արվել տարբերական, այլև բնորոշման վերաբերյալ վերանայման առաջարկներ [Gamkrelidze, Ivanov, 1984: 7-8]:

1. Ստորև ներկայացնենք թոխարական լեզուների հնդեվրոպականից ունեցած արտացոլումների պատկերը՝ 1960-ական թթ. պատկերացումների տվյալներով, ընդ որում՝ դասական համեմատաբանության հիմունքներից բխող քննական վերլուծությամբ:

Այս դեպքում ամենից առաջ նկատի ենք ունեցել Ա. Մեյեի, Հ. Պեդերսենի, Պ. Պ. Անոնյետերի, Է. Էվանջելիստի Գամկրելիձեի և Իվանովի դիտարկումները (տե՛ս Meillet 1912: 135-152. Pedersen 1951: 1-16. նաև 1931: 192-196. 1941: 292. 1943: 17-19. 1944. Anreiter 1984: Gamkrelidze, Ivanov: 1984. 10, նաև 109-118): Էվանջելիստի աշխատության մեջ սահմանվող օրինաչափությունների, նաև ցեղակից լեզուների համապատասխան օրինակների մեջբերումներում հանդիպում է հայերենից միայն մեկ օրինակ (հայ. *դառնամ*), որին իբրև լրացում կարելի է բերել մեծ թվով օրինակներ (*թաքչիմ*, *դէզ* - *դիզանիլ*, *ծուփ* – *ծփալ*, *տիւ* «ցերեկ» և այլն), այլև, ոչ անկախ Պիզանիի կարծիքից, նշում է շրթնաքմայինների արտացոլման դեպքում հայ-հունա-ալբանա-թոխարական զուգաբանության մասին [Evangelisti, 1959: 113, նաև 116 (տողատակ)]:

2. Հետագա ուսումնասիրություններում լայնորեն օգտագործվում են Էվանջելիստի ուսումնասիրության տվյալները: Գամկրելիձեի և Իվանովի աշխատության մեջ, օրինակ, հնդեվրոպականի թոխարական արտացոլումները ներկայացնում են հետևյալ պատկերը.

ա) հե. *t' > թոխ. ś. թոխ. Ա śāk, թոխ. Բ śāk «տասը» (հե. *t'ek^(h)-),

բ) հե. *d^(h)- > թոխ. ts: թոխ. Ա tsik «կազմել, ձևել», tsāk «այրել» թոխ. Բ tsāk «այրել» (հե. *d^(h)eg- // *deg^(h)-).

զ) հե. *t^[h]- > թոխ. c. թոխ. Ա mācar, թոխ. Բ mācer «մայր» (հե. *māt^(h)er-) (տե՛ս Gamkrelidze. Ivanov 1984: 49. տե՛ս նաև Gamkrelidze, Ivanov 1990-1991: 65-296):

Մեր այս աշխատանքում վերը՝ մասնակիորեն նկատի առնված իրողությունները կարևոր են հետագա լայն ուսումնասիրության ձեռնամուխ լինելու համար:

3. Վերջին ժամանակներս լայն ուշադրություն է հատկացվում հնդեվրոպական լեզուների հնչյունական, բառաբերականական զուգաբանություններին. առանձին քննության առարկա են եղել, օրինակ, սլավոնա-թոխարական զուգաբանությունները (Blažek, 2011): Հայերենին վերաբերող այդօրինակ ուսումնասիրությունը ապագային է պատկանում:

Ներկայացնում ենք հայերենի՝ հնդեվրոպականից ունեցած հետևյալ արտացոլումները՝ համադրությամբ թոխարականի հետ.

4. Հայ. *դ* - թոխ. Բ *tw*, *t/c* (< հե. *d^[h]).

Հայ. *դուռն* «դուռ» (*դուրք*, *դրունք* և այլն. «դռներ. դարպասներ» - թոխ. Բ *twere* (< հե. *d^[h]ur- «դուռ»). հմմտ. հինդկ. *dwāṛ*- «դուռ», ավեստ. «դուռ», «դարպաս», «բակ», հուն. (հոմ.) *θύρη* «դռներ», «դարպաս», «մուտք», ալբ.. *dërë* «դուռ», լատ.. *forēs* «երկփեղկ դուռ», «մուտք», *forās* «շեմք», «առմուտք», հիոլ. *dorus*, գոթ. *daúr* «դուռ», հվգերմ. *turi* «դուռ», *tor* «դարպաս» (գերմ. *Tür*), հանգլ. *duru* «դուռ», *dor* «դարպաս» (անգլ. *door*), լիտվ. *dùrys* «դուռ» «դռներ», պրուս. *dauris* «մեծ երկփեղկ դռներ», հւլավ. *dvīrī* «դուռ», *dvorū* «բակ» (հմմտ. Djahukyan 1987: 120, 211. Djahukyan, Saradjeva, Haruthyunyan 1983: 60. Gamkrelidze, Ivanov 1984: 743 և այլն):

Հայ. *դուստր* «աղջիկ (զավակ)», (սեռ. հոլ.) *դստեր* - թոխ. Ա *ckācar* «իգական սեռի սերունդ», «աղջիկ (մեկի)», թոխ. Բ *tkācer* «աղջիկ (զավակ)» (< հե. *d(h)ug(h)H^(h)er- «դուստր», «իգական սեռի սերունդ»). հմմտ. հինդկ. *duhitār*- «աղջիկ», ավեստ. *dugñdar*-, *duyðar*-, պրսկ.. *duxtar*, *duxt*, հուն. *δυσάτηρ*, օսկ. *futír*, գոթ. *daúhtar*, հվգերմ. *tohter* (գերմ. *Tochter*), հանգլ. *dohtor* (անգլ. *daughter*), լիտվ. *duktė*, պրուս. *duckti*, հւլավ. *dūšti* «աղջիկ, ռուս.*дочка* «աղջիկ» (հմմտ. Acharyan 1971: 686-687. Djahukyan 1987: 120. Djahukyan 2010: 204, Djahukyan, Saradjeva, Aruthyunyan 1983: 60. Gamkrelidze, Ivanov 1984: 569, 766 և այլն):

5. Հայ.. *տ* - թոխ. Ա / Բ *t*, *ś*, *ø* (զրո) (< հե. *t')

ա) հայ. *աստղ* [astɬ] «աստղ» - թոխ. *U šreñ* (հոգն. ուղղ. հոլ.) «աստղ», թոխ. *Ā ściryē* «աստղ», *ściriñ* (հոգն. թ.) (< հե.. **Hast^[h]er-* «աստղ»). Հմմտ. խեթ. *ḫašter* «աստղ», հինդկ. (վեդ.) *tārah* «աստղ», *stṛ-bhiḥ* (հոգն. գործ հոլ.), ավեստ. *stərəbyō*, հուն. *ἀστήρ*, *ἀστερος* (սեռ. հոլ.), *ἀστρα* (հոմ. հոգն. սեռ. հոլ.), լատ. *stella* (<**stēl-na*), հվգերմ. *sterno* (գերմ. *Stern*), հանգլ. *steorra* (անգլ. *star*) (հմմտ. Acharyan 1971: 278. Gamkrelidze, Ivanov 1984: 685):

բ) հայ. *ոտն* [otn] «ոտք» - թոխ. *U pe*, թոխ. *Ā paiyyē* «ոտք» (< հե. **p^[h]et'-* «ոտք»). հմմտ. խեթ. *pata-* «ոտք», հինդկ. *pad-* «ոտք», ավեստ. *pad-* «ոտք», հուն. *πούς*, (սեռ. հոլ.) *ποδός*, լատ. *pēs*, (սեռ. հոլ.) *pedis*, գրիկ. *ῥῑς*, հվգերմ. *fous* (գերմ. *Fuss*), հանգլ. *fōt* (անգլ. *foot*) (Gamkrelidze, Ivanov 1984: 786₂): Հմմտ. նաև *հեպ-ք* «(ոտնա)հետք», *յեպոյ* [yetoy] «հետո, հետքից» (հմմտ. Acharyan 1977: 83. Djahukyan 1987: 142. Djahukyan, Saradjeva, Aruthyunyan 1983: 92. տե՛ս նաև 303):

գ) հայ. *տապալ(ել)* «գետին պառկեցնել, գետնով տալ», նախնականը՝ «ուտել (որսի կենդանի)» - թոխ. *U tāpal* «ուտելիք», «ենթակա ուտելու՝ պիտի ուտվի» (< հե. **t'aHp^[h]-* «ծիսական ուտեստ՝ աստվածների հրամցվող և ուտելի տոնական արարողությունների ժամանակ»). հմմտ. խեթ. *tap-* «ուտել», «պաշտոնյա՝ առնչվող պալատական խոհանոցին», հիսլ. *tafn* «զոհի կենդանի», «զոհաբերված ուտելիք. մատաղ», լատ. *daps* «զոհաբերված (ծիսական) սեղան», «ճաշ», «ուտեստ», «խնջույք» (9:701): *Stē*՝ս նաև *տասն* «հանդիսություն, տոն» - թոխ. *U tāp-* «ուտել» (< *u.-e. *t'aHp^[h]-*) (հմմտ. Acharyan 1979: 372. Gamkrelidze, Ivanov 1984: 701). լիոնական հավանական է առնչությունը հայ. *թալալ* «զլորվելը. տապալում» բառի հետ, որ Աճառյանի բառարանում համարվում է «անստույգ բառ», ինչպես որ *տապալ(ել)* (տե՛ս Acharyan 1973: 163-164):

դ) հայ. *տասն* «տասը» - թոխ. *U šāk*, թոխ. *Ā šak* «տասը» (< հե. *t'eḱ^[h]ṣ* «տասը»). Հմմտ. հինդկ. *dāśa*, ավեստ. *dasa*, հուն. *δέκα*, լատ. *decem*, հիդլ. *deich* *n-*, գրիկ. *ταῖhun*, հվգերմ. *zehan* (գերմ. *zehn*), հանգլ. *tien* (անգլ. *ten*) (Acharyan 1979: 387. Djahukyan 1987: 117. Gamkrelidze, Ivanov 1984: 846. 5, էջ 56).

ե) հայ. *տեղ* [tel] «հող. գետին» - թոխ. *U tkañ*, (սեռ. հոլ.) *tkanis* (< արմատի գրո աստիճան, հե. **d^[h]g^[h]-*, թոխ. *Ā keñ* («ատամնային բաղադրիչի անկմամբ») «հող» (< արմատի լրիվ աստիճան, հե. **d^[h]g^[h]-* «հող»). հմմտ. խեթ. (ներգոյ. հոլ.) *tkan*, լիտվ. *žemė*, հսլավ. *zemlja*, լատ. *humus*

«հող»։ նշենք նաև՝ «հողեղեն» նախնական իմաստով։ թոխ։ Ա som «պատանի», թքխ։ Բ šaumo, (հոգն թ.) šāma «մարդ» (< հե. *d^[h](e)g^[h]om-). հմմտ. լատ. homo «մարդ», օսկ. humuns «մարդիկ», գոթ. guma «մարդ», պրուս. smoy «մարդ» և այլն. (հմմտ. Gamkrelidze, Ivanov 1984: 149, 150, 475, 536, 821):

6. Հայ. թ - թոխ։ Ա /Բ t (< հե. *t^[h])

ա) հայ. ութ «ութ» - թոխ։ Ա okāt «ութ», թոխ։ Բ okt «ութ» (< հե. *ok^[h]t^[h]ō(u) «ութ». հմմտ. հինդկ. aṣṭā, aṣṭāu, ավեստ. ašta, հուն. ὀκτώ, ալբ. tētë, լատ. octō, հիբլ. ocht n-, գոթ. ahtau, հիսլ. átta, հվգերմ. ahto (գերմ. acht), հանգլ. eahta (անգլ. eight), լիտվ. aštuoni, սլավ. osmī (Gamkrelidze, Ivanov 1984: 846): Միաժամանակ նկատենք այն, որ ոչ անկախ դասական համեմատաբանության մեջ արմատացած կարծիքից, գտնում են, որ հայ. ութ «ութ» թվականը ծագում է հե.*op^[h]t^[h]ō ձևից՝ թվական համակարգում նախորդող թվանշանի՝ եօթն-ի (< հե. *sep^[h]t^[h] «յոթ», նաև (եւթն [*եաւթն], եօթն «յոթ») համաբանությամբ, և որը ներկայումս այնքան էլ համոզիչ չի կարող լինել (հմմտ. Acharyan 1977: 590. Gamkrelidze, Ivanov 1984: 846):

բ) Այնուհետև, հայ. ութսուն «ութսուն» (բառացի՝ «ութ տասնյակ» - թոխ։ Ա oktuk, թոխ։ Բ ok- taŋka (< հե. *ok^[h]t^[h]ō-k^[h]omt^[h]- «ութսուն»). հմմտ. հուն. ὀγδῶκοντα, լատ. octōgintā, հիբլ. ochtmoga, հիսլ. átta tiger «ութ տասնյակ» և այլն (հմմտ. Acharyan 1977: 591. Gamkrelidze, Ivanov 1984: 848).

Համառոտագրություններ

1. Քերականական տերմիններ

գործ. հոլ. – գործիական հոլով
 հոգն. թ. – հոգնակի թիվ
 սեռ. հոլ. – սեռական հոլով
 ներգոյ. հոլ. - ներգոյական հոլով
 ուղղ. հոլ. - ուղղական հոլով

2. Լեզուներ

ալբ. – ալբաներեն
 անգլ. - անգլերեն
 ավեստ. – ավեստերեն
 գերմ. – գերմաներեն
 գոթ. - գոթերեն

թոխ. – թոխարական (-երեն)
 լատ. – լատիներեն
 լիտվ. – լիտվերեն
 խեթ. – խեթերեն (-ական)
 հայ. - հայերեն
 հանգլ. – հին անգլերեն
 հե. – հնդեվրոպական
 հիռլ. – հին իռլանդերեն
 հիսլ. – հին իսլանդերեն
 հլիտվ. – հին լիտվերեն
 հինդլ. (վեդ.)-հին հնդկերեն (վեդայական)
 հվգերմ. – հին վերին գերմաներեն
 հսլավ. – հին սլավոներեն
 հուն (հոմ.) – հունարեն (հոմերոսյան)
 պրուս. – պրուսերեն
 օսկ. – օսկերեն

Գրականության ցանկ

- [1] Acharyan H. Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary], I, Yerevan, 1971.
- [2] Acharyan H. Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary], II, Yerevan, 1973:
- [3] Acharyan H. Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary] III, Yerevan, 1977:
- [4] Acharyan H. Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary], IV, Yerevan, 1979:
- [5] Anreiter P. P. Bemerkungen zu den Reflexen indogermanischer Dentale im Tocharischen // Innsbrucker Beiträge zur Sprachwissenschaft, 42, Innsbruck: 1984.
- [6] Benveniste É. La place du tokharien parmi les dialectes indo-européens.- “*Bulletin de la Société de Linguistique de Paris*.”, 36, 1935
- [7] Benvenist E. Toxarskiy i indoevropskij [Tocharian and Indoeuropean].- «Toharskie yazyki (sbornik statey)», Moscow, 1959, p. 90-108. .
- [8] Blažek V. Tocharian Studies Works 1, Edited by Michal Schwarz Masaryk University Brno 2011:
- [9] Blažek V. Slavic - Tocharian Isoglosses.- “*Linguistica Baltica: an international review of Baltic linguistics*”, 4, 1995, p. 233-238.

- [10] Blažek V. Slavic - Tocharian Isoglosses I . 1. Sl. *kūpū 'vulva' - Toch.*kwip- 'shame' .- *“Tocharian and Indo-European Studies”*, 5, 1991 , p. 123-128.
- [11] Blažek V. Slavic - Tocharian Isoglosses II . 2.Sl. *čīlnū 'boat'- Toch. *kolmo 'ship' .- *“Tocharian and Indo-European Studies”*, 5, 1991, p. 129-133.
- [12] Burrow Th. Sanskrit words having a dental -s- after i, u, and r .- *“Bulletin of the School of Oriental and African Studies”*, 1976 , p. 33-42:
- [13] Djahukyan G. B. Hayoc' lezvi patmut'yun: Nahagrayin žamanakašrjan [History of Armenian language: Prehistorical period], Yerevan, 1987:
- [14] Djahukyan G. B. Hayeren stugabanakan bararan [Etymological Dictionary of Armenian language], Yerevan, 2010:
- [15] Djahukyan G. B., Saradjeva L. A & Haruthyunyan C. R. Oč'erki po sravnitel'noy leksikologii armjanskogo qzyka [Essays on the Comparative Lexicology of the Armenian Language], Yerevan, 1983.
- [16] Evangelisti E. Indoeuropejskie zubnye soglasniye i toxarskie palatalizac'ii [Indo-European Dental Consonants and Tocharian Palatalizations] (Original: Evangelisti E., I modi di articolazione indoeuropei nellepalatalizzaazione tocariche // *“Recherche linguistique”*. Bulletino semestrale dell'Istituto di glottologia dell'Università di Roma”, Roma, 1950, I, N 1, p. 132-140). -].- «Toxarskie yazyki (sbornik statey)», Moscow, 1959, p.109-118.
- [17] Gamkrelidze T. V. & Ivanov Vyač'. Vs. Indoewropeyskiy yazik i indoewropeyt'i: Rekonstrukciya yazika i istoriko-tipologi č'eskiy analiz prayazika i protokulturi [Indo-European and the Indo-Europeans: A Reconstruction and Historical-Typological analysis of a Protolanguage and Proto-Culture"], I-II, Tbilisi, 1984:
- [18] Gamkrelidze T.V., Ivanov Vjač'. Vs. Les premiers Indo-Européens de l'histoire: Les ancêtres des Tokhariens en Asie Mineure Ancienne .- *“Revue des études géogiennes et caucasiennes”*, 6-7, 1990-1991, Paris, p. 265-296.
- [19] Hilmarsson J. Development of labiovelars (and tectals plus ʷ) in initial position on Tocharian (an overview) // *“Die Sprache: Zeitschrift für Sprachwissenschaft”* 35, 1991-1993 , 176-186 .
- [20] Hilmarsson J. The Nasal Prefixes in Tocharian . A Study in Word Formation // *“Tocharian and Indo-European Studies Supplementary Series”*, 3, Reykjavík : o. A., 1991.
- [21] Ivanov Vyač'. Vs. Toxarskiye yazyki i ix znač'enie dlya sravnitel'no-istoričeskogo issledovaniya indoewropejskix yazykov [The Tocharian Languages and their Significance for the Comparative-Historical Study of the Indo-European Languages].- «Toharskie yazyki (sbornik statey)», Moskva, 1959, p. 5-37.
- [22] Krauze W. Toharskiye yazyki [The Tocharian languages] (Original: Krause W. Tocharisch. Handbuch der Orientalistik, hrsg v. B. Spuler, IV. Iranistik, 3, Leiden, 1955). - «Toxarskie yazyki (sbornik statey)», Moscow, 1959, p. 39-89.

- [23] Lane G. S. Problems of Tocharian phonology.- «Language», 1938, vol. 14, No 1, January-March, p. 20-38.
- [24] Lane G. S. The Tocharian palatalisation.- «Language», 1945, vol. 21, No 1, January-March, p. 18-26.
- [25] Meillet A. Le Tokharien // “*Indogermanisches Jahrbuch*” 1, Berlin 1914, 1-19.
- [26] Meillet A.. Les gutturales et le tokharien // “*Festschaft Hermann Hirt*”, Heidelberg 1935, 225-226.
- [27] Meillet A. Les nouvelles langues indoeuropéennes trouvées en Asie Centrale // *Revue du mois* 14/80, 1912, p. 135-152.
- [28] Pedersen H. Die gemeineuropäischen und die vorindoeuropäischen Verschlusslaute // “*Det Kgl. Danske Videnskabernes Selskab, Hist.-filol. Meddelelser*” 32, 5, 1951, p. 1-16.
- [29] Pedersen H. Linguistic science in the nineteenth century . translated by J. Spargo, Cambridge (Mass.) 1931 (Բնագիրը. Sprogvidenskabe i det nettende aarhundrede. Metoder og resultater. Kopenhagen 1924. (1931, p. 192-196) “*Discoveries in Chinese Turkestan. Tocharian.*”
- [30] Pedersen H. Tocharisch vom Gesichtspunkt der indoeuropäischen Sprachvergleichung // “*Kongeligegl. Danske Vidensk.Selskab: Historisk-filologiske Meddelelser*”. XXVIII, 1, Kopenhagen, : Munksgaard, 1941, 292.
- [31] Pedersen H. Tocharische Beiträge 1/2; 3/5 // “*Revue des études indoeuropéennes*” 3,1, 1943, p. 17-19.
- [32] Pedersen H. Zur tocharischen Sprachgeschichte; Kopenhagen: Munksgaard, 1944.
- [33] Pisani V. Noterelle Ario-Tocaricho // “*Acme*” 1, Milano 1948, 313-324.
- [34] Windekens, A. J. van: Recherches sur l'étymologie des deux dialectes tokhariens “ *Bulletin of the School of Oriental and African Studies*”, 10, 1942, p., 932-940
- [35] Windekens A. J. van: Note sur deux difficultés de la grammaire comparée arménienne “ *Revue des études indoeuropéennes*”, 3, 1943, p. 30-41

**«ԳԼՈՒԽ» ԵՎ «ՍԻՐՏ» ՍՈՄԱՏԻԿ ԲԱՌԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ*
ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Գիտաշխատող, ք. գ. թ., դոցենտ
sonmiq20@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-14

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հայերենում և արաբերենում «գլուխ» և «սիրտ» սոմատիկ բառերով կազմված դարձվածաբանական միավորների զուգադրական-լեզվամշակութաբանական վերլուծությանը: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել նշված սոմատիկ բառերի իմաստաբանական խմբերը, փոխաբերական ընդլայնումները, ինչպես նաև դրանց համընդհանուր և ազգային-մշակութային առանձնահատկությունները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ «գլուխ» սոմատիկ բառը երկու լեզուներում էլ կապված է մտածողության, առաջնորդության, իշխանության և պատասխանատվության գաղափարների հետ: Հայերենում, սակայն, առավել ընդգծված են խելքի և գործնական կարողությունների, իսկ արաբերենում՝ հասարակական կարգավիճակի և իշխանական հարաբերությունների իմաստները: «Սիրտ» սոմատիկ բառը երկու լեզուներում խորհրդանշում է հուզական և բարոյական աշխարհի կենտրոնը՝ արտահայտելով սեր, կարեկցանք, քաջություն, վախ և հոգե-կան ապրումներ: Արաբերենում այն ունի նաև ավելի ընդգրկուն՝ հոգևոր և ճանաչողական իմաստային շերտեր:

Արդյունքները վկայում են, որ երկու լեզուներում սոմատիկ դարձվածքները ձևավորված են համընդհանուր ճանաչողական մոտեցումների հիման վրա, սա-կայն արտացոլում են նաև տվյալ ժողովուրդների մշակութային և լեզվամտածողության առանձնահատկությունները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դարձվածաբանություն, սոմատիկ դարձվածքներ, լեզվամշակութաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, հայերեն, արաբերեն:

* Ներկայացվել է՝ 06. 04. 2026 թ., գրախոսվել է՝ 04.05. 2026 թ.:

**LINGUOCULTURAL AND SEMANTIC FEATURES OF THE
SOMATISMS
“HEAD” AND “HEART” IN ARMENIAN AND ARABIC**

SONA MIKAYEL YAN

Institute of Language after H. Acharyan

Researcher, PhD., Associate Professor

sonmiq20@gmail.com

Abstract

The article is devoted to a comparative linguocultural analysis of phraseological units formed with the help of the somatic words “head” and “heart” in Armenian and Arabic. The aim of the study is to identify the semantic groups of the mentioned somatic words, their metaphorical extensions, as well as their universal and national-cultural features.

The analysis shows that the somatic word “head” in both languages is associated with ideas of thinking, leadership, authority, and responsibility. However, in Armenian, meanings related to intellectual abilities and practical skills are more prominent, whereas in Arabic, meanings of social status and relations of power are emphasized. The somatic word “heart” in both languages symbolizes the center of the emotional and moral world, expressing love, compassion, courage, fear, and inner emotional experiences. In Arabic, it also has broader semantic layers, including spiritual and cognitive aspects.

The results indicate that somatic phraseological units in both languages are formed based on universal cognitive approaches, while simultaneously reflecting the cultural and linguistic-cognitive characteristics of the respective peoples.

Keywords: phraseology; somatic phraseological units; linguoculturology; cognitive linguistics; Armenian; Arabic.

**ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
СОМАТИЗМОВ
„ГОЛОВА“ И „СЕРДЦЕ“ В АРМЯНСКОМ И АРАБСКОМ ЯЗЫКАХ
СОНА МИКАЕЛЯН**

Институт языка им. Р. Ачаряна

Государственный университет им. В. Брюсова

Научный сотрудник, к.ф.н., доцент

Аннотация

Статья посвящена сопоставительному лингвокультурологическому анализу фразеологических единиц, образованных с использованием соматических слов «голова» и «сердце» в армянском и арабском языках. Цель исследования заключается в выявлении семантических групп указанных соматических слов, их метафорических расширений, а также их универсальных и национально-культурных особенностей.

Анализ показывает, что соматическое слово «голова» в обоих языках связано с идеями мышления, лидерства, власти и ответственности. Однако в армянском языке более выражены значения, связанные с умственными способностями и практическими

навыками, тогда как в арабском языке - значения общественного статуса и властных отношений. Соматическое слово «сердце» в обоих языках символизирует центр эмоционального и нравственного мира, выражая любовь, сострадание, мужество, страх и душевные переживания. В арабском языке оно также имеет более широкие семантические слои — духовные и когнитивные.

Результаты исследования показывают, что соматические фразеологизмы в обоих языках формируются на основе универсальных когнитивных подходов, но одновременно отражают культурные и языково-мыслительные особенности соответствующих народов.

Ключевые слова: фразеология, соматические фразеологизмы, лингвокультурология, когнитивная лингвистика, армянский язык, арабский язык.

Ներածություն

Լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև ժողովրդի պատմական հիշողության, ազգային մտածողության և մշակութային փորձի արտահայտման կարևորագույն համակարգ: Լեզվական համակարգի այն շերտերից մեկը, որտեղ առավել ամբողջական կերպով արտացոլվում են տվյալ լեզվակիր հանրության աշխարհընկալման առանձնահատկությունները, դարձվածաբանությունն է: Դարձվածային միավորները լեզվի առավել պատկերավոր և մշակութային տեղեկատվությամբ հագեցած միավորներից են, քանի որ դրանցում արտացոլվում են ժողովրդի ավանդույթները, արժեքային համակարգը, հավատալիքները և կենցաղը [Teliya 1996: 215]:

Դարձվածաբանական համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում սոմատիկ բաղադրիչներով կազմված դարձվածքները, որոնց կազմության մեջ ընդգրկված են մարդու մարմնի մասերը անվանող բառեր: Լեզվաբանության մեջ նման բառերն անվանվում են «սոմատիզմներ» (հունարեն σῶμα «մարմին»): Դրանք համարվում են լեզվի ամենահին բառաշերտերից մեկը, քանի որ մարդու մարմինը եղել է շրջակա աշխարհի ճանաչման և իմաստավորման առաջնային միջոցը: Դրանից ելնելով՝ մարմնի մասեր նշանակող բառերը տարբեր լեզուներում առանձնանում են բարձր հաճախականությամբ և փոխաբերական լայն կիրառությամբ:

Սոմատիկ բառերի ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից լեզվաբանական հետազոտություններում: Դրանց նկատ-

մամբ հետաքրքրությունը մեծացել է հատկապես XX դարի երկրորդ կեսից՝ դարձվածաբանության, ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության զարգացմանը զուգընթաց:

Հայերենը և արաբերենը պատկանում են տարբեր լեզվաընտանիքների՝ համապատասխանաբար հնդեվրոպական և սեմական, սակայն երկու լեզուներում էլ սոմատիկ դարձվածքները դարձվածաբանական համակարգի կարևոր մաս են: Առհասարակ, լեզուներում լայնորեն կիրառվում են «սիրտ», «գլուխ», «աչք», «ձեռք», «լեզու», «ոտք» և այլ սոմատիկ բառեր պարունակող դարձվածքները: Միևնույն ժամանակ, դրանց պատկերավոր հիմքը, իմաստային զարգացումը և մշակութային բովանդակությունը հաճախ պայմանավորված են տվյալ ժողովրդի պատմամշակութային փորձով և աշխարհընկալման առանձնահատկություններով:

Չնայած սոմատիկ դարձվածքների վերաբերյալ տարբեր ուսումնասիրություններին՝ հայերենի և արաբերենի նյութի զուգադրական քննությունը դեռևս բավարար չափով չի կատարվել, որով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը և տեսական նշանակությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել հայերենում և արաբերենում սոմատիկ դարձվածքների իմաստաբանական և լեզվամշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև պարզել դրանցում արտացոլված համընդհանուր և ազգային յուրահատկությունները՝ հիմք ընդունելով «գլուխ» և «սիրտ» սոմատիկ բառերը, որոնք երկու լեզուներում էլ դարձվածաբանական առավել կենսունակ բաղադրիչներից են:

Տեսամեթոդական հիմքեր

Ուսումնասիրությունը հիմնված է դարձվածաբանության, ճանաչողական լեզվաբանության, լեզվամշակութաբանության և զուգադրական լեզվաբանության տեսական դրույթների վրա: Սոմատիկ դարձվածքների ուսումնասիրությունը միջգիտակարգային բնույթ ունի, քանի որ միավորում է լեզվաբանական, ճանաչողական և մշակութաբանական մոտեցումները: Դրանից ելնելով՝ հետազոտության տեսական հենքը ձևավորվել է վերոնշյալ գիտական ուղղությունների համադրմամբ:

Սոմատիկ բառերի լեզվաբանական հայեցակարգի համաձայն՝ դրանք համարվում են լեզվի առավել հնագույն բառաշերտերից մեկը: Սոմատիկ բառերը մտնում են լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ,

համեմատաբար քիչ են կախված տվյալ ժողովրդի մշակույթի, քաղաքակրթության, քաղաքական կյանքի փոփոխություններից [Haneyan 1979: 127]: Մարդու մարմնի մասերի անվանումները վաղուց դուրս են եկել իրենց բառացի նշանակության սահմաններից և դարձել վերացական հասկացությունների արտահայտման միջոցներ: Օրինակ՝ «գլուխը» սովորաբար կապվում է բանականության, իշխանության և վերահսկողության, «սիրտը»՝ հուզական աշխարհի և բարոյական հատկանիշների, «աչքը»՝ գիտելիքի, դիտարկման և գնահատման, «ձեռքը»՝ գործունեության և ազդեցության հետ և այլն:

Ըստ Վ. Վինոգրադովի՝ դարձվածքները լեզվական այն միավորներն են, որոնցում առավել հստակ կերպով արտացոլվում են ժողովրդի ազգային մտածողությունն ու մշակութային առանձնահատկությունները [Vinogradov 2026: 127]: Այդ առումով սոմատիկ բառերով ձևավորված դարձվածքները կարևոր նյութ են տարբեր լեզուների զուգադրական ուսումնասիրության համար, քանի որ մարմնի մասեր նշանակող բառերը գրեթե բոլոր լեզուներում հանդես են գալիս որպես փոխաբերությունների և դարձվածաբանական իմաստների ձևավորման հիմք:

Ժամանակակից լեզվաբանության մեջ սոմատիկ բառերի ուսումնասիրությունը սերտորեն կապված է նաև ճանաչողական լեզվաբանության դրույթների հետ: Ճանաչողական լեզվաբանությունը սոմատիկ բառերը դիտարկում է որպես մարդու մարմնական փորձառության լեզվական արտահայտություններ: Այս տեսության համաձայն՝ քանի որ լեզուն արտացոլում է մարդու ճանաչողական գործունեությունը և աշխարհի մասին նրա պատկերացումները, իսկ մարդկային մտածողությունը հիմնված է հայեցակարգային փոխաբերությունների վրա, որոնց զգալի մասը ձևավորվում է մարմնական փորձառության միջոցով, լեզվական փոխաբերությունների զգալի մասը կառուցվում է հենց մարմնի կառուցվածքի և գործառույթների հիման վրա [Lakoff, Johnson 1980: 29]: Առաջարկվում է «մարմնավորված ճանաչողության» (embodied cognition) հայեցակարգը, ըստ որի՝ մարդու մարմինը ոչ միայն ֆիզիկական օբյեկտ է, այլև ճանաչողական համակարգի հիմք:

Սոմատիկ դարձվածքները լեզվամշակութաբանական տեսանկյունից ևս կարևոր հետազոտական նյութ են: Վ. Տելիան նշում է, որ դարձվածքները մշակութային հիշողության յուրահատուկ կրողներ և ազգային մշակույթի խորհրդանշական համակարգի բաղադրիչներ են [Teliya 1996:

220]: Սոմատիկ դարձվածքների միջոցով լեզվում արտացոլվում են մարդու մասին ձևավորված պատկերացումները, հասարակական վարքագծի նորմերը և տվյալ մշակույթին բնորոշ արժեքային կողմնորոշումները: Սոմատիկ բառերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու լեզվի և մշակույթի փոխազդեցության առանձնահատկությունները: Այս առումով հատկանշական է, որ նույն սոմատիկ բառը տարբեր լեզուներում կարող է ձևավորել ինչպես համընդհանուր, այնպես էլ ազգային-մշակութային առանձնահատկություններով պայմանավորված իմաստային խմբեր:

Ուսումնասիրության փաստական նյութի համար հիմք են հանդիսացել հայերենի և արաբերենի դարձվածային միավորներ ընդգրկող մի շարք բառարաններ (Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ը [Bediryan 2011], Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ը [Suk'iasyan, Galstyan 19754], المعاني (Al-Ma'ānī) արաբերեն առցանց բառարանը [12], “Арабско-русский словарь идиоматических выражений” բառարանը [Abi Dzhaber Dzsh, Kapshuk, 2018]) և այլ աղբյուրներ, որոնցից առանձնացվել են «գլուխ» և «սիրտ» սոմատիկ բառերով կազմված առավել կենսունակ իմաստային համարժեք հայերեն և արաբերեն դարձվածային միավորներ:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության ընթացքում կիրառվել են փոխլրացնող մեթոդներ: Նկարագրական մեթոդը կիրառվել է սոմատիկ դարձվածքների լեզվական բնութագրման, իմաստային առանձնահատկությունների ներկայացման համար: Համեմատական-զուգահեռական մեթոդը հնարավորություն է տվել բացահայտելու հայերեն և արաբերեն սոմատիկ դարձվածքների ընդհանրություններն ու տարբերությունները: Լեզվամշակութաբանական վերլուծությունը կիրառվել է դարձվածքներում արտացոլված ազգային-մշակութային պատկերացումների և արժեքների բացահայտման համար:

Արդյունքներ

1.1. «Գլուխ» սոմատիկ բառի իմաստաբանական խմբերը և դարձվածային միավորների վերլուծությունը

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, «գլուխ» սոմատիկ բառը և՛ հայերենի, և՛ արաբերենի դարձվածաբանության մեջ առավել կեն-

սունակ և բազմիմաստ սոմատիկ միավորներից է: Լեզվամշակութաբանական տեսանկյունից այն ներկայացնում է մարդու մասին ձևավորված ազգային պատկերացումների կարևոր խորհրդանիշ, քանի որ մարմնի վերին և կենսաբանական առումով կարևորագույն մասը տարբեր մշակույթներում ավանդաբար նույնացվում է գիտակցության, բանականության, իշխանության և ինքնության հետ [Teliya 1996: 71]: Սոմատիկական կողմի շրջանակում «գլուխ» սոմատիկ բառը դիտարկվում է որպես մարդու ֆիզիկական և հոգևոր ամբողջականության կենտրոն, որի հետևանքով դրա հիման վրա ձևավորվել են բազմաթիվ դարձվածքներ և փոխաբերական արտահայտություններ:

«Գլուխ» սոմատիկ բառը հայերենում նախևառաջ կապված է մարդու մտավոր կարողությունների հետ: Այս իմաստային խմբին են պատկանում «գլուխ հանել» կամ «գլուխ բերել» («հասկանալ, հաջողեցնել»), «խելքը գլխին» («հասկացող»), «գլուխ ունենալ» («խելացի լինել»), «գլուխը բան դուրս չգալ» («չհասկանալ»), «գլուխը կորցնել» («շփոթության մատնվել») և այլ դարձվածքներ: Դրանցում գլուխը հանդես է գալիս որպես գիտելիքի, դատողականության և տրամաբանական մտածողության կենտրոն: Օրինակ, «գլուխ հանել» դարձվածքը ոչ միայն «հասկանալ» իմաստն ունի, այլև ենթադրում է բարդ իրավիճակի վերլուծություն և լուծում գտնելու կարողություն: «Գլուխը կորցնել» դարձվածքում, ընդհակառակը, գլուխը խորհրդանշում է ինքնատիրապետումն ու բանականությունը, որոնց ժամանակավոր կորուստը հանգեցնում է անկազմակերպ վարքի:

Նման պատկերացում է առկա նաև արաբերենում, որտեղ رأس (ra's) «գլուխ» բառով կազմված բազմաթիվ դարձվածքներ բնութագրում են մարդու մտավոր ներուժը: Այս շարքին են պատկանում يفكر برأسه (yufakkiru bi-ra'sihi, բոց.՝ «մտածում է իր գլխով»), له رأس جيد (lahu ra'sun jayyidun, բոց.՝ «լավ գլուխ ունի»), رأسه مليء بالأفكار (ra'suhu malī'un bi-l-afkār, բոց.՝ «գլուխը լի է գաղափարներով»), أعمل رأسه ('a'mala ra'sahu, բոց.՝ «գլուխը աշխատեցրեց») դարձվածային միավորները, որոնցում ևս գլուխը մտավոր գործունեության խորհրդանիշ է: Սա վկայում է, որ երկու լեզուներում գործում է ընդհանուր ճանաչողական մոդելը, համաձայն որի գլուխը մտածողության կենտրոն է:

«Գլուխ» սոմատիկ բառի իմաստային դաշտը, սակայն, չի սահմանափակվում միայն մտավոր գործունեությամբ: Երկու լեզուներում էլ այն

խորհրդանշում է *իշխանություն, ղեկավարություն և հասարակական գերակայություն*: Գլուխը մարմնի այն մասն է, որը ղեկավարում է ամբողջ օրգանիզմը, և այդ կենսաբանական գործառույթը փոխադրվում է հասարակական հարաբերությունների ոլորտ, որն իր լեզվական արտահայտությունն է ստանում սոմատիկ դարձվածային միավորներում: Հայերենում այդ իմաստն արտահայտվում է «ընտանիքի գլուխ» («տան տղամարդը, մեծը, կերակրողը»), «գլուխ կանգնել» կամ «գործի գլուխ անցնել» («որևէ բան ղեկավարել») և այլ դարձվածային միավորներով: Արաբերենում «գլուխ» և «իշխանություն» հասկացությունների կապն ավելի ընդգծված է: *رأس الدولة* (ra's ad-dawla՝ «պետության ղեկավար»), *رأس القوم* (ra's al-qawm՝ «Ժողովրդի առաջնորդ»), *رأس السلطة* (ra's as-sulṭa՝ «իշխանության գլուխ») դարձվածային միավորները, նույն բառարմատից կազմված *رئيس* (ra'īs՝ «նախագահ», «ղեկավար») բառը ցույց են տալիս, որ *رأس* (ra'asa՝ «գլխավորել, ղեկավարել») արմատը լայնորեն կիրառվում է քաղաքական և վարչական տերմինաբանության մեջ: Սա պայմանավորված է արաբական հասարակությունների պատմական կառուցվածքով, որտեղ հասարակության կազմավորման գործընթացում ցեղային և վարչական աստիճանակարգությունները կարևոր դեր են ունեցել:

Գլուխը երկու լեզուներում էլ սերտորեն կապված է նաև *պարվի, արժանապարվության և հասարակական հեղինակության* գաղափարների հետ: Հայերենում կիրառվում են «գլուխը բարձր բռնել (պահել)» («հպարտ, արժանապատիվ կեցվածք որդեգրել»), «գլուխը բարձր» («արժանապատիվ, հպարտ»), «գլուխը խոնարհեցնել» («ծնկի գալ, ընկճվել»), «գլուխը կախ» («խոնարհ») դարձվածքները: Արաբերենում նույն իմաստային խմբին են պատկանում *رفع رأسه* (rafa'a ra'sahu, բոց.՝ «գլուխը բարձրացնել»), *مرفوع الرأس* (marfū' ar-ra's, բոց.՝ «բարձր գլխով»), *لا يطأئ رأسه* (lā yuṭā'i ra'sahu, բոց.՝ «գլուխը չի խոնարհում»), *أطرق رأس* (aṭraqa ra'sahu, բոց.՝ «գլուխը խոնարհել, ենթարկվել») և այլ դարձվածքներ: Երկու լեզուներում էլ գործում է տարածական փոխաբերության սկզբունքը, ըստ որի ուղղաձիգ դիրքը խորհրդանշում է արժանապատվություն և ինքնահարգանք, իսկ խոնարհված դիրքը՝ ամոթ, նվաստացում կամ պարտություն [Pietrăreanu 2015: 288]:

Հայերենում «գլուխ» սոմատիկ բառը ունի նաև *հոգսեր, դժվարություններ և պարասխանապրվության կրող* իմաստներ: «Գլխացավանք

պատճառել» («(ավելորդ) անհանգստություն ստեղծել»), «գլուխը ցավեց-նել» («անհանգստություն պատճառել»), «գլխին փորձանք բերել» («անախորժության, դժբախտության մեջ գցել») դարձվածքները վկայում են, որ հոգեբանական կամ հասարակական ծանրաբեռնվածությունը պատկերավորվում է որպես գլխի վրա դրված բեռ: Արաբերենում կիրառվում են իմաստային համարժեք شغل رأسه (shaghala ra'sahu, բոց.՝ «գլուխը զբաղեցնել») حمل على رأسه همًا (hamala 'alā ra'sihi hammān, բոց.՝ «իր գլխի վրա հոգս վերցնել») արտահայտությունները: Այստեղ գործում է «գլուխ՝ պատասխանատվության կենտրոն» ճանաչողական սկզբունքը:

Չուգադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերենում և արաբերենում «գլուխ» սոմատիկ բառի հիմքում ընկած են առավել հաճախակի կիրառվող միևնույն համընդհանուր ճանաչողական մոդելները՝ «գլուխ՝ մտածողություն», «գլուխ՝ առաջնորդություն», «գլուխ՝ պատիվ, արժանապատվություն», «գլուխ՝ պատասխանատվություն»: Միաժամանակ, հայերենում առավել կենսունակ են անհատի խելքի, փորձառության և գործնական հմտությունների հետ կապված իմաստները, մինչդեռ արաբերենում ավելի արտահայտված են իշխանության, առաջնորդության և հասարակական աստիճանակարգության գաղափարները:

1.2. «Սիրտ» սոմատիկ բառի իմաստային խմբերը և դարձվածային միավորների վերլուծությունը

«Սիրտ»-ը առաջնային կամ ելակետային իմաստով մարդու կամ կենդանու կենսական օրգանն է, որն ապահովում է արյան շրջանառությունը: Այս իմաստը կազմում է բոլոր հետագա իմաստային ընդլայնումների հիմքը: Վախի, հուզմունքի և այլ զգացողությունների ժամանակ սրտի բաբախյունն արագանում է: Այդ պատճառով մարդիկ սրտի աշխատանքը պատմականորեն կապել են ներքին զգացողությունների հետ: Լեզվամշակութային զարգացման, ճանաչողական փորձի ընթացքում «սիրտ»-ը՝ որպես սոմատիկ բառ ձեռք է բերել փոխաբերական լայն կիրառություններ:

Հայերենում և արաբերենում «սիրտ» սոմատիկ բառն առաջին հերթին կապված է *սիրո և համակրանքի հետ*: Հայերենում լայնորեն կիրառվում են, օրինակ՝ *սրտին մոտ լինել* («մտերիմ, հարազատ լինել»), *սրտի մարդ* («սիրելի, հարազատ մարդ»), *սրտի ցանկություն* («անկեղծ, նվիրական ցանկություն, երազանք») դարձվածային միավորները: Դրանք արտահայտում են խոր հուզական կապվածություն, սիրո և վստահության

զգացում: Նմանատիպ իմաստներ են փոխանցում արաբերենի أعطى قلبه (a‘ṭā qalbahu, բռց.՝ «սիրտը տալ»), أحب من قلبه (ahabba min qalbihi, բռց.՝ «իր սրտով սիրել»), يحمل في قلبه (yahmiluhu fī qalbihi, բռց.՝ «նրան իր սրտում է պահում»), قريب إلى القلب (qarīb ilā al-qalb, բռց.՝ «սրտին մոտ»), رغبة القلب (raġbat al-qalb, բռց.՝ «սրտի ցանկություն») դարձվածային միավորները: Երկու լեզուներում էլ սիրտը խորհրդանշում է սիրո և հուզական աշխարհի կենտրոնը:

«Սիրտ» սոմատիկ բառը հաճախ ընկալվում է նաև որպես քաջության, կամքի ուժի և վճռականության խորհրդանիշ: Հայերենում այս իմաստն արտահայտվում է օրինակ՝ *սիրտ անել* («խիզախել»), *սիրտ տալ* («քաջալերել») դարձվածքների միջոցով: Դրանք ցույց են տալիս մարդու պատրաստակամությունը հաղթահարելու դժվարությունները և դիմակալելու վտանգներին: Արաբերենում նույն գաղափարը ներկայացվում է أقدم بقلبه (‘aqdama bi-qalbihi, բռց.՝ «սրտով առաջ գնալ»), لا يخاف (alban lā yakhāfu, բռց.՝ «սիրտ, որը չի վախենում»), قوي القلب (qawīyy al-qalb, բռց.՝ «ուժեղ սիրտ») արտահայտություններով: Այս խմբի դարձվածքները վկայում են, որ երկու մշակույթներում էլ սիրտը կապվում է ոչ միայն զգացմունքների, այլև անձի կամային հատկանիշների հետ:

Սիրտը մարդու հուզական արձագանքների ամենազգայուն խորհրդանիշներից մեկն է, ուստի վախն ու անհանգստությունը ևս հաճախ արտահայտվում են հենց սրտի միջոցով: Հայերենում գործածվում են *սիրտը թռչել* («ահով բռնվել»), *սիրտը դողալ* («սարսափել»), *սիրտը սեղմվել* («անհանգստանալ») դարձվածքները: Արաբերենում դրանց իմաստային համարժեքներ են طار قلبه (tāra qalbuhi, բռց.՝ «սիրտը թռավ»), وقع قلبه (waqa‘a qalbuhi, բռց.՝ «սիրտը ընկավ»), ارتجف قلبه (irtajāfa qalbuhi, բռց.՝ «սիրտը դողաց»), ضاق قلبه (dāqa qalbuhi, բռց.՝ «սիրտը նեղացավ, սեղմվեց») արտահայտությունները: Երկու լեզուներում էլ վախը նկարագրվում է սրտի շարժման, դողի կամ ֆիզիկական փոփոխության պատկերների միջոցով:

Սիրտը հաճախ հանդես է գալիս նաև որպես *հոգեկան տառապանքի և ցավի* կենտրոն: Հայերենում կիրառվում են այս իմաստային խումբն ընդգրկող՝ *սիրտը կոտրվել* («վշտանալ»), *սիրտը ցավել* («վշտահարվել»), *սիրտը մաշվել* («տվայտալ»), *սիրտը արյունով լցվել* («հոգեկան խոր ցավ զգալ») և այլ դարձվածքներ: Արաբերենում նույն իմաստն արտահայտվում է انكسر قلبه (inkasara qalbuhi, բռց.՝ «սիրտը կոտրվեց»), تألم قلبه (ta‘allama

qalbuḥu, բոց.՝ «սիրտը ցավեց»), احترق قلبه (iḥtaraq qalbuḥu, բոց.՝ «սիրտը այրվեց»), جرح القلب (jarḥ al-qalb, բոց.՝ «սրտի վերք») դարձվածքներով: Հատկանշական է, որ երկու լեզուներում էլ հոգեկան ցավը հիմնականում ներկայացվում է որպես ֆիզիկական վնասվածք, կոտրվածք կամ այրվածք:

Հայերենում սրտի միջոցով հաճախ բնութագրվում են նաև մարդու բարոյական և մարդասիրական հատկանիշները: Այս խմբին են պատկանում «բարի սիրտ ունենալ», «մեծ սիրտ ունենալ», «ոսկի սիրտ ունենալ», «մաքուր սիրտ ունենալ», «սրտաբաց լինել», «բաց սրտով ընդունել» դարձվածքները: Արաբերենում դրանց համապատասխանում են طيب القلب (tayyib al-qalb, բոց.՝ «բարի սիրտ ունեցող»), كبير القلب (kabīr al-qalb, բոց.՝ «մեծ սիրտ ունեցող»), نقي القلب (naqīyy al-qalb, բոց.՝ «մաքուր սիրտ ունեցող»), مفتوح القلب (maftūḥ al-qalb, բոց.՝ «բաց սիրտ ունեցող») արտահայտությունները: Երկու լեզուներում էլ բարությունը, առատաձեռնությունն ու մարդասիրությունը ներկայացվում են սրտի դրական հատկանիշների միջոցով:

Սրտի հետ կապված դարձվածքները կարող են արտահայտել նաև բացասական բարոյական գնահատականներ: Հայերենում այդպիսիք են «քար սիրտ ունենալ», «սիրտ չունենալ», «անսիրտ մարդ», «սիրտը կարծրանալ», «սիրտը փակ լինել» և այլ արտահայտություններ: Արաբերենում նույն իմաստն ունեն من حجر قلب (qalb min ḥajar, բոց.՝ «քարից սիրտ»), عديم القلب (‘adīm al-qalb, բոց.՝ «անսիրտ»), قسا قلبه (qasā qalbuḥu, բոց.՝ «սիրտը կարծրացավ»), بارد القلب (bārid al-qalb, բոց.՝ «սառը սիրտ ունեցող»), مغلق القلب (muḡhlaq al-qalb, բոց.՝ «փակ սիրտ ունեցող») դարձվածքները: Այս դեպքում սիրտը կորցնում է իր դրական խորհրդանշական արժեքը և դառնում է դաժանության, անտարբերության ու հոգևոր դատարկության ցուցիչ:

Սիրտը նաև ներքին խաղաղության և հոգեկան հավասարակշռության խորհրդանիշ է: Հայերենն ունի սիրտը տեղն ընկնել («հանդարտվել»), սրտից քար ընկնել («հոգսից ազատվել») դարձվածքները: Արաբերենում կիրառվում են اطمأن قلبه (iṭma’anna qalbuḥu, բոց.՝ «սիրտը հանգստացավ»), ارتاح قلبه (irtāḥa qalbuḥu, բոց.՝ «սիրտը թեթևացավ»), سكن قلبه (sakana qalbuḥu, բոց.՝ «սիրտը խաղաղվեց»), արտահայտությունները: Երկու լեզուներում էլ հոգեկան հանգստությունը ներկայացվում է որպես սրտի հավասարակշռված և ներդաշնակ վիճակ:

Հայերեն և արաբերեն դարձվածաբանական համակարգերում «սիրտ» սոմատիկ բառը բազմիմաստ խորհրդանիշ է, որն ընդգրկում է մարդու հուզական, բարոյական, հոգեբանական և անգամ հասարակական կյանքի տարբեր կողմերը: Տվյալ դարձվածքների զգալի մասը կառուցված է նույն կամ շատ մոտ փոխաբերական մոդելների վրա, ինչը վկայում է համընդհանուր ճանաչողական հիմքերի առկայության մասին: Միևնույն ժամանակ, եթե հայերենում «սիրտ» սոմատիկ բառը հիմնականում ունի հուզական և բարոյական բովանդակություն, ապա արաբական լեզվամշակութային ավանդույթում **قلب** (qalb «սիրտ») հասկացությունն ունի ավելի լայն իմաստային ընդգրկում և հաճախ կապված է ոչ միայն զգացմունքների, այլև իմացության, հավատի և հոգևոր գիտակցության հետ: Այս առումով հատկանշական է, որ **قلب** (qalb) բառի բառարանային երկրորդ իմաստն է՝ «միտք, ընկալում»: Ղուրանում և կրոնական տեքստերում սիրտը ներկայացվում է որպես մարդու հավատքի, իմաստության և ճշմարտության ընկալման կենտրոն. **...لهم قلوب لا يفقهون بها (...lahum qulūbun lā yafqahūna bihā)**՝ «...նրանք ունեն սրտեր, որոնցով չեն հասկանում» [11, . 174ص]: Այսինքն՝ արաբական մշակութային-կրոնական համակարգում սիրտը կապված է ոչ միայն հույզերի, այլև գիտակցության և բարոյական կողմնորոշման հետ: Այս առանձնահատկությունները պայմանավորված են ժողովուրդների մշակութային և կրոնափիլիսոփայական ավանդույթների տարբերություններով:

Եզրակացություն

Հայերենի և արաբերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «գլուխ» և «սիրտ» սոմատիկ բառերը երկու լեզուներում էլ առանձնանում են բարձր դարձվածաբանական կենսունակությամբ և կարևոր լեզվամշակութային խորհրդանիշներ են: Երկու լեզուներում էլ «գլուխ» սոմատիկ բառի հիմքում ընկած են համընդհանուր ճանաչողական մոդելներ, որոնց համաձայն գլուխը նույնացվում է մտածողության, առաջնորդության, հեղինակության և պատասխանատվության հետ: Միաժամանակ նկատելի են լեզվամշակութային որոշ տարբերություններ. հայերենում առավել հաճախադեպ են խելքի, փորձառության և գործնական կարողությունների հետ կապված իմաստները, մինչդեռ արաբերենում ավելի ընդգծված են իշխանության,

առաջնորդության և հասարակական աստիճանակարգության գաղափարները: «Սիրտ» սոմատիկ բառի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկու լեզուներում էլ մարդու հուզական և բարոյական աշխարհի կենտրոնն է: Հայերեն և արաբերեն դարձվածքներում սիրտը կապված է սիրո, բարության, կարեկցանքի, քաջության, նաև վախի և հոգեկան ապրումների հետ: Եթե հայերենում գերակշռում են հուզական և բարոյական նշանակությունները, ապա արաբերենում قلب (qalb «1.սիրտ, 2.միտք, ընկալում») հասկացությունը ներառում է նաև ճանաչողական, հոգևոր և կրոնական իմաստներ:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ հայերեն և արաբերեն սոմատիկ դարձվածքների համակարգերում միաժամանակ դրսևորվում են համընդհանուր ճանաչողական օրինաչափություններ և ազգային-մշակութային առանձնահատկություններ: Սոմատիկ բառերը ոչ միայն լեզվական, այլև մշակութային տեղեկատվության կրողներ են, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու լեզվի, մտածողության և մշակույթի փոխադարձ կապերը:

Գրականության ցանկ

- [1] Abi Dzhaber Dzh., Kapshuk A. V., *Arabsko-russkiy slovar' idiomaticheskikh vyrazheniy*, [Arabic–Russian Dictionary of Idiomatic Expressions], Moskva, Izdatel'skiy dom IASK, 2018.
- [2] Baranov Kh. K., *Arabsko-russkiy slovar' [Arabic-Russian Dictionary]*, Moskva, Russkiy yazik, 1985.
- [3] Bediryan P., *Hayeren dardzvatskneri yndardzak batsatrankan bararan* [Comprehensive Explanatory Dictionary of Armenian Idioms]. Yerevan, YPH hrat., 2011.
- [4] Haneyan M. , *Marmni maseri hndevropakan anvanumnneri taratskayin nkaragiry hayerenum. //Hayots lezvi hamematakan kerakanutyann hartser* [The Areal Distribution of Indo-European Names for Body Parts in Armenian.// Comparative Grammar of the Armenian Language], Yerevan, HSSH GA hrat., 1979.
- [5] Lakoff G., Johnson M., *Metaphors We Live By*. University of Chicago Press, 1980.
- [6] Maslova V. A., *Lingvokul'turologiya [Linguoculturology]*, Moskva, Izdatel'skiy tsentr «Akademiya», 2001.
- [7] Pietreanu, O., *Conceptual Orientational Metaphors of the "Head" in Literary Arabic. Romano-Arabica*, XV, Bucharest, Editura Universității din București, 2015, pp. 279–290.

[8] Suk'yasyan A., Galstyan S., Hayots lezvi dardzvatsabanakan bararan [Dictionary of Armenian Phraseology], Yerevan, YPH hrat., 1975.

[9] Teliya V. N., Russkaya frazeologiya. Semanticheskiy, pragmaticheskiy i lingvokul'turologicheskie aspekty, [Russian Phraseology: Semantic, Pragmatic and Linguoculturological Aspects], Moskva, Yazyki russkoy kul'tury, 1996.

[10] Vinogradov V. V., Osnovnye ponyatiya russkoy frazeologii kak lingvisticheskoy distsipliny [Basic Concepts of Russian Phraseology as a Linguistic Discipline], Moskva, Nauka, 1977.

[11] <https://quran.com/7/179> (accessed April 17, 2026)

[12] <https://www.almaany.com> (accessed April, 2026)

**ԼԱՏԻՆԱԿԱՆ GERUNDIUM-Ը ԵՎ SUPINUM-Ը ՀԱՅԵՐԵՆԻ
ԼԱՏԻՆԱՏԻՊ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ***

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

Ավագ գիտաշխատող, ք. գ. թ.

tigran.sirunian@gmail.com

ՌԱՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

Գիտաշխատող

raysargsyan@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-28

Համառոտագիր

Լատիներենի գոյականական դերբայներ *gerundium*-ը և *supinum*-ը թափանցել են հայերենի քերականություն ունիթոռական վարդապետ Հովհ. Քոնեցու քերականական երկի միջոցով (14-րդ դ.): Այնուհետև *gerundium*-ի (մասամբ նաև՝ *supinum*-ի) հայերեն զուգահեռ ձևերը նկարագրել են 17-րդ դարի լատին և լատինաբան քերականները՝ Ֆրանցիկոս Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի և Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի (Հոլով):

Հոդվածում քննության են առնվում *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը հայերենի լատինատիպ քերականություններում, պարզաբանվում են դրանց ըմբռնումը և կազմության սկզբունքները: Անդրադարձ է արվում նաև *ջերունդիական* և *սուսիինական* եզրույթների լատինական աղբյուրների հարցին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *gerundium*-ը ընկալվել է որպես հայերենին բնականորեն հատուկ կարգ և կայուն կերպով արտացոլվել է բայական համակարգում: Մինչդեռ *supinum*-ը չի կայունացել լատինատիպ քերականության մեջ. այն դրվագային, մեկուսացած միավոր է, որ մնացել է մեկ աշխատության սահմաններում, իսկ հետագայում, ճանաչվելով խորթ ձև, անտեսվել է: Ուսումնասիրության տվյալների համադրմամբ պարզվում է, որ հայերենին վերագրված *gerundium*-ը ունի լիարժեք հարացույց, արտահայտվել է բոլոր թեք իղովներով և դրանց նախդրիվ ձևերով: Այն նաև լատինաբան հայերենին հատուկ իրողություն է, ենթարկվել է արհեստական կանոնավորումների, հատկապես կրավորական ձևերի հարացույցում:

* Ներկայացվել է՝ 11. 03.2026 թ., գրախոսվել է՝ 03. 06. 2026 թ.:

Հոդվածում նաև ցույց է տրվում, որ *ջերունդական* և *սուպինական* եզրույթները ուշ շրջանի կազմություններ չեն (13-րդ դ.), ինչպես ներկայացվել է նախկինում, ուստի և հավաստի չէ այդ հիմքով արված պնդումը, թե դրանք չէին կարող փոխառվել Պրիսցիանոսի աշխատությունից (6-րդ դ.):

Բանալի բառեր և բառակապակցություններ. լատինատիպ քերականություն, դերբայ, գերունդիում, սուպինում, Հովհաննես Քոնեցի, Ֆրանցիկոս Ռիվոլա, Կոնստանտինոս, Ոսկան Երևանցի, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի, Պրիսցիանոս:

**THE LATIN GERUNDIUM AND SUPINUM IN THE LATINIZING
GRAMMARS OF ARMENIAN
TIGRAN SIRUNYAN**

Institute of Language after H. Acharyan,
Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Senior researcher, PhD
tigran.sirunian@gmail.com

RAYA SARGSYAN
Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Researcher
raysargsyan@gmail.com

Abstract

The Latin forms *gerundium* and *supinum* entered Armenian grammar through the grammatical work of the Unitorian scholar Yovhannēs Kʻrnetsʻi (14th c.). Later, the Armenian equivalents of the *gerundium* and, in part, those of the *supinum* were described by the Latin and Latinizing grammarians of the 17th century: Franciscus Rivola, Clemens Galanus, Oskan Erevantsʻi, and Yovhannēs Holov Kostandnupolsetsʻi.

The article examines the categories of the *gerundium* and the *supinum* in the Latinizing grammars of Armenian and clarifies their interpretation and principles of formation. It also discusses the issue of the Latin sources of the terms *ջերունդական* and *սուպինական* (*gerundial* and *supinal*).

The study shows that the *gerundium* was regarded as a category naturally inherent to Armenian and was consistently reflected in the verbal system. By contrast, the *supinum* did not become established in the Latinizing grammar. It remained an episodic and isolated category, confined to a single work and having been regarded as an alien form, did not become the subject of further study.

A comparison of the data obtained in this study shows that the *gerundium* ascribed to Armenian has a complete paradigm, including all oblique cases and their prepositional forms. It is also a phenomenon specific to Latinizing Armenian, having undergone artificial regularization, particularly in the paradigm of passive forms.

The article further shows that the terms *ջերունդական* and *սուպինական* are not late formations (13th c.), as previously thought. Consequently, the claim made on this basis, that these terms could not have been borrowed from the work of Priscian (6th c.), cannot be regarded as valid.

Keywords and phrases: Latinizing grammar, participle, gerundium, supinum, Yovhannēs K'īnets'i, Franciscus Rivola, Clemens Galanus, Oskan Erevants'i, Yovhannēs Holov Kostandnupolsets'i, Priscian.

ЛАТИНСКИЕ GERUNDIUM И SUPINUM В ЛАТИНИЗИРУЮЩИХ ГРАММАТИКАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА ТИГРАН СИРУНЯН

Институт языка им. Р. Ачаряна
Матенадаран имени М. Маштоца
Старший научный сотрудник, к.ф.н.
tigran.sirunian@gmail.com

РАЯ САРГСЯН
Матенадаран имени М. Маштоца
Научный сотрудник
raysargsyan@gmail.com

Аннотация

Латинские отглагольные именные формы *gerundium* и *supinum* проникли в армянскую грамматику через грамматический труд униторского вардапета Иоанна Крнеци (XIV в.). В дальнейшем армянские соответствия *gerundium* (а отчасти и *supinum*) были описаны латинскими и латинизирующими грамматистами XVII века: Франциском Риволой, Клеменсом Галаносом, Осканом Ереванци и Ованнесом Акопом Оловом Константинопольским.

В статье рассматриваются категории *gerundium* и *supinum* в латинизирующих грамматиках армянского языка, уточняются их понимание и принципы образования. Также затрагивается вопрос о латинских источниках терминов *ջերունդական* и *սուպինական* («герундиальный» и «супинальный»).

Исследование показывает, что *gerundium* воспринималось как категория, естественно присущая армянскому языку, и устойчиво отражалось в глагольной системе. Напротив, *supinum* не закрепилось в латинотипной грамматической традиции. Оно осталось эпизодическим и изолированным явлением, ограниченным рамками одного сочинения, а впоследствии, будучи признанным чуждым образованием, не стало предметом дальнейшего изучения.

Сопоставление данных исследования показывает, что приписываемое армянскому языку *gerundium* обладало полной парадигмой, включавшей все косвенные падежи и их предложные формы. Оно также представляет собой явление, характерное именно для латинизирующего армянского языка, поскольку подверглось искусственной регуляризации, особенно в парадигме страдательных форм.

В статье также показано, что термины *քերունդական* и *սուպինական* не являются поздними образованиями (XIII в.), как это представлялось ранее. Следовательно, неубедительным представляется и основанное на этом утверждение о том, что эти термины не могли быть заимствованы из труда Присциана (VI в.).

Ключевые слова и словосочетания: латинотипная грамматика, причастие, *gerundium*, *supinum*, Ованес Крнеци, Франческо Ривола, Клемент Галан, Оскан Ереванци, Ованес Олов Константинопольский, Присциан.

Ներածություն

Լատիներենի քերականական կաղապարների ներթափանցումը գրաբարի քերականություն սկսվել է 14-րդ դարից, երբ բուն Հայաստանում հիմնվեցին ունիթոռական¹ կենտրոններ (Ծործոր, Քոնս) և լատինական (կաթոլիկ) միջավայրում ստեղծված գիտելիքը (աստվածաբանական, տրամաբանական, քերականական և այլն) յուրացնելու ուղղությամբ թարգմանական, մեկնողական վիթխարի աշխատանք կատարվեց²:

Լատիներեն բայի անդեմ *gerundium* և *supinum* կոչվող ձևերը թափանցել են հայերենի քերականություն ունիթոռական վարդապետ Հովի. Քոնեցու քերականական երկի միջոցով (14-րդ դ.), որով, ինչպես հայտնի է, սկզբնավորվում է լատինատիպ քերականությունների շրջանը³, և որը հանդիսանում է լատինաբան հայերենի վաղ իրողությունների կարևորագույն աղբյուրներից մեկը [Hambardzumyan 2010: 109-110]:

Այս դերբայական ձևերը արտացոլվել և կայունացել են հետագա լատինատիպ քերականություններում (17-րդ դ.), երբ գրաբարի լատինացված նկարագրությունը դարձյալ կաթոլիկ քերականների ջանքերով դարձավ համակարգված ուղղություն: *Gerundium*-ի (մասամբ նաև *supinum*-ի) հայերեն զուգահեռ ձևերը նկարագրել են 17-րդ դարի լատին և լատինաբան քերականները՝ Ֆրանցիկոս Ռիվոլա, Կոնստանտին Գալանոս, Ոսկան Երևանցի և Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի (Հովով):

Հայերենի քերականագիտության մեջ *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը քննության են առնվել հիմնականում երկու հայեցակետից՝ որևէ

¹Unitores. միաբանողներ կամ միաբարներ՝ բուն Հայաստանում և Կիլիկիայում կաթոլիկություն քարոզած լատին միսիոներների և նրանց հայ գործակիցների անվանումը:

² Հայալեզու ունիթոռական գրականության մասին տե՛ս Oudenrijn 1960: 73-243:

³ Հովի. Քոնեցու քերականության լատինական աղբյուրների մասին տե՛ս Avagyan 1977: 53, 69 և այլն, Sirunyan 2017: 122-140, Muradyan 2025: 214-246, Cowe 2020: 91-121:

առանձին քերականության ուսումնասիրության սահմաններում (Գ. Զահուկյան, Լ. Խաչիկյան, Ս. Ավագյան), լատինաբան հայերենի տեսության մեջ՝ որպես նրա ձևաբանական համակարգի տարբերակիչ հատկանիշներ (Վ. Համբարձումյան⁴):

Մեր խնդիրն է համապարփակ կերպով նկարագրել *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը հայերենի լատինատիպ քերականություններում, լատինական ավանդույթի հիմքով պարզաբանել դրանց ըմբռնումը, իմաստային առանձնահատկությունները և կազմության սկզբունքները. դերբայական այդ կարգերի ձևակերպումն ու կայացումը ամփոփել մեկ ամբողջական պատկերի մեջ: Կարևոր ենք համարում նաև քննել *ջերունդական* և *սուփինական* եզրույթների լատինական աղբյուրների հարցը, որի վերաբերյալ նախկինում արված մեկնաբանության փաստարկները արժանահավատ չեն:

Ուսումնասիրության մեթոդներ

Այս ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք նկարագրական-վերլուծական և համեմատության մեթոդները:

Աղբյուրներ

Անորոշ դերբայի հոլովված և նախդրավոր ձևերը ունիթոռական վարդապետ Հովհաննես Քոնեցին (14-րդ դ.) զետեղել է բայի աներևույթ եղանակի («կերպ») ներքո՝ պահպանելով դրանց լատինական անվանումները՝ *ջերունդական* և *սուփինական* [K'ēnets'i 1977: 178; նաև՝ Avagyan 1977: 83, 84]:

Ջերունդականը, ինչպես լատինական *gerundium*-ը, գոյականական դերբայ է, արտահայտվում է անորոշ դերբայի թեքական ձևերով: Քոնեցին առանձնացրել է սրա երեք ձև. *սիրելո* = gen. *amandi*, dat. *amando*, *սիրելով* = abl. *amando*, առ ի *սիրել* = acc. (ad)*amandum* [K'ēnets'i 1977: 178]:

Ինչպես նկատելի է. հարացույցից դուրս է թողնված բացառականը՝ *ի սիրելոյ* (լատինական *gerundium*-ի *ablativus*-ը՝ որպես ինքնուրույն հոլոված (առանց նախդրի), չունի բացառականի իմաստ (*amando* = abl. inst.

⁴ Այս դերբայական ձևերից համապատասխանաբար երկու ձևաբանական հատկանիշ է դուրս բերվել՝ անորոշ դերբայի հոլովված, նախդրիվ ձևերի հատկացում *gerundium*-ին և ապա՝ *supinum*-ին [Hamardzumyan 2010: 158]: Մինչ այս ուսումնասիրությունը գերունդական և սուփինական ձևերը քերականական լատինաբանությունների տեսության մեջ՝ իբրև առանձին դրսևորումներ, նկատի չեն առնվել, տե՛ս, օրինակ, Zarphanalean 1878: 32, 33, Acharyan 1951: 317:

/ modi), և գուցե Քոնեցին նկատի չի առել բուն հարացույցից դուրս՝ նախդիրվ ձևերը):

Գոյականական մյուս դերբայը՝ *սուփիննական*-ը, լատինական *supinum*-ի հետևողությամբ, տրված է երկու բայաձևով (հմմտ.՝ *supinum I*, *supinum II*, որոնք ներկայացնում են այս դերբայի երկու հոլովաձևերը՝ accusativus և ablativus, տե՛ս ստորև). *ի սիրել* = *supinum I*, acc. *amatum*, *ի սիրելո* = *supinum II*, abl. *amatu* [K'ēnets'i 1977: 178]:

Ընդ որում, քանի որ լատիներենում *gerundium*-ի acc.-ն և *supinum I*-ը (կրկին՝ acc.) իմաստային առնչություն ունեն, սովորաբար արտահայտում են գործողության նպատակ, Քոնեցին, ըստ երևույթին, ձևային համընկնումից խուսափելու համար սրանք տարբերակել է նախդիրների միջոցով (*առ ի սիրել* / *ի սիրել*):

Սուփիննական-ի երկրորդ ձևը՝ *ի սիրելո*, կազմված է լատինական կաղապարով՝ *ablativus*-ի նմանությամբ, սակայն ճշգրիտ չի արտահայտում սրա իմաստը (ածականից կախյալ, կրավորական (պասիվ) նշանակությամբ դերբայական ձև). *supinum II*-ին համարժեք կարող է լինել նախդիրվ հայցականը՝ *զուարճալի ինչ ի լսել* (= *res jucunda aditu*), *դժուարին ի գործել* (= *difficile factu*) [Hiwrmiwzean 1839: 99]:

Լ. Խաչիկյանը, մեկնաբանելով *ջերունդիական* և *սուփիննական* եզրույթների ծագումը, գրում է, թե սրանց լատինական ձևերը՝ *gerundium* և *supinum*, սկսել են շրջանառվել 13-րդ դարում՝ լատին քերական Պրիսցիանուսի (6-րդ դ.) մեկնիչ Պետրոս Հելիուսի կողմից, և Քոնեցին թերևս ձեռքի տակ ունեցել է նաև այդ քերականի մեկնությունը⁵: Սակայն այս տեղեկությունը հավաստի չէ. Պրիսցիանուսը ոչ միայն բազմիցս հիշատակել է *gerundium* և *supinum* եզրույթները [Prisc. 1855: 173, 409-412, 452, 450...], այլև տվել է դրանց սահմանումները. «Gerundia quoque vel participialia, cum participiorum vel nominum videantur habere casus obliquos nec tempora significant, quod alienum est a verbo» («Գերունդիումները ևս կամ դերբայական ձևերը, քանի որ, ըստ երևույթին, ունեն դերբայների կամ անունների թեք հոլովներ և ցույց չեն տալիս ժամանակներ, ինչը

⁵ Տե՛ս Khachikyan 1977: 47-48, նույն կարծիքն է հայտնել նաև Ս. Ավագյանը [Avagyan 1977: 83]: Լ. Խաչիկյանը այս վերլուծությունը կատարելիս հենվել է Ա. Չուդինովայի հաղորդած տվյալների վրա. «Названія gerundia, gerundiva, а также supina вводятся лишь со времени Петра Гелія и становятся общеупотребительными въ XIII веке...» [Чудинова 1871: 47]:

խորթ է բային») [Prisc. 1855: 409], «Supina vel participialia cum nec personas discernant et temporibus careant, quibus sine verbum esse non potest, et casus assumant et praepositionibus separatis adiungantur, sine dubio mihi nomina videntur esse, quae tamen loco infinitorum ponuntur tam activorum quam passivorum» («Սուպինները կամ դերբայական ձևերը, քանի որ չեն տարբերակում դեմքեր և զուրկ են ժամանակներից, առանց որոնց բայը չի կարող գոյություն ունենալ, և ընդունում են հոլովներ ու կապվում են առանձին նախդիրների հետ, անկասկած ինձ թվում են անուններ, որոնք, սակայն, գործածվում են անորոշների փոխարեն՝ թե՛ ներգործական և թե՛ կրավորական») [Prisc. 1855: 425]⁶:

Ուստի Քոնեցին *ջերունդիական* և *սուպինական* եզրույթները կարող էր փոխառած լինել անմիջապես Պրիսցիանուսից, հատկապես որ «Institutiones grammaticae»-ն («Հրահանգներ քերականության»)՝ լատին քերականի նշանավոր երկը, եղել է նրա գլխավոր աղբյուրներից⁷: Անշուշտ հավանական է նաև այլ աղբյուրի կամ աղբյուրների վարկածը: Հակված ենք նաև կարծելու, որ, գրավոր աղբյուրներից զատ, եղել են բանավոր ցուցումներ. ինչպես հայտնի է, Քոնայի հայ և լատին միաբանները թարգմանություններ կատարելիս համագործակցել են [Khachikyan 1977: 30-31, 39], նույնը ենթադրելի է Քոնեցու քերականության պարագայում. դրա հուշումը նշված եզրույթների *g-ջ*, *p-փ* տառադարձությունն է, որը, ըստ երևույթին, կատարվել է արտասանական հիմքով:

Իտալացի հայագետ Ֆր. Ռիվոլան (17-րդ դ. 1-ին կես) իր՝ լատիներենով գրված քերականության մեջ («Grammaticae Armenae libri quattuor») *gerundium*-ը դիտել է որպես հայերենին բնականորեն հատուկ կարգ՝ անորոշ եղանակի (infinitivus) ներքո: Նրա իմաստները, ըստ քերականի, պարփակված են անորոշ դերբայի հոլովական ձևերում. «Morem hunc esse apud Armenos, vt coniungant Infinitiuum cum quibusdam particulis, ex quarum coniunctione fit, vt varij gignantur dicendi modi perfimiles Gerundijs Latinorum» («Հայերի մոտ սովորություն կա անորոշ դերբայը կապակցելու որոշ մասնիկների հետ, որոնց միավորումից առաջանում են խոսքի զանազան ձևեր, որոնք շատ նման են լատիներենի գերունդիումներին»)

⁶ Սրանք անշուշտ եվրոպական գիտությանը վաղուց հայտնի փաստեր են, օր.՝ «Gerundia saepe Priscianus dixit», «Sed frequentat v. supini usum Priscianus» [Weissenborn 1844: 8, 3] և այլն:

⁷ Հովհ. Քոնեցու քերականության լատինական աղբյուրների ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս վերևում՝ 3-րդ ծնթ.:

[Rivola 1624: 145-146]: Այդ հիմքով տրված են հետևյալ օրինակները. *առ ի գործել* (հայց.) = *ad operandum*, *գործելով* (գործ.) = *operando*, *գործելոյ* (սեռ.) = *operandi*:

Նաև՝ հայցական հոլովով նախդրավոր ձևեր՝ ժամանակային իմաստով.

ընդ գործել կամ *ի գործել-cum operaretur* (իմաստը փոխանցված է երկրորդական նախադասությամբ՝ «երբ գործում էր») [Rivola 1624: 146; նաև՝ Jähukyan 1974: 21]:

Supinum եզրույթը և դրան վերաբերող առանձին կանոններ Ռիվոլայի քերականության մեջ հիշատակված չեն:

Նույն շրջանի լատին քերական Կդ. Գալանոսի աշխատության մեջ *gerundium*-ը, լատինական կաղապարի հետևողությամբ, վերածված է համակարգային կանոնավոր միավորի: Գալանոսը ստեղծել է հասկացության հայկական անվանումը՝ «գործակալ» (ըստ երևույթին լատինական դերբայը օրինականացնելու նկատառումով), և այն դիտել է որպես բայական համակարգի առանձին ձև՝ դուրս բերելով անորոշ եղանակի կարգից⁸:

«Գործակալի» ձևերը զետեղված են 4 լծ. բայերի խոնարհման հարացույցներում.

1-ին լծ. (–ամ). *կարդալով* = *clamando*, *վասն կարդալոյ* = *clamandi causa*, *առ ի կարդալոյ* = *ad clamandum*, *ի կարդալոյ* = *a clamando*,

2-րդ լծ. (–եմ). *գովելով* = *laudando*, *վասն գովելոյ* = *laudandi causa*, *առ ի գովելոյ* = *ad laudandum*, *ի գովելոյ* = *a laudando*, և սրանց կրավորականը՝ *գովիլով*, *վասն գովիլոյ*, *առ ի գովիլոյ*, *ի գովիլոյ*, որոնց դիմաց, սակայն, տրված են իտալերենի զուգահեռ ձևերը՝ *col esser lodato*, *per esser lodato* և այլն (լատինական *gerundium*-ին կրավորականը հատուկ չէ),

3-րդ լծ. (–իմ). *խօսելով* = *loquendo*, *վասն խօսելոյ* = *loquendi causa*, *առ ի խօսելոյ* = *ad loquendum*, *ի խօսելոյ* = *a loquendo*,

4-րդ լծ. (–ում). *ընթեռնլով* = *legendo*, *վասն ընթեռնլոյ* = *legendi causa*, *առ յընթեռնլոյ* = *ad legendum*, *ի յընթեռնլոյ* = *a legendo* [Galanos 1645:61, 72, 73, 80, 85, 86; նաև՝ Jähukyan 1974: 43-49]:

⁸ Այս առնչությամբ Գ. Զահուկյանը գրել է. «... սակայն փոխանակ իբրև այդպիսին դիտելու անորոշի հոլովաձևերը՝ [Գալանոսը] բավարարվում է լատիներենի *gerundium*-ի համապատասխան ձևերի տառացի թարգմանությամբ...» [Jähukyan 1974: 42]:

Ինչպես նկատելի է, դերբայական ձևերի այս շարքն ավելի ընգրկում է, ներառում է բացառականով ձևը՝ *ի կարդալոյ* ևն (որը նախորդ քերականները չէին նշել), բացի այդ՝ ի հայտ է բերում կազմության որոշ առանձնահատկություններ՝ *ad + acc*: Կաղապարը (նպատակի իմաստով) արտահայտված է առ ի + տրական-ով (նախկինում՝ առ ի + հայցական), նաև՝ քանի որ լատիներենում *gerundium*-ը հաճախ պահանջում է *causa* կամ հոմանիշ՝ *gratia* կապերը, սեռական ձևը, լատինական կաղապարի համաձայն, տրված է կայուն կապակցությամբ (*վասն + ...*): Նկատելի է նաև, որ «գործակալի» կրավորական ձևերը արհեստականորեն միօրինականացվել են՝ հատկացվելով *-ի* լծորդությանը (հունաբանություն՝ կենսունակ նաև լատինաբան հայերենում [Muradyan 2010: 119-120; Hambardzumyan 2010: 153...]⁹):

Գալանոսը այնուհետև բայի խոնարհման ձևերի տեսական մասում քննության է առել «գործակալի» կազմության սկզբունքները (տրված է 5-րդ կանոնի ներքո): Այսպես՝

1-ին, 2-րդ լծ. բայերի սահմանական ներկայի մասնիկների (*-ամ*, *-եմ*) վերջնահանգ *-մ*-ն փոխվում է *-լոյ*-ի (սեռ.) և *-լով*-ի (գործ.), 4-րդ լծ. բայերի *-ում* վերջավորությունը՝ նույնպես, 3-րդ լծ. բայերի *-իմ*-ը՝ *-ելոյ*-ի և *-ելով*-ի, օր.՝ *կարդամ-կարդալոյ, կարդալով, գովեմ-գովելոյ, գովելով, ընթեռնում-ընթեռնլոյ, ընթեռնլով, խօսիմ-խօսելոյ, խօսելով* [Galanos 1645: 97; նաև՝ Ĵahukyan 1974: 51-52]:

Գալանոսը ևս *supinum*-ի մասին առանձին տեղեկություններ չի տալիս:

Gerundium-ի հայերեն զուգահեռները կայուն միավորներ են նաև հայ քերական Ոսկան Երևանցու նկարագրած բայական համակարգում (17-րդ դ. 2-րդ կես): Այս դերբայը նա անվանել է տառադարձական տարբերակով՝ *ջերունդիա*, և նոր եզրույթով՝ *սերական* [Voskan 1666: 22; նաև՝ Ĵahukyan 1974: 75]: Այն, ինչպես Գալանոսի քերականության մեջ, դուրս է բերված աներևույթ եղանակի կարգից (նույնն է՝ անորոշ). «բաց ի սոցանէ (S.U.- եղանակներից) կայ ներ բայում ջերունդիա...» [Voskan 1666: 22]: Հարացույցը կազմված է 3 ձևից՝ *gen.*, *dat.* *սիրելոյ*, *abl.* *սիրելով*, և *acc.*, որը, ի տարբերություն նախորդ կաղապարների, ձևավորված է մեկ

⁹ Հունաբան ավանդույթը մեծապես ազդել է լատինաբան հայերենի վրա՝ կազմելով նրա նկարագրի կարևոր մասը [Hambardzumyan 2010: 164-180]:

նախդրով՝ *ի սիրել* (*փիս առ ի*): Սակայն այս նախդրով կառույցը տրված է միայն տեսական մասում (կազմության սկզբունքների շարադրանքում՝ [Voskan 1666: 22]), մինչդեռ հոլովման համակարգից նախդիրը դուրս է թողնված (հավանաբար զուտ հոլովական ձևեր տալու նկատառումով):

Ոսկանը նկարագրել է բայի խոնարհման տասը կարգ՝ ըստ նրա լծորդության և կազմության առանձնահատկությունների և սրանց ներքո (մեկ բացառությամբ՝ տե՛ս ստորև) «սերականի» զանազան օրինակներ է բերել. 1-ին կարգ՝ *-ել*-ով վերջացող ներգործական սեռի բայեր. *սիրել, սիրելոյ, սիրելով*, 2-րդ կարգ՝ *-ուլ*-ով վերջացող բայեր. *առնուլ, առնլոյ, առնլով*, 3-րդ կարգ՝ *-ալ*-ով վերջացող բայեր. *բառնալ, բառնալոյ, բառնալով*, 4-րդ կարգ՝ *-անել*-ով վերջացող բայեր. *հարկանել, հարկանելոյ, հարկանելով*, 5-րդ կարգ՝ տարարմատ (անկանոն) բայեր. *ուրել, ուրելոյ, ուրելով*, 6-րդ կարգ՝ տարարմատ բաղադրյալ բայեր. *ընդունիլ, ընդունելոյ, ընդունելով*, 7-րդ կարգ՝ «էական» բայեր. *ելոյ* կամ *ելոյր, ել, ելով*, 9-րդ կարգ՝ կրավորաձև բայեր. *մոռանալ, մոռանալոյ, մոռանալով*, 10-րդ կարգ՝ *-իլ*-ով վերջացող չեզոք սեռի բայեր. *լինիլ, լինելոյ, լինելով* [Voskan 1666: 76, 82, 87, 91, 95, 98, 101, 105, 109; նաև՝ Ĵahukyan 1974: 78, 79]:

Բացակայող 8-րդ կարգը վերաբերում է անկանոն բայերին, որոնք չունեն ներկա և անկատար ժամանակ՝ *ծանեայ* և այլն, և օրինաչափորեն չէր կարող ներառել դրանց կանոնավոր ձևերը՝ *ճանաչել* և այլն [Voskan 1666: 101-103]:

Ինչպես նկատելի է՝ *եմ* բայի համար բերված են արհեստական *ել, ելոյ* կամ *ելոյր, ելով* «սերականները»: Սրանք հունաբան ավանդույթից լատինաբան հայերենին անցած ձևեր են, որ առաջ են եկել կամայական կանոնավորումների հետևանքով (բայի անկանոնության կրճատում կամ պակասավոր ձևերի ամբողջացում) [Muradyan 2010: 127-128; Hambardzumyan 2010: 159]. նույն շարքի լրացուցիչ *ելոյր*-ը ևս հունաբանություն է [Muradyan 2010: 106-107]: Մյուս կողմից նկատելի է, որ «սերականները» կրավորականի հարացույց չունեն (ինչպես վերևում նշել ենք՝ լատինական *gerundium*-ին հատուկ չէ կրավորականը) և այդպիսով՝ ի տարբերություն բայական այլ ձևերի՝ զերծ են մնացել արհեստական միջամտություններից (ինչպես՝ «սեռանիշ» *ի* լծ. ներմուծումը):

Supinum-ը Ոսկանն անվանում օտար *սուպինայ* եզրույթով՝ նկատելով, որ այն հայերենին խորթ դերբայ է. «Իսկ սուպինայ մեզ ոչ գոյ, կամ թէ սիրելոց, այս թէ յարմարեսցի» [Voskan 1666: 22]: Այստեղ նկատի է

առնված *supinum* I-ը, որի իմաստը, սակայն, ապառնի դերբայը չի ծածկում (տե՛ս վերևում, նաև՝ Ĵahukyan 1974: 75):

17-րդ դարի նույն շրջանի քերական Հովհ. Հակոբ Կոստանդնուպոլսեցու (<Հոլով) աշխատության մեջ հայկական *gerundium*-ը ամբողջացել է որպես լատինաբան հայերենի իրողություն՝ իր մեջ առնելով բազմաթիվ արհեստականություններ:

Gerundium-ի համար քերականը տվել է «դերբայ» եզրույթը՝ նկատի առնելով նրա խառը բնույթը. «զի գոլով հոլովք բային աներևույթ, վարին փոխանակ բայից, և զառս էութեանց նշանակեն» [Kostandnupolssets'i 1674: 37; նաև՝ Ĵahukyan 1974: 106]:

«Դերբայի» ձևերը՝ ըստ Հոլովի բայական հարացույցի.

ա. «էական» բայեր. *ելոյ, գոլոյ, եղանելոյ, լինելոյ; ի յել, ի գոլ, ի յեղանիլ, ի լինիլ; ելով, գոլով, եղանելով, լինելով; նելն, ի գոլն, նեղանիլն, ըն լինիլն;*

բ. 1-ին, 2-րդ, 3-րդ լծ. ներգործական բայեր (–եմ, –ամ, –ում) և սրանց կրավորական ձևերը. *սիրելոյ, ի սիրել, սիրելով, ըն սիրելն կամ ի սիրելն / սիրիլոյ, ի սիրիլ, սիրիլով, ըն սիրիլն կամ ի սիրիլն; լուանալոյ, ի լուանալ, լուանալով, ըն լուանալն / լուանիլոյ, ի լուանիլ, լուանիլով, ըն լուանիլն; լնլոյ, ի լնուլ, լնլով, ըն լնուլն / լնանիլոյ, ի լնանիլ, լնանիլով, ըն լնանիլն;*

գ. 1-ին, 2-րդ, 3-րդ լծ. չեզոք բայեր, որոնցից 2-րդ լծ. բայերը տրված են երկու տեսակով՝ ներգործակերպ՝ –ամ և «ընդմիջակերպ»՝ –անամ (մասամբ ներգործաձև, մասամբ կրավորաձև բայեր), 3-րդ լծ. բայերը՝ միայն որպես «ընդմիջակերպ»՝ –նում. *ննջելոյ, ի ննջել, ննջելով, ըն ննջելն; գնալոյ, ի գնալ, գնալով, ըն գնալն / զայրանալոյ, ի զայրանալ, զայրանալով, ըն զայրանալն; զարթնլոյ, ի զարթնուլ, զարթնով, ըն զարթնուլն;*

դ. «ծայնակրական» բայեր (կրավորակերպ չեզոք). *աճելոյ, ի յաճել, աճելով, ըն յաճիլն;*

ե. «հասարակ» բայեր (կրավորակերպ ներգործական). *խոստովանելոյ, ի խոստովանիլ, խոստովանելովն, ըն խոստովանիլն;*

զ. 1-ին, 2-րդ լծ. «դիմագուրկ» բայեր (միադիմի). *անձրևելոյ, ի յանձրևելոյ, նանձրևելն; որոտալոյ, յորոտալ, որոտալով, նորոտալն;*

է. «արտողի» և պակասավոր 1-ին լծ. ներգործական բայեր և սրանց կրավորական ձևերը. *ուտելոյ, յուտել, ուտելով, ի յուտելն / ուտիլոյ, յուտիլ, ուտիլով, ըն յուտիլն; առնելոյ, ի առնել, առնելով, ըն առնելն / առնիլոյ, ի առնիլ, առնիլով, նառնիլն; լսելոյ, ի լսել, լսելով, ըն լսելն / լսիլոյ, ի լսիլ,*

լիլով, ըն լիլն; ճանաչելոյ, ի ճանաչել, ճանաչելով, ըն ճանաչելն / ճանաչիլոյ, ի ճանաչիլ, ճանաչիլով, ըն ճանաչիլն; տրելոյ, ի տրել, տրելով, ի տրելն / տրիլոյ, ի տրիլ, տրիլով, ըն տրիլն;

ը. «արտուղի» 1-ին լծ. «ընդմիջակերպ» չեզոք բայեր. մեղանչելոյ, ի մեղանչել, մեղանչելով, ըն մեղանչելն; յառնելոյ, ի յառնել, յառնելով, ըն յառնելն;

թ. «արտուղի» 2-րդ լծ. ներգործակերպ չեզոք և չեզոք բայեր. գալոյ, ի գալ, գալով, ըն գալն; երթալոյ, յերթալ, երթալով, յերթալն; կարենալոյ կամ կարելոյ, ի կարել, կարելով, ըն կարելն;

ժ. 3-րդ լծ. ներգործական բայ կալնուլ և սրա կրավորական ձևերը. կալնելոյ, ի կալնուլ, կալնելով, ըն կալնուլն / կալանելոյ, ի կալանիլ, կալանելով, ըն կալանիլն; և ևս երեք բայ՝ ունիմ, ծանիմ, մարչիմ, որոնք ընդհանուր հատկանիշով խմբավորված չեն, սակայն դերբայները հիմնականում ունեն սեռի նշումներ. «հասարակք»՝ ունելոյ, յունիլ, ունելով, յունիլն; մարչելոյ, ի մարչիլ, մարչելով, ըն մարչիլն; ներգործական՝ իր կրավորական ձևերով. ծանելոյ, ի ծանել, ծանելով, ըն ծանելն / ծանիլոյ, ի ծանիլ, ի ծանիլով, ըն ծանիլն [Kostandnupolsets'i 1674: 37, 40, 42, 45, 48, 52, 54, 58, 60, 63, 66, 68, 73, 75, 76, 79-81, 83, 85, 87, 89, 90, 92, 94, 95-97, 99, 102, 105, 107-109; նաև՝ Ĵahukyan 1974: 104, 105]:

Ըստ այդմ՝ Հոլովը ճանաչել է «դերբայի» 4 ձև, որոնց մեջ տվել է նաև ներգոյականը՝ ն, ըն նախդրով հոդառու կազմություն՝ նելն, ըն սիրելն, նախդիրով՝ in + ablativus կաղապարի համաձայն: Հոլովման լատինաբան համակարգի ներգոյականը, Վ. Համբարձումյանի բնորոշմամբ, «թերևս ամենացայտուն խորթությունն» է, որի ոչ միայն կաղապարն է օտար, այլև ձևոյթներն են արհեստական [Hambardzumyan 2010: 271, նաև՝ 272-277]: Այս նախդիրները ևս՝ ն/ըն, այլև՝ ին, ինչպես նաև՝ հոդառու, այսպես կոչված՝ «գոյականացված» անորոշ դերբայը պատկանում են հունաբան ավանդույթին [Muradyan 2010: 111-113, 140-141]:

«Դերբայի» այլ արհեստական ձևեր. ա) հոլովման կարգի հատկացում «էական» բային՝ ելոյ, գոլոյ (տե՛ս Ոսկանի հարացույցի մեկնաբանությունը), բ) ի լծ. վերագրում կրավորականին՝ լուանիլոյ (տե՛ս Գալանոսի հարացույցի մեկնաբանությունը), գ) նույնպես նաև՝ -ան- մասնիկը կրավորականի ցուցիչի «սեռանիշի» հետ՝ լնանիլոյ, կամ առանց նրա՝ կալանելոյ [Hambardzumyan 2010: 271, նաև՝ 297, 298], դ) անկանոն բայերի

«կանոնավորմամբ» ստեղծված անսովոր կազմություններ՝ *տրեւոյ, ծանեւոյ* [Յահուկյան 1974: 108; Hambardzumyan 2010: 304]:

Եզրակացություններ

1. Լատիներենի գոյականական դերբայ *gerundium*-ը արտացոլվել է հայերենի լատինատիպ քերականությունների վաղ շրջանում (14-րդ դ.), ապա կայունացել է նույն ուղղության հետագա երկերում (17-րդ դ.): *Gerundium*-ը համարվել է հայերենին բնականորեն հատուկ կարգ, և ըստ երևույթին այդ ընկալման ազդեցությամբ և նոր դերբայի հաստատումը դյուրացնելու համար ստեղծվել են մի քանի հայերեն եզրույթներ՝ «սերական», «գործակալ», «դերբայ»:

2. Այս դերբայի՝ քննության առնված հատկանիշները թույլ են տալիս պարզելու նրա ձևաբանական և իմաստային ընդհանուր նկարագիրը.

Հայց.՝ նախդիրիվ. (1.) նպատակի նշանակություն, կրկնակի նախդիրներ՝ *առ ի* [Քոնեցի, Ռիվոլա], մեկ նախդիր՝ *ի* [Ոսկան, Հոլով]. *առ ի (ի) սիրել* = *ad amandum*; (2.) ժամանակի նշանակություն, *ի, ընդ* նախդիրներ [Ռիվոլա]. *ի (ընդ) սիրել* = *in amando*,

Սեռ. [Քոնեցի, Ռիվոլա, Ոսկան, Հոլով], նախադրությամբ [Գալանոս]. (*վասն*) *սիրելոյ* = *amandi*,

Տր.՝ նախդիրիվ. նպատակի նշանակություն, կրկնակի նախդիրներ [Գալանոս]. *առ ի սիրելոյ* = *ad amandum*;

Բաց. [Գալանոս]. *ի սիրելոյ* = *ab / ex amando*,

Գործ. [Քոնեցի, Ռիվոլա, Գալանոս, Ոսկան, Հոլով]. *սիրելով* = *amando*:

Ներգ. *ն, ըն* նախդիր, հոդ [Հոլով]. *ըն սիրելն* = *in amando*:

Սրանք մեծապես ենթարկվել են արհեստական կանոնավորումների, որ հիմնականում արտահայտվել է կրավորական ձևերի նկարագրության մեջ: Ընդ որում՝ այս դերբայի կրավորականը բայական համակարգի միօրինականացման ուղագրավ օրինակ է, քանի որ շեղվում է ոչ միայն հայերենի իրողությունից, այլև լատինական կաղապարից (ուստի և զուգահեռ օրինակը բերվել էր իտալերենից):

3. Լատիներենի մյուս գոյականական դերբայը՝ *supinum*-ը, հայերենի լատինատիպ քերականության մեջ չի կայունացել, այն դրվագային, մեկուսացած միավոր է, որ մնացել է Քոնեցու աշխատության սահմաններում, իսկ հետագայում ճանաչվելով խորթ ձև՝ անտեսվել է:

4. *Ջէրունդիական և սուպինական* եզրույթների՝ ուշ շրջանի իրողություն (13-րդ դ.) լինելու վերաբերյալ նախկինում բերված փաստարկը հավաստի չէ, ըստ այդմ՝ նաև հավաստի չէ այդ հիմքով արված պնդումը, թե դրանք չէին կարող փոխառվել Պրիսցիանուսի աշխատությունից (6-րդ դ.): Մինչդեռ հաշվի առնելով, որ այդ եզրույթներն առաջինը կիրառած Քոնեցին օգտվել է Պրիսցիանուսի աշխատությունից, հավանական է, որ դրանք անմիջապես փոխառված լինեն այդ աղբյուրից:

Գրականության ցանկ

[1] Acharyan Hr., Hayoc՝ lezvi patmut՝yun [*History of Armenian language*]. Vol. 2. Yerevan: Haypethrat, 1951.

[2] Avagyan S., Hovhannes K՛rnets՝u «Hamarot havaqumn yaghags k՛erakanin» erki k՛erakanagitakan nshanakut՝yuny [*The Grammatical Significance of Hovhannes K՛rnets՝i՝s "Brief Compilation on Grammar"*]. Introduction to Yovhannēs K՛rnets՝i, On the grammar. Yerevan: Armenian Academy of Sciences, 1977: 52–153.

[3] Cowe P., The Role of Priscian՝s Institutiones Grammaticae in Informing Yovhannēs K՛rnec՝i՝s Innovative Account of Armenian Grammar with regard to Terminology, Classification, and Organization with Special Focus on his Investigation of Syntax, in *Revue des études arméniennes*, 2020, 39: 91–121.

[4] Galanos Kgh., K՛erakan ew tramabanakan nerats՝ut՝iwn ar himastasirut՝iwnə shahelōy, [*Grammaticae, et Logicæ Institutiones linguae literalis Armenicæ Armenis traditæ*]. Rome: Ex Typographia Sacrae Congregationis de Propaganda Fide, 1645.

[5] Hambardzumyan V., Latinaban hayereni patmut՝yun [*History of Latinizing Armenian*]. Yerevan: Nairi, 2010.

[6] Hiwrmiwzean Ed., Hamarot k՛erakanut՝iwn latin barbaroy [*A Brief Grammar of the Latin Language*]. Venice: 1839.

[7] Jahukyan G., Grabari k՛erakanut՝yan patmut՝yun [*History of the grammar of ancient Armenian*]. Yerevan: Armenian State University Press, 1974.

[8] Khachikyan L., Kinayi hogevor-mshakut՝ayin kentrony yev Hovhannes K՛rnets՝u gitakan gortsuneut՝yuny [*The religious and cultural center of K՛rna and the scholarly activities of Yovhannēs K՛rnets՝i*]. Introduction to Yovhannēs K՛rnets՝i, On the grammar. Yerevan: Armenian Academy of Sciences, 1977: 5–51.

[9] Kostandnupolsets՝i Y., Ztut՝iwn haykabanut՝ean kam k՛erakanut՝iwn haykakan [*Puritas linguae Armenicae*]. Rome: Ex Typographia Sacrae Congregationis de Propaganda Fide, 1674,

[10] K՛rnets՝i Y., Yaghags k՛erakanin [*On grammar*]. Yerevan: Armenian Academy of Sciences Press, 1977.

- [11] Muradyan G., Fourteenth-Century Developments in Armenian Grammatical Theory through Borrowing and Translation: Contexts and Models of Yovhannes K'rnets'i's Grammar Book, *Hungarian Historical Review*, 2025, 14, 2: 214-246.
- [12] Muradyan G., Hunabantyunnery dasakan hayerenum [*Grecisms in Ancient Armenian*]. Yerevan: Nayiri, 2010.
- [13] Oudenrijn M.-A. van den. Linguae haicanae scriptores ordinis praedicationisfratrum unitorum et ff. armenorum ord. S. Basilii citra mare consistentium quotquot huc usqueinnotuerunt. Bern: A. Francke Ag. Verlag, 1960.
- [14]. Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ed. Henrich Keil, M. Hertz, Leipzig: Teubner, 1855.
- [15]. Rivola F., Grammaticae Armenae libri quattuor, Mediolani: Ex typographia Collegii Ambrosiani, 1624.
- [16]. Sirunyan T.. Hovhannes K'rnets'u k'erakanakan erki sahmanumneri latineren nakhorinaknery [*The Latin archetypes of the definitions in the grammatical work by Yovhannēs K'rnets'i*]. Banber Matenadarani, 2017, 24: 122–40.
- [17] Voskan Erewants'i, K'erakanut'ean girk' [*Book of Grammar*]. Amsterdam: 1666.
- [18] Weissenborn W., De gerundio et gerundive latinae linguae commentatio, Isenaci: 1844.
- [19] Zarphanalean G., Patmut'yun hayeren dprut'eants' [*History of Armenian literature*]. Vol. 2, *Nor matenagrt'yun* [*Modern literature*]. Venice: Mkhit'arean, 1878.
- [20] Чудинова А., Очерки изъ исторіи языкознанія. Развитіе грамматическихъ теорій въ средніе вѣка, Воронежъ: 1871.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ԲԱՑԱՀԱՅՏԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵԴՅԱՆ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Բ. գ. թ., գիտաշխատող

amalyabarseghyan42@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-43

Համառոտագիր

Հոդվածում քննվում է հայ շարահյուսագիտության մեջ գոյականական անդամի առանձին լրացում համարվող բացահայտչի գնահատման խնդիրը: Ներկայացվում և վերլուծվում են Մ. Աբեղյանի, Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի, Վ. Առաքելյանի, Գ. Սևակի, Ռ. Իշխանյանի և Ա. Խաչատրյանի տեսակետները՝ բացահայտչի քերականական բնույթի, շարադասական դիրքի, բացահայտյալի հետ կապի և տեսակների վերաբերյալ:

Ցույց է տրվում, որ հայ լեզվաբանական գրականության մեջ բացահայտիչը միանշանակ գնահատում չի ստացել. ոչ բոլոր լեզվաբաններն են այն ընդունում որպես նախադասության առանձին անդամ և գոյականական լրացում, ինչպես նաև միանշանակ չէ մոտեցումը մասնական և պարագայական մասնավորող բացահայտիչների առանձնացման հարցում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Ա. Խաչատրյանի այն տեսակետին, ըստ որի՝ բացահայտիչն ու բացահայտյալը պետք է դիտել որպես «բացահայտական բազմակի անդամներ», և հիմնավորվում է, որ այդ միավորները համադաս հարաբերությամբ կապված անդամներ չեն: Եզրակացվում է, որ բացահայտիչը նախադասության առանձին անդամ-լրացում է, որը բացահայտում, ճշտում և որոշարկում է բացահայտյալի իմաստը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. բացահայտիչ, բացահայտյալ, գոյականական լրացում, լրացյալ, մասնական բացահայտիչ, պարագայական մասնավորող բացահայտիչ, ինքնուրույն անդամ, բացահայտական բազմակի անդամներ:

* Ներկայացվել է՝ 03. 03. 04.2026 թ., գրախոսվել է՝ 12. 05. 2026 թ.:

ANNOTATION OF EVALUATIVE CONSTRUCTIONS IN ARMENIAN SYNTAX

AMALYA BARSEGHYAN

Language Institute, Ph. D.
amalyabarseghyan42@gmail.com

Abstract

The article examines the problem of evaluating apposition in Armenian syntax as a separate complement of a nominal sentence member. It analyzes the views of M. Abeghyan, G. Jahukyan, S. Abrahamyan, V. Arakelyan, G. Sevak, R. Ishkhanyan, and A. Khachatryan on the grammatical nature of apposition, its syntactic position, its relation to the head word, and its types. The study shows that apposition has not received a uniform interpretation in Armenian linguistic scholarship: not all linguists recognize it as an independent sentence member and as a distinct nominal complement, and there is no consensus regarding the identification of partial apposition and adverbial-specifying apposition. Particular attention is paid to A. Khachatryan's view that apposition and its head word should be regarded as "appositional coordinate members"; the article argues against this interpretation. It is concluded that apposition should be treated as an independent sentence complement that explicates, specifies, and determines the meaning of its head word.

Keywords and phrases: apposition, head word, nominal complement, modified element, partial apposition, adverbial-specifying apposition, independent sentence member, appositional coordinate members.

ОЦЕНКИ ПРИЛОЖЕНИЯ В АРМЯНСКОМ СИНТАКСИСЕ АМАЛИЯ БАРСЕГЯН

Институт языка им. Р. Ачаряна
К. ф. н., научный сотрудник
amalyabarseghyan42@gmail.com

Аннотация

В статье рассматривается проблема оценки приложения в армянском синтаксисе как особого дополнения именного члена предложения. Анализируются взгляды М. Абегиана, Г. Джаукяна, С. Абрамяна, В. Аракеляна, Г. Севака, Р. Ишханяна и А. Хачатряна на грамматическую природу приложения, его синтаксическую позицию, связь с определяемым словом и его типы. Показано, что в армянской лингвистической литературе приложение не получило однозначной оценки: не все исследователи признают его самостоятельным членом предложения и особым видом именного дополнения, а также по-разному подходят к выделению частичного и обстоятельственно-уточняющего приложения. Особое внимание уделяется точке зрения А. Хачатряна, согласно которой приложение и определяемое слово следует рассматривать как «объяснительные однородные члены»; в статье обосновывается несостоятельность такого подхода. Делается вывод, что приложение является самостоятельным членом предложения — дополнением, которое раскрывает, уточняет и конкретизирует значение определяемого слова.

Ключевые слова и словосочетания: приложение, определяемое слово, именное дополнение, определяемый член, частичное приложение, обстоятельственно-уточняющее приложение, самостоятельный член предложения, объяснительные однородные члены.

Ներածություն

Լեզուներում բացահայտիչը կապվում է գոյական լրացման հետ. այսինքն՝ որևէ գոյական կամ գոյականական լրացում, ինչ դիրքով էլ լրացնի նախադասության մեջ իր նման մի անդամի, դառնում է բացահայտիչ: Այդպես էին կարծում մեր անվանի քերականներ Ա. Այտընյանը և Ս. Պալասանյանը (տե՛ս Aytinean 1866. Palasanean 1894) (ինչպես՝ Հայկը՝ իմ եղբայրը կապակցության մեջ՝ իմ եղբայրը և իմ եղբայր Հայկը կապակցության մեջ՝ իմ եղբայր): Մեր շարահյուսագիտության մեջ այժմ բացահայտիչ է համարվում միայն հետադաս լրացումը, իսկ նախադասը՝ որոշիչ, որը, իրոք, իր կիրառությամբ չի տարբերվում որոշիչից:

deutschen Korpus wurden etwa 50 unterschiedliche präpositionale Paarformeln erfasst. Die produktivsten Strukturmodelle sind mit + X und Y, von + X zu Y, in + X und Y, an + X und Y, nach + X und Y, auf + X und Y, wie z. B. mit Sang und Klang, in Saus und Braus, mit Glanz und Gloria, mit Ach und Krach, auf Herz und Nieren sowie tautologische Bildungen wie Rücken an Rücken, Schritt für Schritt, Auge um Auge, Jahr für Jahr, alles in allem. Im Russischen sind die Paarformeln mit Konjunktionen vielfältiger. Bei der Untersuchung der präpositionalen Teilmenge des russischen Korpus (ca. 40 Einheiten) wurden 19 verschiedene Strukturmodelle mit Präpositionen herausgefunden. Die häufigsten Modelle sind Konstruktionen mit den Präpositionen за [za], в [v], от...до [ot ... do] und из [iz], während im Deutschen die Modelle mit mit, in und von dominieren (*на спрах и пущ [nastraxi risk]'auf eigene Gefahr', в ных и прах [v puxiprax]'in Grund und Boden', от А до Я [ot A do Ja]'von A bis Z', из стороны в сторону [izstorony v storonu]'von einer Seite zur anderen', шаг за шагом [šag za šagom] 'Schritt für Schritt, день за днем den' za dnëm] 'Tag für Tag*). Im Gegensatz zum Deutschen sind präpositionale Paarformeln im Armenischen weniger (10 Beispiele mit առ [a ĩ] und ընդ [ənd]). Dies bestätigt die Tendenz, dass armenische Paarformeln überwiegend durch die Konjunktionen ու [u] und եւ [ew] oder durch Bindestrichbildung realisiert werden, während präpositionale Konstruktionen nur eine marginale Rolle spielen. Bei präpositionalen Wiederholungsstrukturen gibt es Volläquivalente in drei Sprachen: *Arm in Arm, Hand in Hand - рука об руку [rukaobruku]– ձեռք ձեռքի [je k'ɾjɛr k']*, *Tag für Tag – день за днем [den' za dnëm] – որ որի [ōrōri]*, *Wort für Wort – բառ առ բառ [baraɾbaɾ] – слово за словом [slovo za slovom]*. Semantisch dominieren hierbei Bedeutungen wie Wiederholung, Sukzessivität, Gegenseitigkeit und distributive Verteilung.

Aus der Sicht der Wortartenkombinationen bilden substantivische Paarformeln in allen drei Sprachen die produktivste Gruppe. Im Deutschen wurden 91 substantivische Paarformeln erfasst, im Armenischen 57 und im Russischen 43. Damit weist das Deutsche die höchste Produktivität auf. Auch bei den adjektivischen und verbalen Paarformeln zeigt das Deutsche eine deutlich größere Vielfalt. Im Deutschen wurden 27 adjektivische und 22 verbale Paarformeln festgestellt, während im Russischen ca. 15 adjektivische und 10 verbale Belege vorkommen. Das Armenische nimmt hinsichtlich dieser Wortarten eine Mittelstellung ein, weist jedoch ebenfalls weniger Beispiele auf als das Deutsche. Bei den adverbialen Paarformeln ergibt sich ein anderes Bild. Hier ist das Russische besonders produktiv. Mit 23 Belegen übertrifft es sogar das Deutsche mit 20 Belegen. Dies hängt eng mit der starken Verbreitung von Reduplikationen und Bindestrichbildungen im Russischen zusammen. Außerdem verfügt das Deutsche neben substantivischen, adjektivischen, verbalen und adverbialen Wortpaaren auch über pronominalen, numeralischen, partizipialen und konjunktionale Paarformeln wie beispielsweise hin und her, fünf-fünf, alles in allem. Solche Gruppen sind im Russischen wesentlich

seltener vertreten. Besonders charakteristisch für das Russische sind Reduplikationen mit Bindestrichbildungen wie еле-эле [*ele-ele*], синий-синий [*sinij-sinij*], житьё-бытьё [*žit'ë-byt'ë*] oder шуры-муры [*šury-mury*]. Solche Bildungen kommen im Deutschen nur vereinzelt vor und spielen im Armenischen ebenfalls eine deutlich geringere Rolle.

Die Paarformeln im Deutschen, Armenischen und Russischen weisen häufig eine besondere lautliche Gestaltung auf. Hier spielen euphonische Mittel, also der Wohlklang, eine besondere Rolle. Zu den wichtigsten phonetischen Mitteln gehören Stabreim (Alliteration) und Endreim, die zur Klangwirkung, Ausdruckskraft und leichteren Merkbarkeit der Paarformeln beitragen. Im Deutschen ist die Alliteration besonders produktiv. Beispiele wie Geld und Gut, Haus und Hof, Haus und Herd, Land und Leute, Lust und Leid, Mann und Maus, Schimpf und Schande oder Wind und Wetter zeigen deutlich die Wiederholung des Anfangslautes. Dadurch erhalten die Paarformeln einen rhythmischen und einprägsamen Charakter. Auch im Russischen kommen alliterierende Paarformeln vor: mit Alliteration *стыд и срам* [*stydisram* 'Schmach und Schande'], *в нух и прах* [*vpuxiprax*] 'in Grund und Boden', *вкривь и вкось* [*vkriv'ivkos'*] 'kreuz und quer', mit Endreim *мал да удал* [*maldaudal*] 'klein, aber fein', *смех и грех* [*smexigrex*] 'zum Weinen und zum Lachen', *шуры-муры* [*šurymury*] 'Liebeleien'. Solche Paarformeln besitzen oft einen expressiven oder umgangssprachlichen Charakter. Im Armenischen findet man ebenfalls Alliterationen, beispielsweise *տուն-տն* [*tuntel*] 'Haus und Hof', *կամւ ու կուց* [*kamucac*] 'Tun und Lassen', *ծալկուծակ* [*cakucuk*] 'Winkel und Ecken', *գնալ-գալ* [*gnalgal*] 'Kommen und Gehen'. Hier sorgt die Wiederholung der Anfangslaute ebenfalls für einen besonderen Wohlklang und eine stärkere Verbindung der Komponenten.

Von Endreim spricht man, wenn die Komponenten eines Wortpaares gleiche oder ähnliche Endsilben besitzen. Im Deutschen zeigen Paarformeln wie Jubel und Trubel, Rat und Tat, Lug und Trug, Sang und Klang, weit und breit oder dann und wann deutliche Reimbeziehungen. Die Übereinstimmung der Wortenden verstärkt die rhythmische Struktur der Paarformeln. Im Russischen ist der Endreim besonders produktiv. Dies zeigt sich in Paarformeln wie *житьё-бытьё* [*žit'ëbyt'ë*] 'Leben und Treiben', *жили-были* [*žili-yli*] 'es war einmal', *тапы-бары* [*tarybary*] 'Schnick-Schnack', *трали-вали* [*tralivali*] 'herumalbern', *шуры-муры* [*šurymury*] 'Tachtelmechtel' oder *манцы-шманцы* [*tancyšmancy*] 'Tralala und Hopsasa'. Die Übereinstimmung der Endungen erzeugt einen starken lautlichen Effekt und verleiht den Paarformeln häufig einen spielerischen oder expressiven Charakter. Auch im Armenischen treten gereimte Paarformeln auf. Beispiele sind *սկիւն-դիւն* [*anol-dnoł*] 'Macher und Gestalter', *կիւն-թաւիւն* [*ēpol t'apol*] 'Köchin und Gastgeberin' und *համոխ-հոսոխ* [*hamovhotov*] 'Köstliches', *անցած-զուցած* [*an c'ac-gna c'ac*] 'vergangen und vergessen'. Die lautliche Ähnlichkeit der Endungen verbindet die Komponenten eng miteinander und erhöht ihre Einprägsamkeit.

In einigen Fällen treten beide phonetischen Mittel gleichzeitig auf. So weist die russische Paarformel *шұры-мұры* sowohl eine ähnliche Anfangs- als auch Endstruktur auf. Ähnliches gilt für *тұры-бары* [tary-bary] und *тұрали-вали* [trali-vali]. Im Deutschen finden sich Mischformen beispielsweise in Sang und Klang, wo sowohl die Anfangskonsonanten als auch die Endungen eine gewisse lautliche Nähe zeigen. Eine andere Erscheinung ist der Ablaut bzw. divergente Formen wie im Russischen. Im Deutschen kommt der Ablaut in den Formen wie mit Sing und Sang, mit Kling und Klang, blink und blank, klippen und klappen, holtern und poltern. Divergente Formen sind typisch auch für das Armenische und Russische, beispielsweise in den Formen *տնւն-տնէ* [tuntel], *նազ ու նուզ* [nazutuz], *մանր-մնւնր* [manrmunr], *մարդ-մնւրդ* [mardmurd]; *тян-лян* [tjapljar], *тик-так* [tiktak], *супер-ныпер* [superpuper]. Der Vergleich zeigt, dass das Deutsche besonders reich an alliterierenden Paarformeln ist, während das Russische durch eine hohe Anzahl gereimter und reduplizierter Paarformeln gekennzeichnet wird. Das Armenische verbindet beide Tendenzen und weist sowohl stabgereimte als auch endgereimte Paarformeln auf, jedoch in geringerem Umfang. Im Unterschied zum Deutschen und Russischen verfügt das Armenische auch über interjektionale Paarformeln sowie Paarformeln, die Verneinung ausdrücken. Zu den interjektionalen Paarformeln gehören *հէյ-հէյ* [hēy-hēy] 'hei-ho', *վայ-վայ* [vay-vay] 'Owei', *վնյ-վնյ* [vuy-vuy] 'Ui'. Verneinungsformen sind beispielsweise *աման-չ'аман* [aman- č'aman], *եղած-չ'եղած* [ełac- č'ełac], *ննկցած-չ'ննկցած* [une c'ac- č'une c'ac].

Beim Vergleich der semantischen Bedeutungen der Paarformeln im Deutschen, Armenischen und Russischen stellt sich heraus, dass diese drei Sprachen über dieselben grundlegenden semantischen Typen von Paarformeln verfügen. Die größten Gemeinsamkeiten bestehen bei synonymischen und antonymischen Paarformeln. Unterschiede zeigen sich vor allem bei den Wiederholungen: Während im Deutschen und Armenischen vorwiegend präpositionale Wiederholungsstrukturen wie Schritt für Schritt bzw. *քայլ առ քայլ* vorkommen (synonymische Paarformeln 44 Belege, antonymische 16 Belege, komplementäre Paarformeln 29 Belege und Wiederholungen 14 Belege), sind im Russischen zahlreichere reine Reduplikationen wie *еле-еле*, *много-много* oder *синий-синий* verbreitet (24 Belege). Darüber hinaus weist das Deutsche eine besonders große Zahl komplementärer Paarformeln auf, während das Russische stärker zur expressiven und reduplikativen Wortbildung tendiert. Synonymische Paarformeln erreichen im Russischen 17 Belege, komplementäre 14 Belege und antonymische 9 Belege. Das Armenische nimmt auch hinsichtlich der semantischen Struktur eine Mittelstellung zwischen beiden Sprachen ein. Im Armenischen dominieren ebenfalls synonymische Paarformeln mit 32 Belegen. Danach folgen komplementäre Paarformeln (24 Belege), Wiederholungen (13 Belege) und antonymische Paarformeln (12 Belege).

In funktionaler Hinsicht erfüllen die untersuchten Einheiten vor allem expressive, intensivierende und rhythmisierende Aufgaben. Darüber hinaus dienen sie der Verallgemeinerung, der Darstellung wiederholter Handlungen sowie der Markierung von Vollständigkeit. Dabei lassen sich sprachspezifische Schwerpunkte erkennen: Im Deutschen dominieren intensivierende und vollständigkeitsmarkierende Funktionen, etwa in Paarformeln wie mit Haut und Haar (Vollständigkeit), Feuer und Flamme (emotionale Intensivierung) oder Tag für Tag (Iteration). Im Russischen treten besonders expressive und spielerische Funktionen hervor, wie in шуры-муры (umgangssprachlich-scherzhaft) oder еле-эле (abschwächend-intensivierend), während Bildungen wie туда-сюда eine distributive Funktion erfüllen. Im Armenischen verbinden Paarformeln wie կյալիք ու մահ antonymische Vollständigkeit mit expressiver Wertung, während Formen wie շատ ու շատ eine klare Intensivierungsfunktion übernehmen. Die Analyse bestätigt damit, dass Reduplication nicht auf die bloße Wiederholung sprachlicher Formen reduziert werden kann, sondern als komplexes sprachliches Verfahren zu verstehen ist, das unterschiedliche strukturelle Ausprägungen und kommunikative Funktionen umfasst.

Fazit

Die vorliegende Untersuchung hat gezeigt, dass Reduplikation und reduplikationsnahe Bildungen sowohl im Deutschen als auch im Russischen und Armenischen einen festen Bestandteil des Wortschatzes und der Phraseologie darstellen. Trotz typologischer Unterschiede weisen die drei Sprachen zahlreiche Gemeinsamkeiten auf. In allen untersuchten Sprachen dienen solche Strukturen nicht nur der Wiederholung sprachlicher Elemente, sondern übernehmen vielfältige semantische und pragmatische Funktionen. Sie können Intensität, Vollständigkeit, Wiederholung, Gegenseitigkeit oder emotionale Bewertung ausdrücken und tragen zugleich zur Expressivität und Einprägsamkeit sprachlicher Äußerungen bei.

Die Analyse des Korpus hat außerdem gezeigt, dass die Grenzen zwischen prototypischer Reduplikation und reduplikationsnahen Paarbildungen fließend sind. Neben vollständigen Wiederholungen finden sich zahlreiche Reim-, Echo- und Ablautbildungen sowie koordinative Paarformeln, die ähnliche Funktionen erfüllen und daher im weiteren Sinne dem Reduplikationsfeld zugeordnet werden können. Besonders deutlich wurden Unterschiede hinsichtlich der Produktivität einzelner Typen. Während im Deutschen vor allem Paarformeln und lautlich motivierte Paarbildungen dominieren, treten im Russischen und Armenischen vollständige und echoartige Reduplikationen wesentlich häufiger auf. Dies deutet darauf hin, dass dieselben kommunikativen Funktionen in den drei Sprachen teilweise durch unterschiedliche sprachliche Mittel realisiert werden.

Insgesamt bestätigen die Ergebnisse die Annahme, dass Paarformeln als ein sprachübergreifendes Phänomen betrachtet werden können, dessen konkrete

Ausprägungen jedoch von den strukturellen Besonderheiten der jeweiligen Sprache geprägt sind. Weitere Untersuchungen auf der Grundlage größerer Korpora könnten dazu beitragen, die Produktivität einzelner Muster sowie deren Verwendung in verschiedenen Textsorten und Kommunikationssituationen genauer zu beschreiben.

Literaturverzeichnis

- [1] Abeghyan M. Ashxarhabar kerakanutyun [Grammar of Ashxarhabar]. Ejmiatsin, 1906.
- [2] Abeghyan M. Hayoc lezvi tesutyun [Theory of Armenian Language]. Y., 1974:
- [3] Aghayan E. Yndhanur ev haykakan baragitutyun [General and Armenian Lexikology]. Y., 1984:
- [4] Arsent'eva, E. F., & Valiullina, R. B. Reduplikatsiya v angliiskom i russkom yazykakh [Reduplication in English and Russian]. In: Filologiya i kul'tura. Philology and Culture, No. 1(31), 2013.
- [5] Barz Irmhild. Die Wortbildung. In: Wöllstein, Angelika/Dudenredaktion (Hgg.): Die Grammatik. Unentbehrlich für richtiges Deutsch. 9. Aufl. Berlin: Dudenverlag, 2016.
- [6] Bzdęga Andrej Zdzidław. Reduplizierte Wortbildung im Deutschen, Poznań, 1965.
- [7] Djahukyan G. Shamanakacic hayoc lezvi imastabanutyun ev barakazmutyun [Semasiology and Lexikology of modern Armenian language].Y., 1989.
- [8] Donalies Elke. Basiswissen. Deutsche Phraseologie. Tübingen: Narr Francke Attempto Verlag, 2009.
- [9] Fleischer W. Phraseologie der deutschen Gegenwartssprache. Leipzig: VEB Bibliographisches Institut, 1982.
- [10] Inkelas Sharon, Zoll Cheryl. Reduplication: doubling in morphology. Cambridge Studies in Linguistics 106. Cambridge: Cambridge University Press.
- [11] Iskos A., Lenkova A. Deutsche Lexikologie, Leningrad: «Prosweschenie», 1970.
- [12] Khachatryan L. Krknavor bardutyunneri armatakan tipy hayeren Astvacashunch matyanum [Reduplication of the root type in the Armenian Bible]. (<https://bit.ly/4eaUGGy>, 10.06.2026):
- [13] Kryuchkova, O. Yu. Reduplikatsiya kak yavlenie russkogo slovoobrazovaniya [Reduplication as a Phenomenon of Russian Word Formation]. Doctor of Philological Sciences dissertation. Saratov: Saratov State University, 2000.
- [14] Margarian A. S. Hodakapov krknavornery hayerenum [Reduplicative Compounds with a Interfix]. In: Patma-banasirakan handes. V.2, Y., 1987. (<https://arar.sci.am/dlibra/publication/191220/edition/173683?language=hyw> 9.06.2026):

- [15] Minlos F. R. Reduplikatsiya i parnye slova v vostochno-slavyanskikh yazykakh [Reduplication and Paired Words in the East Slavic Languages]. Candidate of Philological Sciences dissertation. Moscow: Institute of Slavic Studies, Russian Academy of Sciences, 2004.
- [16] Ovtina, E. A. Reduplikatsiya v russkom yazyke: formy i funktsii [Reduplication in the Russian Language: Forms and Functions]. In: Natsional'nye kul'tury v mezhkul'turnoi kommunikatsii (Vol. 2). Minsk, 2016.
- [17] Pankov, F. I., & Ovtina, E. A. Yazykovaya kartina mira i mekhanizm reduplikatsii: fragment lingvodidakticheskoi modeli russkoi grammatiki [The Linguistic Worldview and the Mechanism of Reduplication: A Fragment of the Linguodidactic Model of Russian Grammar]. *Pedagogicheskii zhurnal*, Vol. 7, No. 1A.
- [18] Plag Ingo. Word Formation in English. Cambridge Textbooks in Linguistics, 2018.
- [19] Schröter U. Paarformeln in Gegenwart und Geschichte der deutschen Sprache (Struktur, Semantik, Funktion). In: *Sprachpflege* 29, H.10, 1980.
- [20] Staffeldt Sven. Über sehr sehr. Beobachtungen zum Vorkommen einer totalen Reduplikation im gesprochenen Deutsch. In: Filatkina, Natalia und Stören Stumpf (Hrsg.): *Konventionalisierung und Variation. Phraseologische und konstruktionsgrammatische Perspektiven*. Berlin: Lang, 2018.
- [21] Stein S. Formelhafte Sprache – Untersuchungen zu ihren pragmatischen und kognitiven Funktionen im gegenwärtigen Deutsch. Frankfurt (= *Sprache in der Gesellschaft* 22), 1995.
- [22] Stepanova M., Černyševa I. Lexikologie der deutschen Gegenwartssprache. M., 1975.
- [23] Wiese Richard. Über die Interaktion von Morphologie und Phonologie – Reduplikation im Deutschen. In: *ZPSK*, Berlin 43 (1990) 5.
- [24] Černyševa I. Feste Wortkomplexe des Deutschen in Sprache und Rede. M., 1980.
- [25] Zaripova, A. M. Lingvokul'turologicheskii analiz reduplikatsii v traditsionnykh detskikh stikhakh [Linguocultural Analysis of Reduplication in Traditional Children's Rhymes]. Extended abstract of Candidate of Philological Sciences dissertation. Chelyabinsk: Chelyabinsk State University, 2008.
- [26] Yazykoznanie. Bol'shoi entsiklopedicheskii slovar' [Linguistics: Great Encyclopedic Dictionary]. Moscow, 1998.

**«ԴԵՊՔՈՒՄ» ԿԱՊԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ*
ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Վ, Բրյուսովի անվան պետական համալսարան

Բ. Գ.Թ., դոցենտ

Khachatryan.nune.g@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-69

Համառոտագիր

Հոդվածում քննվում է ժամանակակից հայերենի պաշտոնական և լրագրողական լեզվում «դեպքում» կապով կազմված ոչ կանոնական կառույցների գործածությունը՝ ռուսերեն «в «случае с»» շարահյուսական կառուցվածքի ազդեցության համատեքստում:

Ուսումնասիրության նպատակն է պարզաբանել այդ կառույցների ձևավորման լեզվական մեխանիզմները, դասակարգել գործառության տեսակները և վերլուծել իմաստային-քերականական առանձնահատկությունները՝ հայերենի ներքին օրինաչափությունների և զուգորդելիության նորմերի տեսանկյունից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «դեպքում» կապը բազմաթիվ օրինակներում կորցնում է իր պայմանաիրադրային նշանակությունը և ստանձնում է խոսքի առարկայի, թեմատիկ առնչության, սուբյեկտի առանձնացման, վերաբերմունքի կամ կիրառման շրջանակի մատնանշման գործառույթներ: Նման գործածությունները պայմանավորված են կապվող բառերի դասային և իմաստային հատկանիշներով (անձնանուն, տեղանուն, նյութական առարկա նշանակող, ֆիզիկական օբյեկտ անվանող միավորներ) և դրանց համադրման հնարավորություններով: Արդյունքում խախտվում են «դեպքում» կապի ավանդական զուգորդելիության սահմանները, ինչը հանգեցնում է իմաստային և քերականական անհամապատասխանության:

Արձանագրվում է նաև շարահյուսական հարաբերությունների միօրինակացման միտում, երբ թեմատիկ, վերաբերական, կիրառելիության և տարածական հարաբերությունները հաճախ ներկայացվում են նույն կառուցվածքով: Այդ

* Ներկայացվել է՝ 25. 03.2026 թ., գրախոսվել է՝ 13. 04. 2026 թ.:

գործընթացի արդյունքում «դեպքում» կապը լրատվամիջոցների խոսքում աստիճանաբար վերածվում է կապակցման բազմագործառույթ միջոցի, որը փոխարինում է տարբեր կապերի և կապակցությունների («համար», «նկատմամբ», «վերաբերյալ», «մասին», «հետ» ևն):

Հետազոտությունը թույլ է տալիս «դեպքում» կապի գործածությունը դիտարկել որպես ռուսերենի «в случае с» կառուցվածքի գործառութային և քերականական պատճենման դրսևորում:

Երևույթը դիտարկվում է որպես թարգմանական ազդեցությամբ պայմանավորված համակարգային խնդիր, որի ուսումնասիրությունը կարևոր է պաշտոնական և լրագրողական խոսքի նորմերի պահպանման, ինչպես նաև թարգմանությունների խմբագրման տեսանկյունից:

Բանալի բառեր և բառակապակցություններ. լրատվամիջոցների լեզու, շարահյուսական կաղապար, քերականական պատճենում, զուգորդելիությամբ սահմաններ, կապային կառույց:

THE USE OF THE POSTPOSITION «DEPQUM» IN CONTEMPORARY ARMENIAN MEDIA LANGUAGE

NUNE KHACHATRYAN

Senior Laboratory Assistant

Institute of Language after H. Acharyan

Senior Laboratory Assistant

V. Brusov State University.

Candidate of Philological Sciences, Associate Professor.

Khachatryan.nune.g@mail.ru

Abstract

The article examines non-normative constructions formed with the Armenian postposition depqum in contemporary official and journalistic discourse, considering them in the context of the influence of the Russian syntactic construction v sluchae s “in the case of / with regard to”.

The aim of the study is to clarify the linguistic mechanisms underlying the formation of such constructions, to classify their functional types, and to analyse their semantic and grammatical features from the perspective of the internal regularities of Armenian and its norms of lexical and syntactic combinability.

The analysis shows that, in numerous instances, the postposition depqum loses its primary conditional-situational meaning and assumes functions denoting the topic of discourse, thematic relevance, the singling out of a subject, attitude or evaluation, as well as the sphere or scope of application. These uses are conditioned by the class-based and semantic properties of the words combined with the postposition, including personal names, place names, names of material objects, and designations of physical entities, as well as by the combinatory possibilities of those units. As a result, the traditional boundaries of the combinability of depqum are violated, giving rise to semantic and grammatical incongruities.

The study also identifies a tendency towards the unification of syntactic relations, whereby thematic, relational, applicative, and spatial meanings are frequently expressed through one and the same construction. In this process, *depqum* gradually develops in media discourse into a multifunctional connective device, replacing a range of Armenian normative postpositions and prepositional equivalents such as *hamar* “for”, *nkatmamb* “with respect to”, *veraberyal* “concerning”, *masin* “about”, *het* “with”, and others.

The findings make it possible to interpret the use of *depqum* in such constructions as a manifestation of the functional and grammatical calquing of the Russian construction *v sluchae s*. The phenomenon is viewed as a systemic problem conditioned by translation influence, the study of which is important for maintaining the norms of official and media discourse, as well as for the editing of translated texts.

Keywords and phrases: media language, syntactic pattern, grammatical calque, limits of combinability, postpositional construction.

**УПОТРЕБЛЕНИЕ ПОСЛЕЛОГА «ԴԵՊՈՒՄ» В
СОВРЕМЕННОМ
АРМЯНСКОМ МЕДИАЗЫКЕ
НУНЕ ХАЧАТРЯН**

Институт языка им. Р. Ачаряна

Старший лаборант

Государственный университет им. В. Брюсова

К. ф. н., доцент

Khachatryan.nune.g@mail.ru

Аннотация

В статье рассматриваются ненормативные конструкции, образованные с армянским послелогом «*դեպքով*» в современной официальной и публицистической речи, в контексте влияния русской синтаксической конструкции «в случае с».

Цель исследования состоит в выявлении языковых механизмов формирования подобных конструкций, классификации их функциональных разновидностей, а также в анализе их семантико-грамматических особенностей с точки зрения внутренних закономерностей армянского языка и норм лексико-синтаксической сочетаемости.

Исследование показывает, что во многих примерах послелог «*դեպքով*» утрачивает свое исходное условно-ситуативное значение и начинает выполнять функции обозначения предмета речи, тематической соотнесенности, выделения субъекта, выражения отношения или оценки, а также указания на сферу или область применения. Подобные употребления обусловлены классовыми и семантическими характеристиками сочетающихся с ним слов, в частности имен собственных, топонимов, наименований материальных предметов и физических объектов, а также возможностями их синтаксического сочетания. В результате нарушаются традиционные пределы сочетаемости послелога «*դեպքով*», что приводит к семантической и грамматической несогласованности.

Отмечается также тенденция к унификации синтаксических отношений, при которой тематические, реляционные, аппликативные и пространственные значения нередко выражаются одной и той же конструкцией. Вследствие этого послелог «դեպքում» в языке средств массовой информации постепенно превращается в многофункциональное средство связи, замещающее ряд нормативных для армянского языка послелогов и предложно-послеложных соответствий: համար «для», նկատմամբ «по отношению к», վերաբերյալ «относительно», մասին «о», հետ «с» и др.

Полученные результаты позволяют рассматривать употребление послелога «դեպքում» в подобных конструкциях как проявление функционального и грамматического калькирования русской конструкции *в случае с*. Данное явление интерпретируется как системная проблема, обусловленная переводческим влиянием; его изучение имеет существенное значение для сохранения норм официальной и медиаречи, а также для редактирования переводных текстов.

Ключевые слова и словосочетания: медиаязык, синтаксический шаблон, грамматическое калькирование, пределы сочетаемости, послеложная конструкция.

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համեմատական-քերականական և լեզվաոճական վերլուծության մեթոդներ՝ հիմնված 2024-2026 թթ. հայաստանյան ավելի քան տասը լրատվամիջոցների և պաշտոնական հաղորդագրություններում հրապարակված տեքստերի վրա (վերլուծվել է շուրջ հարյուր օրինակ):

Ներածություն

Խոսքի ճշգրտության խնդիրը ժամանակակից լեզվաբանական հետազոտություններում դիտարկվում է որպես հաղորդակցման արդյունավետության և լեզվական նորմի պահպանման կարևոր պայման: Այն անմիջականորեն առնչվում է քերականական կառուցվածքների կանոնական գործածությանը, մասնավորապես՝ ձևաբանական և շարահյուսական միավորների համապատասխանությանը գրական լեզվի չափանիշներին:

Խոսքի ճշգրտությունը պայմանավորված է ոչ միայն առանձին լեզվական միավորների ճիշտ ընտրությամբ, այլև դրանց միջև ձևավորվող քերականական հարաբերությունների համապատասխանությամբ, քանի որ հենց այդ հարաբերություններն են ապահովում լեզվի համակարգային ամբողջականությունն ու ներդաշնակությունը:

Լեզվի քերականական համակարգը կարող է պայմանավորել տվյալ լեզվին բնորոշ մտածողության ձևերը և դրանց վերարտադրությունը

հաղորդակցության ընթացքում: Լ. Մ. Խաչատրյանի դիտարկմամբ՝ յուրաքանչյուր հասարակության լեզվամտածողություն պայմանավորված է տվյալ լեզվի քերականական կառուցվածքով [Djahukyan 1974: 46]: Հետևաբար լեզվական նորմից շեղումները կարող են անդրադառնալ ոչ միայն խոսքի կազմակերպման, այլև իմաստային հարաբերությունների արտահայտման եղանակների վրա:

Լեզվական նորմերի ձևավորման, տարածման և կայունացման գործընթացում առանձնահատուկ դեր ունի զանգվածային լրատվամիջոցների լեզուն՝ որպես հանրային հաղորդակցության առավել ազդեցիկ ոլորտներից մեկը: Մեդիատեքստերը ժամանակակից լեզվական միջավայրում լեզվի գործածության առավել տարածված ձևերից են, ինչի հետևանքով դրանցում հանդիպող լեզվական առանձնահատկությունները արագորեն շրջանառվում և ընդօրինակվում են լեզվական հանրության կողմից [Gazieva 2022: 159]:

Լրատվամիջոցներում լեզվական միավորների ընտրությունը հաճախ պայմանավորված է ոչ միայն հաղորդակցման նպատակներով, այլև տեղեկատվության արագ փոխանցման և լեզվի տնտեսման միտումների անհրաժեշտությամբ, որն էլ հաճախ նպաստում է պատրաստի շարահյուսական կաղապարների վերարտադրմանը: Մեդիալեզուն հանդես է գալիս կաղապարային կառույցների տարածման և կայունացման հիմնական միջավայր, որտեղ հաճախ վերարտադրվում են թարգմանական ճանապարհով ներթափանցած շարահյուսական կաղապարները:

Հրապարակախոսական լեզվում առանձնապես հաճախ են հանդիպում օտար լեզուների ազդեցությամբ ձևավորված կապային կառույցներ, որոնք, պահպանելով իրենց սկզբնական կառուցվածքային մոդելը, միշտ էլ, որ համապատասխանում են հայերենի ներքին քերականական և իմաստաբանական օրինաչափություններին: Այդպիսի կառույցների տարածման հետևանքով փոփոխվում են շարահյուսական հարաբերությունների արտահայտման եղանակները, ինչպես նաև լեզվական միջոցների գործառության սահմանները:

Այս համատեքստում հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում *դեպքում* կապով կազմված կապային կառույցների գործածությունը ժամանակակից հայերենի լրատվամիջոցների լեզվում: Ժամանակակից կիրառության մեջ *դեպքում* կապը հաճախ դուրս է գալիս իր հիմնա-

կան՝ պայմանաիրադրային հարաբերություն արտահայտող գործառու-
թային սահմաններից և ռուսերեն *в случае с* կառուցվածքի ազդեցությամբ
կիրառվում իրեն ոչ բնորոշ շարահյուսական միջավայրերում՝ արտահայ-
տելով թեմատիկ, վերաբերական, կիրառելիության և այլ հարաբերությո-
ւոններ:

Ռուսերենում *в случае с* կառուցվածքը կիրառվում է այնպիսի համա-
տեքստերում, որոնցում խոսքը վերաբերում է որևէ անձի, երկրի, կազմա-
կերպության կամ երևույթի քննարկմանը: Այն հաճախ հանդես է գալիս
թեմատիկ կամ համեմատական ենթատեքստում և կարող է կրել որոշակի
ոճական երանգ՝ չպարտադրելով խիստ պայմանական հարաբերություն:
Այդ պատճառով ռուսերենում տվյալ կառուցվածքն ունի գործառութային
ավելի լայն կիրառություն, քան հայերեն *դեպքում* կապը իր ավանդական
գործածության շրջանակում: Ռուսերեն կառուցվածքը հաճախ ուղղակի
վերարտադրվում է հայերենում՝ պահպանելով սկզբնական շարահյուսա-
կան մոդելը և գործառութային առանձնահատկությունները:

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել *դեպքում* կապով
կազմված կառույցների գործածությունը ժամանակակից հայերենի լրա-
տվամիջոցների լեզվում, բացահայտել դրանց կառուցվածքային և գործա-
ռութային առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծել ռուսերեն *в
случае с* կառուցվածքի ազդեցությամբ ձևավորված քերականական պատ-
ճենման դրսևորումները:

Դեպքում կապի գործածության ուսումնասիրությունը կարևոր է ոչ
միայն որպես առանձին լեզվական երևույթի քննություն, այլև որպես
լեզվական նորմի, քերականական համակարգի և լեզվամտածողության
փոխազդեցության ուսումնասիրության օրինակ: Այս հանգամանքը ընդ-
գծում է այն կարևորությունը, որ խոսքի ճշգրտության ապահովումը պա-
հանջում է կապային կառույցներում կապի քերականական գործառութի
հստակ գիտակցում՝ լեզվի ներքին համակարգի պահպանման և
հաղորդակցության արդյունավետության ապահովման համար:

Այս տեսանկյունից *դեպքում* կապի ոչ կանոնական գործածության
ուսումնասիրությունը կարող է նպաստել ժամանակակից հայերենի մե-
դիալեզվում քերականական պատճենումների առանձնահատկություն-
ների բացահայտմանը, ինչպես նաև լեզվական նորմի պահպանման և
գործառութային ճշգրտության խնդիրների առավել համակարգված
քննությանը:

Տեսական հիմքեր

Լեզվական շփումների պայմաններում օտար լեզվի ազդեցությամբ ձևավորված կաղապարային կառուցվածքների ներթափանցումը նպատակահարմար է դիտարկել որպես քերականական պատճենման դրսևորում: Քերականական պատճենումը մի լեզվի քերականական կառուցվածքների վերարտադրությունն է մեկ այլ լեզվում՝ հաճախ առանց դրանց իմաստային, գործառական և կառուցվածքային համարժեքության լիարժեք ապահովման: Այս երևույթը հատկապես ակնառու է կապային կառույցներում, որտեղ փոխառությունը հաճախ ընդգրկում է ոչ թե առանձին լեզվական միավորներ, այլ ամբողջական շարահյուսական կաղապարներ:

Կապերը, որպես բառային ինքնուրույն իմաստ չունեցող և հիմնականում քերականական հարաբերություններ արտահայտող սպասարկու միավորներ, իրենց իմաստը ձևավորում են տվյալ շարահյուսական միջավայրում՝ կապվող բառերի հետ փոխազդեցության արդյունքում: Չնայած կապերի արտահայտած տարբեր իմաստներին՝ բոլոր դեպքերում նրանց ունեցած դերը լեզվում միասնական է, այն է՝ արտահայտել ստորադասվող բառերի՝ գերադասների նկատմամբ ունեցած ամենատարբեր հարաբերություններ [Abrahamyan, Parnasyan, Ohanyan 1975: 469. Asatryan 1987: 39]:

Կապի իմաստային կախյալությունը հանգեցնում է նրան, որ թարգմանական գործընթացում այն հաճախ չի ենթարկվում առանձին իմաստային համապատասխանության, այլ վերարտադրվում է ամբողջ կապային կառույցի կազմում: Արդյունքում տեղի է ունենում ոչ թե առանձին տարրի, այլ ամբողջ շարահյուսական կաղապարի պատճենում:

Կապային կառույցների քերականական կաղապարի պատճենմանը նպաստում են մի շարք փոխկապակցված գործոններ: Առաջին՝ կապի իմաստային կախվածությունը շարահյուսական միջավայրից, ինչի հետևանքով այն դժվարությամբ է ենթարկվում ինքնուրույն փոխակերպման: Երկրորդ՝ կապի և նրա լրացման միջև առկա շարահյուսական սերտ առնչությունը, որի արդյունքում դրանք հաճախ ընկալվում են որպես միասնական կառուցվածք և վերարտադրվում ամբողջությամբ: Երրորդ՝ թարգմանական պրակտիկայում ձևավորված միտումը, երբ արդեն շրջանառության մեջ մտած կաղապարները շարունակաբար կիրառվում են՝ անկախ դրանց լեզվական հիմնավորվածությունից և հայերենի ներքին օրինաչափություններին համապատասխանելու աստիճանից: Չորրորդ՝

մեդիալեզվին բնորոշ կադապարայնությունը և լեզվի տնտեսման միտումները, որոնք խթանում են պատրաստի կառուցվածքների կիրառումը:

Այս գործոնների համադրության արդյունքում կապային կառույցները դառնում են օտար լեզվական ազդեցության առավել խոցելի և միաժամանակ արագ տարածվող դրսևորումներից մեկը:

Առանձնապես նկատելի է ռուսերենի շարահյուսական կադապարների ազդեցությունը, որի հետևանքով ձևավորվում են հայերենի ներքին օրինաչափություններին չհամապատասխանող կապային կառույցներ:

Այս ազդեցության արմատները պետք է փնտրել հայ-ռուսական երկլեզվության պատմական պայմաններում, հատկապես խորհրդային ժամանակաշրջանում, երբ պաշտոնական, գիտական և լրատվամիջոցների լեզուն հաճախ զարգանում էր ռուսերենից թարգմանությունների միջոցով: Շարահյուսական կադապարները համակարգված կերպով ներթափանցում են հայերեն՝ սկզբում թարգմանական, ապա ինքնուրույն գործածության միջոցով: Թեև հետխորհրդային տարիներին հայերենի դիրքերն ամրապնդվել են, շարահյուսական պատճենումների ազդեցությունը շարունակում է պահպանվել հատկապես մեդիա և պաշտոնական հաղորդակցության ոլորտներում:

Կապային կառույցների քերականական պատճենումները միայն լեզվական արտահայտչամիջոցի խնդիրը չեն: Դրանք հայերենի մտածողության մեջ ներմուծում են օտար լեզվին բնորոշ տրամաբանական և հաղորդակցական կառուցվածքներ: Անհարիր են մեր ազգային լեզվամտածողությանը, խարխլում են լեզվի քերականական կառուցվածքը [Avetisyan, Nersesyan, Gevorgyan, Gabrielyan 2021: 247]: Սա ընդգծում է խնդրի խորքային բնույթը, որը չի սահմանափակվում միայն բառապաշարային փոխառություններով, այլ նաև ներառում է հայերենի շարահյուսական և գործառական-ոճական համակարգերը:

Արդյունքներ

Ժամանակակից լեզվաբանության մեջ կապերի գործածությունը դիտարկվում է դրանց իմաստային և շարահյուսական զուգորդելիության շրջանակում, որը պայմանավորված է տվյալ լեզվի քերականական համակարգում ձևավորված օրինաչափություններով: Կապերի զուգորդելիության սահմանների փոփոխությունը կարող է հանգեցնել դրանց գործառույթի տեղաշարժի և հայերենին ոչ բնորոշ իմաստային հարաբերությունների արտահայտման:

Հայերենում *դեպքում* կապը սովորաբար բնութագրվում է որպես պայմանաիրադրային հարաբերություն արտահայտող լեզվական միավոր: Այն սովորաբար կապակցվում է անորոշ դերբայի, երբեմն բայանունների և այլ ոչ նյութական միավորների հետ՝ արտահայտելով պայմանի հարաբերություն [Khač'atryan 2021: 331]:

Լեզվական նյութի քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենի հրապարակախոսական ոճում *դեպքում* կապը հաճախ գործածվում է իր ավանդական գործառությանին սահմաններից դուրս՝ ռուսերեն *в случае с* կառուցվածքի ազդեցությամբ՝ արտահայտելով իմաստային այլ հարաբերություններ:

Դեպքում կապով կազմված կառույցների քննությունը հիմնվում է դրանց իմաստաբանական և գործառությանին հատկանիշների վրա: Կառույցների դասակարգման հիմքում դրվել է կապի հետ զուգորդվող միավորների իմաստային բնույթը: Այս տեսանկյունից առանձնացվում են երկու հիմնական կառուցվածքային տիպեր՝ անձնանիշ միավոր + *դեպքում* («в случае с + кем»), իրանիշ միավոր + *դեպքում* («в случае с + чем»): Նման դասակարգումը հնարավորություն է տալիս համակարգված դիտարկելու կապի գործառությանին տեղաշարժերը՝ կախված այն միավորների իմաստային առանձնահատկություններից, որոնց հետ այն զուգորդվում է ժամանակակից գործածության մեջ:

1. Անձնանիշ միավոր + *դեպքում*

Ժամանակակից հայերենի հրապարակախոսական լեզվում այս կառուցվածքը դրսևորվում է երկու ձևաբանական ենթատիպով՝

ա) անձնանուն (հատուկ և հասարակ գոյական) + *դեպքում*, բ) անձնական դերանուն + *դեպքում*:

Չնայած ձևաբանական տարբերություններին՝ նշված ենթատիպերը ցուցաբերում են գործառությանին ընդհանրություններ, ուստի դիտարկվում են մեկ վերլուծական խմբի շրջանակում:

Դիտարկենք հետևյալ օրինակները. «Մեր աղբյուրների փոխանցմամբ, քրեական գործն այս նախկին ոստիկանների նկատմամբ հարուցվելու է նույն հոդվածով, ինչ *Սաշա Աֆյանի դեպքում...*» (mamul.am, 26.02.2026): Այստեղ *դեպքում* կապի գործառույթը կիրառված մոտեցման կամ վերաբերմունքի հարաբերության արտահայտումն է, իսկ հայերենին առավել բնորոշ և իմաստային առումով հստակ տարբերակը Սաշա Աֆ-

յանի նկատմամբ ձևակերպումն է. «...անդառնալի հետևանքներ են ունենում, ինչպես եղավ Փարաքարի համայնքապետ *Վալոդյա Գրիգորյանի դեպքում*» (mamul.am, 03.10.25): Գործառույթ՝ առնչական հարաբերություն → Վալոդյա Գրիգորյանի հետ. «*Վազգենի դեպքում* վաղուց ամեն ինչ ասված է» (mamul.am, 23.02.2026թ.): Գործառույթ՝ խոսքի թեմայի մատնանշում → Վազգենի վերաբերյալ / մասին:

Նմանատիպ գործածություններ հանդիպում են հասարակ անձնանիշ գոյականների հետ:

«*Նախարարների, վարչապետների դեպքում* կարգապահական պատասխանատվությունը, կարծում ենք, ճիշտ չի լինի» (aravot.am, 29.10.2025) → նախարարների, վարչապետների նկատմամբ.

«Օրենքի առաջ բոլորը պետք է հավասար լինեն, և նույն մոտեցումը պետք է կիրառվի նաև *պարզամավորի դեպքում*» (mamul.am., 20.02.2026) → պարզամավորի նկատմամբ:

«Մեկ ամիս առաջ նման սցենար իրականացվեց Մասիսի *համայնքապետի դեպքում*» (tert.am., 12.06.2025) → համայնքապետի նկատմամբ.

«*Վարչապետի դեպքում* կարգապահական պատասխանատվություն կիրառելը ճիշտ չի լինի» (aravot.am, 29.10.2025) → վարչապետի նկատմամբ:

Վերջին օրինակներում *դեպքում* կապը հիմնականում արտահայտում է կիրառելիության, վերաբերմունքի կամ ներգործության հարաբերություն և գործառութային առումով կարող է փոխարինվել *նկատմամբ* կապով:

Նույն երևույթը դրսևորվում է նաև անձնական դերանունների հետ գործածության մեջ. «...ինչը *քո դեպքում* լուսին թռչելու պես մի բան է» (168.am, 12.08.2025). «Եթե այսպես կարելի է, ինչո՞ւ դա հնարավոր չէ *մեր դեպքում*» (aravot.am 24.11.2025). «*Մեր դեպքում* ամենակարևորը Չինաստանի ակնհայտ ազդեցությունն է Ռուսաստանի վրա» (mamul.am, 08.12.2025): Գործառույթ՝ գնահատման կամ հնարավորության վերաբերմունքային իմաստ → քեզ համար, մեզ համար. «*Իմ դեպքում* ես սիրում եմ լավ ցնցուղ ընդունել, խնամել իմ գեղեցիկ մազերը» (168.am, 10.04.2025): «Սահմանադրական իրավունքի իրացումն *իմ դեպքում* ո՞վ պիտի ապահովի՝ ոստիկանությունը, թե՞ մեկ ուրիշ մարմին» (168.am, 29.07.2025):

Իմ դեպքում կապակցությունը գործառութային առումով ավելորդ է: Նախադասությունը կարող է ձևակերպվել առանց այդ կառուցվածքի:

Այսպիսի գործածությունները վկայում են, որ այն նման համատեքստերում վերածվում է կաղապարի և գործածվում է ոչ թե քերականական անհրաժեշտությամբ, այլ կառուցվածքային ընդօրինակման հետևանքով:

Նման գործածություններում անձնանիշ միավորները ներկայացվում են ոչ թե որպես գործողության կրող կամ մասնակից, այլ որպես պայմանական հենակետ, ինչի հետևանքով *դեպքում* կապը հեռանում է իր ավանդական պայմանական նշանակությունից: Արդյունքում ձևավորվում են կառուցվածքներ, որոնցում ձևաբանական համադրությունը չի համապատասխանում բաղադրիչների իմաստային զուգորդելիությանը:

Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, *դեպքում*-ը նախատեսված է վերացական հասկացությունների հետ զուգորդվելու համար և հայերենում հիմնականում զուգորդվում է ոչ անձնանիշ բաղադրիչների հետ [Djahukyan 1974: 326]:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ անձնանիշ միավորների հետ գործածվելիս *այս* կապը հաճախ մատնանշում է խոսքի թեման կամ արտահայտում վերաբերմունքային, կիրառելիության և առնչական հարաբերություններ: Այդպիսի համատեքստերում այն սկսում է հանդես գալ որպես բազմագործառույթ կապակցող միջոց՝ փոխարինելով *համար*, *նկատմամբ*, *վերաբերյալ*, *մասին*, *հետ* և այլ կապերի:

Արդյունքում անձնանիշ միավորների հետ *դեպքում* կապի զուգորդումը առաջացնում է իմաստաբանական անհամատեղելիություն, ինչն էլ հանգեցնում է կապի իմաստի աղճատման:

2. Իրանիշ միավոր + դեպքում

Այս խմբում ներառվում են տեղանունները, ֆիզիկական օբյեկտներ և նյութական առարկաներ անվանող բառախմբերը, որոնք միավորվում են ընդհանուր իմաստային հատկանիշով՝ արտահայտելով կոնկրետ առարկայական նշանակություն: Միևնույն ժամանակ տվյալ միավորները տարբերվում են իրենց իմաստային ենթադաշտերով և գործառութային առանձնահատկություններով: Ուստի դրանց զուգորդելիության քննությունը նպատակահարմար է իրականացնել ըստ ենթակաղապարների:

2.1. Տեղանուն + դեպքում

Նման կառույցները հատկապես հանդիպում են վերլուծական մեկնաբանություններում, միջազգային հարաբերություններին վերաբերող հրապարակումներում և պաշտոնական հաղորդագրություններում:

Դիտարկենք հետևյալ օրինակները. «Արևմտյան Ադրբեջան» անվանումը չի կարող օգտագործվել *Հայաստանի դեպքում*» (168.am, 27.06.2025): Գործառույթը՝ թեմատիկ կամ վերաբերական իմաստ: Հնարավոր փոխարինումներն են՝ Հայաստանի վերաբերյալ (շեշտադրում է խոսքի թեման) կամ Հայաստանի համար (ընդգծում է կիրառման կամ հասցեատիրության դաշտը): «Օդային հարձակումների միջոցով իշխանափոխություն կատարելու տարբերակը չի աշխատում գրեթե ոչ մի տեղ, առավել ևս՝ *Իրանի դեպքում*» (mamul.am/news, 05.03.2026): Գործառույթը՝ կիրառելիության կամ առնչական իմաստ: Հնարավոր փոխարինումներն են՝ Իրանի համար (ընդգծում է ներգործության թիրախը), Իրանում (տեղայնացնում է գործողությունը), Իրանի նկատմամբ (շեշտադրում է տվյալ մեթոդի կիրառելիությունը կամ արդյունավետությունը տվյալ երկրի նկատմամբ): «Հայաստանի դեպքում խնդիրը արտաքին միջամտության սպառնալիքը չէ, այլ ներքին՝ քաղաքական լեգիտիմության ճգնաժամը» (mamul.am.news, 26.02.2026): Գործառույթը՝ թեմատիկ կամ գնահատողական իմաստ: Հնարավոր փոխարինումներն են՝ Հայաստանի համար (ընդգծում է խնդրի բնույթը տվյալ երկրի տեսանկյունից), Հայաստանում (տեղայնացնում է խնդիրը ներքին իրավիճակի շրջանակում), Հայաստանի խնդիրը (ուղղակի թեմատիկ ձևակերպում՝ առանց «դեպքում» բաղադրիչի):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղանունների հետ *դեպքում* կապի գործածության ժամանակ վերջինս հեռանում է իր հիմնական՝ պայմանաիրադրային նշանակությունից և սկսում արտահայտել թեմատիկ, վերաբերական կամ կիրառելիության հարաբերություններ: Այդպիսի համատեքստերում կապը փոխարինում է հայերենին բնորոշ այլ միջոցների՝ *համար, նկատմամբ, վերաբերյալ, մասին*, ինչպես նաև տարածական հարաբերություն արտահայտող -ում ձևին:

Այս բազմագործառութային կիրառությունը, սակայն, հաճախ հանգեցնում է իմաստային երկիմաստության և արտահայտության անորոշության: Նման կառույցներում խախտվում են *դեպքում* կապի ավանդական զուգորդելիության սահմանները, ինչի հետևանքով թուլանում է հայերենին բնորոշ իմաստային հարաբերությունների տարբերակված արտահայտումը:

2.2. Նյութական առարկա անվանող միավոր + *դեպքում*

Դիտարկենք հետևյալ օրինակները. «Այն կկիրառվի վարպետների ձեռքով պատրաստված ոսկյա և արծաթյա *արտադրատեսակների դեպքում*» (mamul.am, 04.12.2025): Գործառույթը՝ վերաբերություն կամ կիրառելիություն → արտադրատեսակների համար: «4-րդ կարգի *ցորենի դեպքում* ինքնարժեքը 50–60 դրամ է» (mamul.am, 16.11.2025): Կամ՝ «Ուսումնասիրում է քաղաքացիներին պատկանող զենքերի փաստաթղթերը և անգամ օրինական հիմքով ձեռք բերված *զենքերի դեպքում* պահանջում է դրանք հանձնել...» (mamul.am., 16.12.2025):

Գործառույթը՝ խոսքի առարկայի մատնանշում:

Այս նախադասություններում *դեպքում*-ը գործառութային անհրաժեշտություն չունի, քանի որ միտքը կարող է արտահայտվել ավելի բնական և կառուցվածքային առումով հստակ ձևերով՝ *ցորենի ինքնարժեքը, ձեռք բերված զենքերը պահանջում է հանձնել*:

Գ. Զահուկյանը նշում է, որ *դեպքում* կապը իմաստային առումով չի զուգակցվում նյութական առարկա ցույց տվող բառերի հետ [տե՛ս Djahukyan 1974: 329, աղյուսակ 14]: Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, որ նյութական առարկաներ նշանակող միավորների հետ *այս* կապի գործածությունը հանգեցնում է իմաստաբանական անհամապատասխանության, քանի որ կապի պայմանաիրադրային նշանակությունը չի համադրվում առարկայական իմաստ ունեցող բաղադրիչների հետ: Այդպիսի կառույցներում *դեպքում* կապը սկսում է արտահայտել կիրառման, դասակարգման կամ թեմատիկ վերաբերության հարաբերություններ, որոնց համար հայերենում առկա են ավելի հստակ և ներհամակարգային միջոցներ՝ *համար, վերաբերյալ, մասին* և այլն:

2.3. Ֆիզիկական օբյեկտ անվանող միավոր + *դեպքում*

Դիտարկենք հետևյալ օրինակները: «Նույնիսկ Յեղասպանության *հուշահամալիրի դեպքում*՝ գալիս, փնթի գործ են անում, մինչև աղմուկ չի լինում» (24 news.am, 09.09.2025): Հնարավոր փոխարինումներն են՝ *հուշահամալիրի հարցում* (թեմատիկ կամ առնչական իմաստ), *հուշահամալիրում* (տարածական հարաբերություն): «Մինչև 500 անձի համար նախատեսված *սրահի դեպքում* մեկ մասնակցի արժեքը սկսվում է 27 հազար դրամից»: Հնարավոր փոխարինումներն են՝ *սրահի համար* (ընդգծվում է կիրառման կամ հաշվարկի շրջանակը) կամ *սրահում* (տարածական հարաբերություն): «Հարցվածների 62%-ը բարձր է գնահատել բանակի դերը, *Եկեղեցու դեպքում* շուրջ 60% է» (24 news.am, 26.08.2025): *Դեպքում*-ը

տվյալ համատեքստում գործառությանն անհրաժեշտություն չունի, քանի որ առանց կապի գործածության միտքը կարող է արտահայտվել ավելի հստակ և բնական:

Վերոնշյալ օրինակներում *դեպքում* կապը հանդես է գալիս որպես թեմատիկ կամ կիրառման ոլորտ սահմանող բաղադրիչ՝ փոխարինելով հայերենին բնորոշ միջոցների՝ համար, հարցում, ինչպես նաև տարածական հարաբերություն արտահայտող -ում ձևի գործածությանը: Ֆիզիկական օբյեկտ նշանակող միավորների հետ դեպքում կապի համադրումը առաջացնում է իմաստաբանական ու շարահյուսական անհամապատասխանություն:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հարաբերությունները, որոնք ժամանակակից մեդիալեզվում հաճախ արտահայտվում են *դեպքում* կապով՝ անձնանիշ, տեղանուն, նյութական առարկա և ֆիզիկական օբյեկտ նշանակող միավորների հետ, հայերենում ունեն ներհամակարգային, իմաստային առումով ավելի հստակ և կառուցվածքային առումով ավելի բնական արտահայտման միջոցներ:

Այդ միջոցները հնարավորություն են տալիս տարբերակված կերպով արտահայտելու տարածական, թեմատիկ, վերաբերական, առնչական և կիրառելիության հարաբերությունները՝ խոսափելով դրանց միաձուլումից մեկ ընդհանրացված կառուցվածքի շրջանակում: Ի տարբերություն դրանց՝ *դեպքում* կապի ոչ նորմատիվ գործածությունը հաճախ հանգեցնում է իմաստային երկիմաստության և արտահայտության անորոշության:

Այս գործընթացը առաջացնում է մի շարք լեզվաբանական հետևանքներ: Նախ՝ թուլանում է հայերենին բնորոշ իմաստային հարաբերությունների տարբերակված արտահայտումը, ապա՝ նկատվում է շարահյուսական հարաբերությունների միօրինակացման միտում, որի արդյունքում տարբեր գործառույթներ իրականացնող լեզվական միջոցներ փոխարինվում են մեկ ընդհանրացված կառուցվածքով:

Այսպիսով՝ *դեպքում* կապը սկսում է սերել ոչ միայն առանձին իմաստային հարաբերություններ, այլև օտար լեզվին բնորոշ ամբողջական շարահյուսական կաղապարներ՝ առանց դրանց անհրաժեշտ իմաստային և գործառության հարմարեցման: Այս գործընթացը հիմնականում պայմանավորված է ռուսերեն *в случае с* կառուցվածքի ազդեցությամբ և դրա քերականական ու գործառության պատճենմամբ հայերենում: Հայերենի

նորմատիվ համակարգի տեսանկյունից նման կառույցները գնահատվում են որպես ոչ կանոնական գործածություններ, քանի որ չեն համապատասխանում *դեպքում* կապի իմաստային և շարահյուսական գործառույթներին:

Եզրակացություն

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենի լրատվամիջոցների լեզվում «դեպքում» կապի գործածությունը հաճախ շեղվում է իր նորմատիվ իմաստաբանական և շարահյուսական գործառույթներից՝ ձեռք բերելով հայերենին ոչ բնորոշ կիրառություններ: Վերլուծությունը վկայում է, որ այս կապով կազմված բազմաթիվ կառույցներ պայմանավորված են ոուսերեն «в случае с» կաղապարի ազդեցությամբ և ներկայացնում են դրա քերականական ու գործառութային պատճենումը հայերենում:

Կառուցվածքային տիպերի քննությունը ցույց է տալիս, որ տարբեր իմաստային խմբերում «դեպքում» կապը ստանձնում է տարբեր գործառույթներ. անձնանիշ միավորների հետ այն հանդես է գալիս որպես սուբյեկտի առանձնացման և նրա վերաբերյալ ասույթի կազմակերպման միջոց, իրանիշ միավորների հետ՝ որպես խոսքի թեմատիկ, կիրառման կամ դասակարգման շրջանակ նշող բաղադրիչ:

Այս գործընթացի հետևանքով «դեպքում» կապը մեղիալեզվում աստիճանաբար վերածվում է բազմագործառութ սպասարկու միավորի՝ փոխարինելով հայերենում ընդունված տարբեր կապերի և կապակցությունների (համար, նկատմամբ, վերաբերյալ, մասին, հետ և այլն): Արդյունքում տարբեր իմաստային հարաբերություններ արտահայտվում են մեկ ընդհանուր կաղապարի միջոցով, ինչը նվազեցնում է լեզվական տարբերակվածությունն ու իմաստային ճշգրտությունը:

Նման գործածությունները չեն համապատասխանում հայերենի ներքին իմաստաբանական և շարահյուսական օրինաչափություններին: Նախ՝ առաջանում է իմաստաբանական անհամապատասխանություն, քանի որ «դեպքում» կապը, պահպանելով պայմանական իմաստային երանգը, զուգորդվում է անփոփոխ կամ կոնկրետ առարկայական նշանակություն ունեցող միավորների հետ: Երկրորդ՝ նկատվում է շարահյուսական անհամապատասխանություն, քանի որ «դեպքում» կապը սովորաբար ենթադրում է իրավիճակ կամ պայման արտահայտող բաղադրիչ,

մինչդեռ տվյալ կառույցներում այդ դիրքում հաճախ հանդես են գալիս միայն անվանական միավորներ:

«Դեպքում» կապի ոչ նորմատիվ գործածությունը թարգմանական ազդեցությամբ պայմանավորված համակարգային երևույթ է, որը կարող է անդրադառնալ հայերենի կառուցվածքային առանձնահատկությունների, արտահայտչական հնարավորությունների և լեզվամտածողության վրա: Այդ պատճառով կարևոր է լրատվամիջոցների լեզվում խթանել հայերենին բնորոշ համարժեք կառուցվածքների գիտակցված կիրառությունը, ինչը կնպաստի լեզվական ճշգրտության և իմաստային հստակության պահպանմանը: Ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տվյալ լեզվական երևույթի նկարագրության, այլև ժամանակակից հայերենի մեդիալեզվի զարգացման միտումների բացահայտման տեսանկյունից:

Գրականություն

[1] Abrahamyan S. G., Arakelyan V. D., Qosyan V. A. *Hayots lezu, 2-rd mas* [Armenian Language, Part 2]. Yerevan: Luys hratarakchutyun, 1975.

[2] Asatryan M. E. *Zhamanakakits hayots lezu. Sharahyusutyun* [Modern Armenian Language: Syntax]. Yerevan: Yerevani Hamalsarani Hratarakchutyun, 1987.

[3] Avetisyan Yu. S. et al. *Hayots lezu ev khostsi mshakuyt* [Armenian Language and Speech Culture]. Yerevan: Yerevani Hamalsarani Hratarakchutyun, 2021.

[4] Gazieva D. M. *Yazyk SMI v funktsional'no-stilisticheskoy aspekte* [The Language of Mass Media in the Functional-Stylistic Aspect]. Nauchnyy vestnik FerGU, 2022, 4: 195.

[5] Jahukyan G. B. *Zhamanakakits hayereni tesutyun himunqner* [Foundations of the Theory of Modern Armenian]. Yerevan: HSSH GA hratarakchutyun, 1974.

[6] Khachatryan L. M. *Lezvabanakan terminineri usumnakan bararan* [Educational Dictionary of Linguistic Terms]. Yerevan: HH GAA Gitutyun hrat., 2021.

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Մ. ՍԻՄԵՈՆՅԱՆԻ «ԱՆԳԼԵՐԵՆ – ՀԱՅԵՐԵՆ» ԲԱՌԱՐԱՆՈՒՄ*
ՎԱՆՈՒՀԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Կրտսեր գիտաշխատող

vanuhi.baghramyan94@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-85

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Մ. Սիմեոնյանի՝ Մադրասում լույս տեսած «Փոքրիկ բառագիր Անգղիացուց լեզուէ՝ թարգմանեալ ի հայ բարբառ» (1803 թ.) անգլերեն-հայերեն բառարանի բառապաշարային համակողմանի քննությանը։ Աշխատանքում առաջին անգլերեն-հայերեն բառարանի օրինակով վերլուծվում են թարգմանական լեզվի՝ հայերենի որակական և կառուցվածքային հատկանիշները։ Պատմական համատեքստի համառոտ ներկայացումից հետո հիմնական ուշադրությունը սևեռվում է բառարանում առկա լեզվական տարբերակայնության դրսևորումներին, ուղղագրական անկանոնություններին և թեմատիկ խմբերին։ Առանձնահատուկ քննության է ենթարկվում բառարանի բարբառային հարուստ շերտը և ժողովրդախոսակցական հոմանիշների գործածությունը։ Հին և Նոր հայկազյան բառարանների հետ համեմատական վերլուծությամբ բացահայտվում են Մ. Սիմեոնյանի տերմինաստեղծական և նորաբանական ջանքերը։ Ցույց է տրվում աշխատության յուրօրինակ արժեքը հայ բառարանագրության անցումային փուլում։

Բանալի բառեր և բառակապակցություններ. հայ բառարանագրության պատմություն, անգլերեն-հայերեն բառարան, լեզվական տարբերակայնություն, բարբառային բառաշերտ, նորաբանություններ, տերմինաստեղծում։

* Ներկայացվել է՝ 23. 02. 2026 թ., գրախոսվել է՝ 17. 03. 2026 թ.:

**PECULIARITIES OF ARMENIAN LEXICON IN M. SIMEONEAN'S
“ENGLISH–ARMENIAN” DICTIONARY
VANUHI BAGHRAMYAN**

Institute of Language after H. Acharyan,
Junior researcher
vanuhi.baghramyan94@gmail.com

Abstract

The article is devoted to a comprehensive lexical analysis of M. Simonyan's English-Armenian dictionary, “*Small Dictionary from the English Language, Translated into the Armenian Dialect*” (Madras, 1803). Using the example of the first English-Armenian dictionary, the study analyzes the qualitative and structural features of the target language—Armenian. Following a brief presentation of the historical context, the primary focus shifts to the manifestations of linguistic variability, orthographic irregularities, and thematic groups present in the dictionary. The rich dialectal layer of the dictionary and the use of vernacular synonyms undergo special examination. Through a comparative analysis with the Old and New Haigazian dictionaries, M. Simonyan's terminological and neological efforts (morphological, derivational, and semantic coinages, particularly in the realm of rhetorical terms) are highlighted. The unique value of this work during the transitional phase of Armenian lexicography is demonstrated.

Keywords and phrases. History of Armenian lexicography, English-Armenian dictionary, linguistic variability, dialectal layer, neologisms, terminology creation.

**ОСОБЕННОСТИ АРМЯНСКОЙ ЛЕКСИКИ
В “АНГЛО–АРМЯНСКОМ” СЛОВАРЕ М. СИМЕОНЫНА
ВАНУИ БАГРАМЯНА**

Институт языка им. Р. Ачаряна
Младший научный сотрудник
vanuhi.baghramyan94@gmail.com

Аннотация

Статья посвящена всестороннему лексическому анализу англо-армянского словаря М. Симеоняна «Краткий словарь английского языка, переведенный на армянское наречие» (Мадрас, 1803 г.). На примере первого англо-армянского словаря в работе анализируются качественные и структурные особенности языка перевода — армянского. После краткого изложения исторического контекста основное внимание уделяется проявлениям языковой вариативности, орфографическим нерегулярностям и тематическим группам, представленным в словаре. Особому исследованию подвергается богатый диалектный пласт словаря и использование народно-разговорных синонимов. Посредством сравнительного анализа со «Старым» и «Новым» словарями Айказян выявляются терминотворческие и неологические усилия М. Симеоняна (морфологические, деривационные и семантические новообразования, в частности, в

сфере риторических терминов). Показана уникальная ценность данного труда на переходном этапе армянской лексикографии.

Ключевые слова и словосочетания: История армянской лексикографии, англо-армянский словарь, языковая вариативность, диалектный пласт, неологизмы, терминотворчество.

Ներածություն

Հայ-անգլիական առնչությունները սկզբնավորվել են դեռևս 12-13-րդ դարերում՝ Կիլիկյան Հայաստանում խաչակրաց արշավանքների շրջանում: Այս հարաբերություններն առավել սերտացան XVII դարի վերջին քառորդին՝ անգլիական տիրապետության տակ գտնվող Հնդկաստանում [Ačaryan 2002: 745–752]: Իսկ XVIII դարի սկզբից հնդկահայ գաղութում անգլիացիների հետ կապերը դարձան ակնառու. հարուստ ընտանիքներն անգլիացիներին հրավիրում էին որպես տնային ուսուցիչներ [Barkhudaryan et al. 2003: 126, 128]:

XVIII դարի երկրորդ կեսին այդ երկրի (Հնդկաստանի) մի շարք քաղաքներում՝ մասնավորապես Մադրասում և Կալկաթայում, ստեղծվում են բավական սովոր թվով հայկական գաղութներ, որոնց հիմնադիրներն էին գերազանցապես Նոր Զուղայի հայերը՝ պարսկական ճնշումներից ու հալածանքներից փրկություն փնտրող [Babayan 1963: 18]: Այս շրջանում հայերեն պարբերականներում անդրադարձներ են եղել Անգլիային, նրա անցուդարձին, գիտությանը և մշակույթին ընդհանրապես, հայոց լեզվով գրվել են անգլերենի ուսումնական ձեռնարկներ, կազմվել բառարաններ, արվել են թարգմանություններ:

19-րդ դարի անգլերեն-հայերեն առաջին բառարանը Մ. Սիմեոնյանի հեղինակած «Փոքրիկ բառագիր Անգլիացուց լեզուէ՝ թարգմանեալ ի հայ բարբառ» [Սիմեոնյան 1803] աշխատությունն է՝ տպագրված 1803 թ. Մադրասում (Ի տպարանի Տէր Յարութին Շմաւոնեան Շիրազեցոյ: Աշխատասիրութեամբ Պետրոս Յովհաննիսեան):

Ժամանակի ընթացքում հայերենում շրջանառվել են անգլերենի անվանման մի շարք տարբերակներ, որոնցից հնագույններից է բառարանի վերնագրում հանդիպող «Անգլիացուց լեզու» ձևը: Այս բառակապակցությունը համապատասխանում է դեռևս V դարից ավանդված լեզվանվանական այն սովորական կաղապարին, որը ձևավորվում էր «Ժողովրդի անվան հոգնակի սեռական հոլովածն + լեզու» կառուցվածքով [Abeghyan 1936: 123]:

Քանի որ հնդկահայ այդ գաղութում պետական լեզուն անգլերենն էր, և բազմաթիվ հայեր ցանկություն ունեին սովորելու այդ լեզուն, սակայն շատ բառերի բացատրություններ անհասկանալի էին, հետևաբար պահանջվեց երկլեզվյան (անգլերեն-հայերեն կամ հայերեն-անգլերեն) բառարանի ստեղծում: Այսպիսով՝ աշխատությունը հետապնդում էր գործնական նպատակ և ըստ հեղինակի՝ ծառայելու էր իբրև «գրուցատրություն»: Սույն հետազոտության նպատակն է արժևորել Մ. Սիմեոնյանի բառարանը պատմալեզվաբանական և բառարանագրական տեսանկյունից՝ անդրադառնալով լեզվական տարբերակայնությանը, բարբառային բառաշերտին և տերմինաստեղծման փորձերին:

Տեսամեթոդական հիմքեր. 19-րդ դարը հայ բառարանագրության պատմության մեջ բնութագրվում է որպես անցումային և բեկումնային փուլ: Ինչպես նշում է Վ. Համբարձումյանը. «.... 19-րդ դ. մի կողմից ստեղծվում են ոչ միայն հայերենի բառապաշարն ինքնին ընդգրկող, այլև անգլերենին, ֆրանսերենին, ռուսերենին, պարսկերենին, վրացերենին, թուրքերենին առնչվող բազմաթիվ բառարաններ, մյուս կողմից՝ ավելի բազմազան է դառնում նման բառարանների բովանդակությունը՝ լեզվական նյութի ծավալի տեսանկյունից» [Hambardzumyan 2015: 19]:

Տեսական կարևոր հենք է լեզվական տարբերակայնության գաղափարը: Տարբերակայնությունը պայմանավորված է լեզվի էությամբ, խոսքային յուրաքանչյուր դրսևորման դեպքում անհատական դրոշմ կրելու յուրահատկությամբ: Միաժամանակ լեզվի կենդանի գործածության ընթացքում լեզվակիրների ֆիզիկական, մտավոր, հոգևոր սեռատարիքային և այլ հատկանիշների հետ տարբերակվածության ու բազմաձևությունների առաջացմանը նպաստում են նաև լեզվական հանրության տարածական որոշակի անմիասնականությունը, լեզվի զարգացման տարաբնույթ գործընթացները, ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ներքին ու արտաքին լեզվական ազդեցությունները և այլն [Katvalyan 2014: 23, 24]:

Սույն աշխատանքում Մ. Սիմեոնյանի բառարանային նյութը քննվում և համադրվում է հայ բառարանագրության հիմնարար կոթողների՝ Հին հայկազյան բառարանի («Բառգիրք հայկազեան լեզուի», 1749–1769 [Բառգիրք հայկազեան լեզուի 1749–1769]) և հետագայում լույս տեսած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (1836–1837. (ՆԲՀ) տվյալների հետ,

ինչը հնարավորություն է տալիս հստակեցնելու հեղինակի նորաբանությունների և տերմինաբանական նորակազմությունների ինքնուրույնության աստիճանը:

Ուսումնասիրության մեթոդներ. հետազոտությունն իրականացվել է համեմատական, նկարագրական և բառարանագրական վերլուծության մեթոդների համակցմամբ: Ուսումնասիրության նյութը քաղված է Մ. Սիմեոնյանի բառարանի շուրջ 5000 բառահոդվածներից:

Մեթոդաբանության առանցքն է բառարանի թարգմանական լեզվի (հայերենի) որակական և կառուցվածքային հատկանիշների համեմատական քննությունը գրաբարի ավանդված նորմերի և բարբառային շերտերի հետ: Բարբառային բառերի տեղայնացումն ու ստուգումը կատարվել է ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի «Հայոց լեզվի բարբառային բառարանի» [Hayots lezvi barbarayin bararan (HLBB) 2001] և Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» [Aghayan 1976] տվյալների հիման վրա: Հեղինակի կողմից կիրառված շղատառ ձևավորումները դիտարկվել են որպես ոճական ու լեզվական տարբերակման հատուկ մեթոդական հնար:

Արդյունքներ

Բառարանը պարունակում է շուրջ 5000 բառահոդված:

Հեղինակը ներկայացնում է կրոնական նշանակության բառերի օրինակներ՝ *աստված, սուրբ հոգի, սուրբ Հիսուս Քրիստոս, փրկիչ, ազատիչ, դրախտ, սուրբ երրորդություն* և այլն (38 միավոր):

Կրոնական բառերին հաջորդում են սովորական բառերի ցանկեր՝ ըստ թեմաների: Օրինակ՝ «Յաղագս պտղոց և պտղատու ծառոց» բաժնում տրված են *արմաւենի, նարինջ, վարդախնձոր, թուօ, ձիթենի, կիտրոն, կիտրոնենի, դեղձ, դեղձենի, բալ, նուշ, շոր, շորենի, նուռ, նռնենի* և այս թեմայի հետ կապված մի շարք բառահոդվածներ: Առանձին թեմաներ են նաև «Յաղագս ատուրց շաբաթու», որ, ենթադրելի է, պարունակում է 7 բառ, «Յաղագս տարերաց»՝ 4 բառ, «Յաղագս աստեղաց»՝ 35 բառ, «Յաղագս ժամանակի»՝ 32 բառ և այլն:

Այբբենական հաջորդականությամբ բառերի շարքը սկսվում է 68 էջից: Բառերի հոմանիշներն իրարից առանձնանում են ստորակետով, *ևս*

բառով, իրարից տարբեր իմաստները՝ միջակետով: Բառարանի այբբենական մասին հաջորդում են հավելվածներ, որոնք ևս այբբենական հաջորդականությամբ են դասավորված:

Քանի որ բառարանը գործնական նպատակ ուներ, և ինչպես հեղինակն է նշում, բառարանագրական փորձ չի ունեցել, հետևաբար այն չէր կարող զերծ չլինել որոշ թերություններից¹:

Այսպես, որոշ բառեր տարբեր բառահոդվածներում գրված են տարբեր ուղղագրությամբ: Այսպես՝ The lip բառը **շուրթն** թարգմանությանը զուգահեռ ունի «պոնչուկ» ձևը, սակայն նույն էջում The upper-lip վերին շուրթն կամ The under-lip ստորին շուրթն բառահոդվածներում «պոնչուք» բառը գրված է *ք*-ով:

Step-son, Step-daughter բառերի թարգմանություններում *խորթ* բառը գրված է *դ*-ով, որը ուղղագրական սխալ է, և դրանով անգամ բառիմաստն է փոխվում (*խորդ* բառը հայերենում նշանակում է ճանապարհին դուրս ցցված քար, խոչ, խութ): Ուղղագրական նույն սխալը կա նաև Step-father և step-mother բառահոդվածներում: Ի դեպ, վերջին բառերի թարգմանություններում ևս անկանոնություն կա. *step-father* բառը թարգմանված է *խորդ խէր*, այսինքն՝ հարադիր ձևով, սակայն հաջորդ բառահոդվածում *step-mother* բառը թարգմանված է որպես բարդ բառ՝ *խորդմէր* (*խորդ խէր*, *խորդմէր* բառերը ներկայացված են որպես խոսակցական բառեր):

Անգլերեն *maker* բաղադրիչը մի դեպքում թարգմանված է *-շէն*, մեկ այլ բառահոդվածում՝ *-կազմ*. «Paper-maker *թղթաշէն*» (ի դեպ, այս բառը չենք գտնում որևէ բառարանում, ենթադրվում է՝ եղել է նորակազմություն) և «Watch-maker *ժամակազմ*»:

Բառարանում հիմնականում պահպանված է դասական ուղղագրությունը, սակայն, օրինակ, որոշ ամսանուններ ժամանակակից հայերենի ուղղագրությամբ են: Օրինակ՝ *յունվար*, *փետրվար*. Նման բոլոր դեպքերում բառերը գրված են ոչ թե *վ*-ով, այլ *ու*-ով:

Բառերի բացատրությունները տրված են գրաբարով, թեև այս մոտեցումը միշտ չէ, որ պահված է: Երբեմն որպես գրական ձև են ներկայացված գավառական, բարբառային բառերը: Բերենք հետևյալ օրինակները.

¹ Հեղինակն ինքն է վկայում, որ թեև արժանի չէ այս գործին, սակայն ուժերի կարողության չափ ձեռնարկում է լեզվագիտական այդ փոքրիկ աշխատանքը:

Քունջ (The corner of the eye Քունջ Աջքի աղբուր).գվռ.անկյուն [Aghayan 1976: 1581]:

Թաթպան (Glove Թաթպան). թաթման բառի տարբերակն է, որ հանդիպում է Ար., (Լ.), Վն.բարբառներում [HLBB 2001: 412]:

Սանտր (Comb Սանտր).*Սանդր* ուղղագրական տարբերակի հետ գործածվում է Թբ.Ղրբ. (Գնծ.), Մշ., Սս., Վն. բարբառներում [HLBB 2001: 266]:

Անթ (Armpit or Armhole Անթ Կռնատակ). ըստ ԼԻ բարբառային բառարանի՝ հանդիպում է Պլ., Վն., Տրպ., Օնթ., Ակն.բարբառներում [HLBB 2001: 58]:

Տարի (Year Ամ *Տարի*). բառը ներկայացված է շղատառ, ինչը նշանակում է, որ հեղինակը այն համարել է խոսակցական, գուցե բարբառային բառ:

Բառերի գրաբարյան գրական բացատրությունների կողքին երբեմն տրվում են ժողովրդախոսակցական, բարբառային, օտար բառերով հոմանիշ ձևերը, որոնք հեղինակը առանձնացրել է շղատառերով:

Չանա (The jaw Ծնօտ Չանէք). բառը հանդիպում է Ար., Թբ., ՆԲ, Ղրբ., Հվր., Շմխ, Կրճ., Ուրմ., ՆՆ, Կր., Ալշ., Վն, Մկս. բարբառներում [ՀԼԲԲ 2001: 377]: Բառահոդվածի անգլերեն մասում բառը եզակի է, հայերեն թարգմանությունը՝ հոգնակի. գրված է ոչ թե *չանա*, այլ *չանէք*:

Դամաղ (The palate, or room of the mouth Քիմք Դամաղ). բառը հանդիպում է Ար., Թբ., Ղրբ Հվր., Շմխ., Կր., Մշ., Սս բարբառներում [HLBB 2001: 303]:

Եալ (Mane Բաշ *Եալ*). բառը հանդիպում է Ար., ՆԲ, Ղրբ., Գնծ., Հվր., Ուրմ., ՆՆ, Կրն., Հմշ. բարբառներում [HLBB 2001: 100]:

Խառապ (Carpenter Հիւն *Խառապ*). բառը հանդիպում է Ար. և Ղրբ. բարբառներում [HLBB 2001: 290]:

Սահաթ (Hour Ժամ *Սահաթ*). բառի ժամ գրական թարգմանության հետ կա նաև սահաթ բառը, որը հանդիպում է Թբ., Ղրբ. (Հդր., Բրչ.), Պլ. (Պրտ.) ՆՆ, Եվդ. (Ամս.), Կր. (Ձվխ.), Հմշ. Վն. բարբառներում [HLBB 2001: 252]:

Վիժումն (Mifcarriage Վիժումն *անցուցք*).բառի հետ կա բարբառային «անցուցք»-ը, որը հանդիպում է Ապր., Ար., Կր., Սս. բարբառներում [HLBBn 2001: 69]:

Շիր (Tyger) բառը թարգմանված է վագր, շղատառերով նշված է նաև շիր, որ որպես գավառական բառ նշանակում է առյուծ [Aghayan 1976: 1109]:

Լղար (Lean նիհար *Լղար*). վերջինս ժողովրդախոսակցական բառ է, հեղինակը այն առանձնացրել է շղատառերով [Aghayan 1976: 533]:

Լալ (Dumb Համր *Լալ*). ժողովրդախոսակցական ոճի բառ է [Aghayan 1976: 511]:

Տալմեթ. ժողովրդախոսակցական բառ է, որը Midwife բառի թարգմանությունն է Ծնուցիչ բառի հետ [Aghayan 1976: 1411]: Վերջինս հնացած ձև է:

Մինուֆ. Minute բառը թարգմանված է թուփ, որպես հոմանիշ գրված է նաև *Մինուֆ*, որը հանդիպում է ԼԻ-ի բարբառային բառարանում [HLBB 2001: 57]: Թբ. ՆՆ Կր. բարբառներում հանդիպում է այդ արմատից կազմված Մինուֆին բառը, որը նշանակում է իսկույն ևեթ, անմիջապես, մի րոպեում:

Խալկոր (Oldman Ծեր, խալկոր). բառարանում շղատառ է, ենթադրվում է, որ Սասունի բարբառով է: Հալկոր, հըլկոր ձևերով հանդիպում է Ղրբ. բարբառում [HLBB 2001: 229]

Սառուց (Froft Սառն սառուց). ԼԻ-ի բարբառային բառարանում [ՀԼԲԲ 2001: 271] ներկայացված է Արարատյան *սառուծ* հնչյունական տարբերակին զուգահեռ:

Էլօր (The day after tomorrow Միսում ավուր էլօր). հանդիպում է Ար., Թբ. բարբառներում [ՀԼԲԲ 2001: 13]: Ղրբ. բարբառում կիրառվում է **ալօր** բառին համարժեք: Վերջինս Համշենի բարբառում նշանակում է *մեկ այլ օր* [HLBB 2001: 19]:

Պուլիկ (Dwarf Գաճաճ պուլիկ). ունի մի շարք նշանակություններ, ինչպես 1.1-4 տարեկան երեխա (Կր. (Ջվխ.), Հմշ., Արբ.), 2. ընտանի թռչունի ձագ Կր. (Ջվխ.), 3. Ճկույթ ՆՆ, 4. Պլ. Սիրուբիր խաղի մեջ փոքր փայտը, որին հարվածում են մեծ փայտով, չիլիկ: Միայն 5-րդ իմաստով Թբ. բարբառում փոխաբերական իմաստով նշանակում է «կարճահասակ»՝ գործածվելով որպես մականուն [HLBB 2001: 135]:

Կուռն (The arm Բազուկ Կուռն). հանդիպում է Ղզխ., Թբ., ՆՋ. Շիր. բարբառներում [HLBB 2001: 213]:

Կոնապակ (Armpit or Armhole Անթ Կոնատակ). հանդիպում է Ար., Գնձ., Կքվ.բարբառներում [HLBB 2001: 172]:

Բառարանում տեղ գտած բարբառային այս լայն ընդգրկումը և հեղինակի կողմից դրանք շղատառերով առանձնացնելը թույլ են տալիս եզրակացնել, որ Մ. Սիմեոնյանը գիտակցաբար է կիրառել լեզվական տարբերակայնության սկզբունքը: «Սա հատկապես կարևորվում է 1803 թ. բառարանի և հետագայում լույս տեսած հիմնարար «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (1836–1837) (ՆԲՀ) համեմատական քննության համատեքստում:

Չնայած բառարանում թարգմանությունները հիմնականում մեկ բառով են կամ հոմանիշներով, սակայն երբեմն հանդիպում են թարգմանություններ՝ բացատրական ձևով: Ենթադրվում է, որ այդ ժամանակ նշված բառերի հայերեն համարժեք տարբերակները Մադրասում այդքան էլ կիրառելի չեն եղել: Օրինակներ՝ Midnight Մէջ գիշեր, Monday Երկու շաբաթ, Tuesday Երեք շաբաթ, Wednesday Չորեք շաբաթ, Thursday Հինգ շաբաթ, Christmass Ծնունդ Տեառն, Mankind Ազգ մարդկան, The foreteeth Առաջին ատամն, Pin Գնձիկ ասեղն, Beaf Միս արջառոյ *Կովի միս*, Bedlam Ձնտան մոլեգնից և այլն:

Մ. Սիմեոնյանի բառարանի բառաշերտի ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը տերմինաստեղծական աշխատանքում կիրառել է բառակազմական տարբեր եղանակներ: Ձևաբանորեն ու իմաստային տեսանկյունից առանձին ուշադրության են արժանի հոետորական հնարների հայերեն համարժեքները, որոնք ՆԲՀ-ում ամրագրված չեն, ինչն ինքնին ցայտուն փաստ է հեղինակի ինքնուրույն տերմինաստեղծ ջանքերի առումով:

Անդրադարձություն (anagram) և *անուանաստեղծություն* (onomatopoeia) բառերը չկան ինչպես «Հին հայկազյան բառարանում» (ՀՀԲ. հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769) [հմմտ. Գասպարյան 1968: 514]), այնպես էլ «Նոր հայկազյան բառարանում» [ՆՀԲ. հհ. 1-2, Վենետիկ, 1836–1837], որը թույլ է տալիս դրանք դասելու բառային նորակազմությունների շարքին, և որոնց ծագման ու հետագա ճակատագրի ուսումնասիրությունն առանձին քննության առարկա կարող է դառնալ:

Տարբեր պատկեր է ներկայացնում «Ստասացություն» (lying) բառը. *ստասաց* արմատ-հիմքն արձանագրված է ՀՀԲ-ում՝ իբրև գոյական, սակայն *-ություն* ածանցով ձևը՝ *ստասացություն*, ՆԲՀ-ում բացակայում է, ըստ այդմ կարելի է համարել նորակազմություն:

Հետաքրքիր է *զանցառություն* (Paralepsis) տերմինը. *զանց*- արմատը և *զանց առնել* «անտեսել, բաց թողնել» հայադրությունը կապակցությունը ՀՀԲ-ում ին հայկազյանում ամրագրված են, սակայն «զանցառություն» ձևն ՆԲՀ-ում բացակայում է տվյալ հոետորական իմաստով: Paralepsis-ը, որն արտահայտում է «կարևոր բանն անուղղակիորեն, կարծես անտեսելով այն ասելու» հնարը, Սիմեոնյանի թարգմանության մեջ ստացել է իր հայերեն համարժեքը հենց «անտեսել, բաց թողնել» իմաստախմբից: Հետևաբար *զանցառություն*-ը ձևաբանորեն հայտնի արմատից կազմված բառ է. ժառանգված արմատին հաղորդվել է մասնագիտական-տերմինային նոր գործառույթ, որը, ըստ էության, բնութագրվում է իմաստային նորաբանությամբ:

Եզրակացություններ

Մ. Սիմեոնյանի աշխատությունը ցույց է տալիս, որ XIX դարի սկզբին հայերենը, հենվելով գրաբարի ավանդույթների վրա, արդեն իսկ միտված էր լեզվական նոր շերտերի ու մասնագիտական հասկացությունների յուրացմանը:

Թեև բառարանում մասնագիտական տերմինների ընդգրկումը սահմանափակ է, սակայն վերը նշված եզակի օրինակները թույլ են տալիս նկատել հեղինակի որոշակի հակումը՝ արձագանքելու ժամանակի գիտակրթական պահանջներին: Այս միավորները պետք է դիտարկվեն ոչ թե որպես վերջնականապես ձևավորված համակարգ, այլ որպես տերմինաստեղծման առանձին փորձերի դրսևորում, ինչը բառարանին յուրօրինակ գիտական արժեք է հաղորդում հայ բառարանագրության անցումային փուլում:

Այդ բառարանը պատմալեզվաբանական և բառարանագրական հարուստ նյութ է պարունակում, որի լիակատար արժևորումը մեկ հետազոտության շրջանակում հնարավոր չէ իրականացնել: Սույն հոդվածով մեր նպատակն է անդրադառնալ միայն մի քանի առանցքային հարցերի՝ լեզվական տարբերակայնությանը, բարբառային բառաշերտին և հեղինակային տերմինաստեղծման որոշ դրսևորումների, որոնք առավել ցայտուն են արտահայտում աշխատության լեզվական պատկերը: Բառարանում առկա վերլուծության արժանի բազմաթիվ այլ շերտեր դուրս են մնացել այս ուսումնասիրության շրջանակից և կարող են հիմք հանդիսանալ հետագա առանձին քննությունների համար:

Գրականության ցանկ

- [1] Abeghyan M. Grabari k'erakanut'yun [Grammar of Classical Armenian]. Yerevan: State Publishing House, 1936.
- [2] Acharyan H. Hay gaght'akanut'yan patmut'yun [History of the Armenian Diaspora]. Yerevan: Yerevan State University Publishing House, 2002.
- [3] Aghayan Ė. Ardi hayereni bats'atrakan bararan [Explanatory Dictionary of Modern Armenian], vol. 2. Yerevan: Hayastan, 1976.
- [4] Asmangulyan H., Hovhannisyan M. Angleren-hayeren bararan [English-Armenian Dictionary]. Yerevan: Luys, 1984.
- [5] Avgerian M. et al. Nor bargirk' haykazean lezvi [New Dictionary of the Armenian Language]. Vol. 1–2. Venice: San Lazzaro, 1836–1837.
- [6] Babayan A. Hay girk'ë ev tpagrut'yunë [The Armenian Book and Printing]. Yerevan: Haypethrat, 1963.
- [7] Barkhudaryan V. et al. (eds.) Hay gaght'ashkharhi patmut'yun (mijnadaryts' michev 1920 t'.) [History of the Armenian Diaspora (From the Middle Ages to 1920)], vol. 2, Asiai ev Ap'rikayi haykakan gaght'ojakhner. Yerevan: NAS RA "Gitut'yun" Publishing House, 2003.
- [8] Bargirk' haykazean lezvi [Dictionary of the Armenian Language]. Vol. 1–2. Venice: San Lazzaro, 1749–1769.
- [9] Chakmakjian H. Comprehensive Dictionary English-Armenian. Boston: E.A. Yeran, 1922.
- [10] Gasparyan G. Hay bararanagrut'yan patmut'yun [History of Armenian Lexicography]. Yerevan: Mitq, 1968.
- [11] Hambardzumyan V. Aknarkner hay bararanagrut'yan patmut'yun [Essays on the History of Armenian Lexicography]. Yerevan: NAS RA "Gitut'yun" Publishing House, 2015.
- [12] Hayots' lezvi barbarayin bararan [Dialectal Dictionary of the Armenian Language]. Yerevan: LI (Language Institute), 2001.
- [13] Katvalyan V. Hay barbaragitut'yan harts'er [Issues of Armenian Dialectology]. Yerevan: Hayastan, 2014.
- [14] Simeonean M. P'ok'rik baragirk' Angghiats'vots' lezvë t'argmanean i hay barbar [A Small Dictionary of the English Language Translated into the Armenian Dialect]. Madras: Harutyun Shmavonyan Press, 1803.

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ*
ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Գիտաշխատող

Բրյուսովի անվան պետական համալսարան

Բ. գ. թ., դոցենտ

ghazarian.hasmik@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-96

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ժամանակակից հայերենում և անգլերենում գոյականի թվի քերականական իմաստի դրսևորումների զուգադրական-տիպաբանական քննությանը:

Հետազոտության նպատակն է նյութի քննությամբ բացահայտել երկու լեզուներում թվի քերականական իմաստի արտահայտության ձևաբանական, իմաստաբանական և գործառական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են *նկարագրական, վերլուծական, զուգադրական և տիպաբանական մեթոդները*: Առանձին դեպքերում հանդես է բերվել *պարամիամետրական մոդելում*՝ թվակարգի արտահայտության միջոցների ծագումնաբանությունը մեկնաբանելու նպատակով:

Ուսումնասիրվել են թվի քերականական իմաստի արտահայտության ձևերը, հոգնակիակազմության միջոցները, ինչպես նաև անհոգնական, անեզական և հավաքական գոյականների յուրահատկությունները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում հոգնակիության իմաստն արտահայտվում է հիմնականում համակարգային և ոչ համակարգային մասնիկներով (*գեղ-գեղեր, ուսուցիչ-ուսուցիչներ, մարդ-մարդիկ, կին-կանայք, անձ-անձինք*), մինչդեռ անգլերենում, բացի մասնիկավորումից (*boy-boys, bus-buses*), պահպանվել են նաև ներքին թեքմամբ (*man-men, mouse-mice*), զրո ձևությամբ (*sheep-sheep*), տարարմատությամբ (*person-people*) և այլ անկանոն ձևերով արտահայտվող թվակարգային տարբերակներ: Զրո ձևությամբ կազմությունների դեպքում եզակի-հոգնակի հակադրության տարբերակումը կատարվում է համատեքստում, քանի որ ձևային հակադրությունը բացակայում է:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ չնայած հնդեվրոպական ծագմանը՝ դիտարկվող լեզուները թվի քերականական իմաստի և ընդհանրապես

* Ներկայացվել է՝ 30. 03. 2026 թ., գրախոսվել է՝ 22. 04. 2026 թ.:

թվակարգի արտահայտության միջոցների առումով ձևավորել են տարբեր համակարգեր՝ պայմանավորված պատմական զարգացման առանձնահատկություններով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. քերականական կարգ, քերականական իմաստ, եզակի թիվ, հոգնակի թիվ, մասնիկավորում, ներքին թեքում, անեզական գոյականներ, անհոգնական գոյականներ, հավաքական գոյականներ, զուգադրական-տիպաբանական մեթոդ:

THE MANIFESTATION OF THE GRAMMATICAL MEANING OF NOUN NUMBER IN MODERN ARMENIAN AND ENGLISH HASMIK GHAZARYAN

Institute of language
Brusov State University
Associate Professor, Department of Armenian Studies
ghazarian.hasmik@gmail.com

Abstract

The article is devoted to a comparative-typological study of the manifestations of the grammatical meaning of noun number in Modern Armenian and English.

The aim of the study is to identify, through the analysis of linguistic data, the morphological, semantic, and functional features of the expression of grammatical meaning of number in the two languages, as well as their similarities and differences.

Descriptive, analytical, contrastive, and typological methods were applied in the course of the research. In certain cases, a historical-comparative approach has been used to interpret the origin and development of the means expressing grammatical number.

The study investigates the forms of expressing the grammatical meaning of number, the means of plural formation, as well as the characteristics of pluralia tantum, singularia tantum, and collective nouns.

The analysis shows that in Modern Armenian the meaning of plurality is expressed mainly by means of regular and irregular affixes (*գետ-գետեր, ունուցիչ-ունուցիչներ, մարդ-մարդիկ, կին-կանայք, անձ-անձինք*), whereas in English, in addition to affixation (*boy-boys, bus-buses*), number distinctions are also expressed through internal inflection (*man-men, mouse-mice*), the zero morpheme (*sheep-sheep*), suppletion (*person-people*), and other irregular forms. In constructions involving a zero morpheme, the distinction between singular and plural is determined from the context, since no formal opposition is present.

The results of the research indicate that despite their Indo-European origin, the languages under consideration have developed different systems for expressing the grammatical meaning and category of number in general, conditioned by the peculiarities of their historical development.

Keywords and phrases: grammatical category of number, grammatical meaning, singular number, plural number, affixation, internal inflection, pluralia tantum, singularia tantum, collective nouns, comparative-typological method.

ПРОЯВЛЕНИЯ ГРАММАТИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ ЧИСЛА ИМЕНИ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

АСМИК ГАЗАРЯН

Институт языка им. Р. Ачаряна

К. ф. н.

Брюсовский государственного университета
ghazarian.hasmik@gmail.com

Аннотация

Статья посвящена сопоставительно-типологическому исследованию проявлений грамматического значения числа существительного в современном армянском и английском языках.

Цель исследования заключается в выявлении морфологических, семантических и функциональных особенностей выражения грамматического значения числа в двух языках, а также их общих черт и различий на основе анализа языкового материала.

В ходе исследования были применены описательный, аналитический, сопоставительный и типологический методы. В отдельных случаях использовался историко-сравнительный подход с целью интерпретации происхождения средств выражения категории числа.

Изучены формы выражения грамматического значения числа, способы образования множественного числа, а также особенности существительных, употребляющихся только во множественном числе, только в единственном числе, и собирательных существительных.

Анализ показывает, что в современном армянском языке значение множественности выражается главным образом посредством регулярных и нерегулярных аффиксов (*գին-գիներ, քանդիկ-քանդիկներ, ձիեր-ձիերիկ, կիկ-կիկիք, անձ-անձիկ*), тогда как в английском языке, помимо аффиксации (*boy-boys, bus-buses*), сохраняются также способы выражения числа посредством внутренней флексии (*man-men, mouse-mice*), нулевой морфемы (*sheep-sheep*), супплетивизма (*person-people*) и других нерегулярных форм. В случаях образования форм с нулевой морфемой различие противопоставления единственного и множественного числа осуществляется в контексте, поскольку формальное противопоставление отсутствует.

Результаты исследования свидетельствуют о том, что, несмотря на общее индоевропейское происхождение, рассматриваемые языки сформировали различные системы выражения грамматического значения и категории числа в целом, что обусловлено особенностями их исторического развития.

Ключевые слова и словосочетания: грамматическая категория числа, грамматическое значение, единственное число, множественное число, *аффиксация*, внутренняя флексия, существительные, употребляющиеся только во множественном числе, существительные, употребляющиеся только в единственном числе, собирательные существительные, сопоставительный-типологический метод.

Ներածություն

Լեզուների զուգադրական-տիպաբանական ուսումնասիրությունները լեզվաբանության կարևոր ուղղություններից են, քանի որ հնարավորություն են տալիս բացահայտելու տարբեր լեզուների կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները ինչպես ձևաբանական, այնպես էլ իմաստաբանական և գործառական մակարդակներում:

Ժամանակակից հայերենը և անգլերենը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի տարբեր ճյուղերի՝ համապատասխանաբար հայկական և գերմանական (արևմտագերմանական ենթաճյուղ): Ընդհանուր ծագումնաբանական հիմքի առկայությունը և հետագա պատմական տարբեր զարգացումները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և զուգադրելու երկու լեզուներում պահպանված ու վերափոխված քերականական երևույթները:

Սույն հոդվածի *հետազոտության առարկան* ժամանակակից հայերենի և անգլերենի գոյականների թվի քերականական իմաստն է, իսկ *ուսումնասիրության նյութը*՝ այդ իմաստի արտահայտման միջոցները:

Ուսումնասիրության *նպատակն* է ժամանակակից հայերենի և անգլերենի թվի քերականական իմաստի և ընդհանրապես թվակարգի հակադրության եզրերի արտահայտության միջոցների զուգադրությամբ ցույց տալ արտահայտության և բովանդակության դիտվածքներում (պլաններում) ունեցած տարբերություններն ու ընդհանրությունները և կատարել տիպաբանական եզրահանգումներ:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից հայերենի և անգլերենի թվի քերականական իմաստի արտահայտության միջոցները համադրվում են ոչ միայն ձևաբանական, այլև տիպաբանական և ձևաիմաստային մակարդակներում:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմել են թվի քերականական իմաստի և արտահայտության միջոցների վերաբերյալ հայ և օտար լեզվաբանների տեսական դրույթները, ինչպես նաև զուգադրական լեզվաբանության, տիպաբանական ուսումնասիրությունների և ձևաբանական վերլուծության սկզբունքները: Որպես լեզվական զուգադրման հիմունք ընտրվել է հայերենը՝ դիտարկվելով որպես համեմատության չափանիշ, իսկ հատկանշային զուգադրման հիմունք ընտրվել է թվի քերականական իմաստը:

Աշխատանքը հիմնվում է քերականական իմաստի և դրա արտահայտության միջոցների փոխհարաբերության, լեզվական համակարգերի համեմատական ուսումնասիրության, ինչպես նաև հնդեվրոպական լեզուների պատմահամեմատական զարգացման վերաբերյալ տեսական դրույթների վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. *նկարագրական մեթոդ*՝ հայերենի և անգլերենի գոյականների թվակարգային ձևերի և այդ ոլորտից դուրս մնացած բառերի քերականական իմաստի ներկայացման համար,

2. *վերլուծական մեթոդ*՝ թվի քերականական իմաստի արտահայտման միջոցների մեկնաբանման նպատակով,

3. *զուգահեռական մեթոդ*՝ երկու լեզուների ընդհանրությունների և տարբերությունների բացահայտման նպատակով,

4. *տիպաբանական մեթոդ*՝ լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների համադրման նպատակով:

Առանձին դեպքերում կիրառվել է *պատմահամեմատական մոտեցում*՝ թվի քերականական իմաստի և արտահայտության միջոցների ծագումնաբանությունը մեկնաբանելու նպատակով:

Հետազոտության *տեսական* արժեքն այն է, որ համալրում է զուգահեռական լեզվաբանության և ձևաբանության վերաբերյալ գիտական պատկերացումները: *Գործնական* արժեքը պայմանավորված է նրանով, որ ստացված արդյունքները կարող են կիրառվել ժամանակակից գրական հայերենի և անգլերենի ուսուցման, թարգմանության, ինչպես նաև քերականական և մեթոդական նյութերի մշակման գործընթացում:

Հոդվածում թվի քերականական կարգ ունեցող գոյականները՝ անեզական, անհոգնական և հավաքական գոյականները կներկայացվեն առանձին ենթաբաժիններով:

Թվի քերականական կարգի դրսևորումները

Գոյականի թվի քերականական կարգն արտահայտում է առարկաների քանակական հարաբերությունը և հիմնականում բնորոշ է հաշվելի գոյականներին: Այն ներառում է եզակիության և հոգնակիության հակադրությունը, որոնք տարբեր լեզուներում դրսևորվում են տարբեր ձևաբանական ու գործառական միջոցներով: Գոյականի թվի կարգի առանձնահատկությունն այն է, որ դրսևորվում է բառի բոլոր կիրառություններում՝ ինչպես խոսքի մեջ, այնպես էլ խոսքից դուրս:

Թվի քերականական կարգը լեզվական համընդհանուր (ունիվերսալ) կարգերից է, որը տարբեր ձևերով առկա է աշխարհի լեզուների մեծ մասում: «Դա բացատրվում է նրանով, որ առարկաների քանակային հարաբերության հայեցակետը անհրաժեշտ տարր է իրականության ընկալման և դատողության ձևավորման մեջ: Հասկացական ամեն մի կարգ քերականական արտահայտության կարիք չունի: Սակայն թվի իմացական կարգը քերականական արտահայտություն ունի թեկուզ և օժանդակ բառերի գործածությամբ: Ահա թե ինչու թվակարգը լեզուներում համեմատաբար մեծ տարածում գտած կարգերից է» [Petrosyan 1972: 3]:

Քերականական թվի ձևավորումը սովորաբար կապվում է քանակական հարաբերությունների ճանաչման և հաշվելու ունակության զարգացման հետ: Այն ենթադրում է միատեսակ առարկաների տարբերակում՝ ըստ քանակական հատկանիշի, որն էլ տարբեր լեզուներում արտահայտվում է հակադրության տարբեր եզրերով: Ժամանակակից լեզուների մեծ մասում թվի քերականական կարգն արտահայտվում է երկեզր հակադրությամբ՝ *եզակի-հոգնակի*: Սակայն կան լեզուներ, որոնցում թվակարգն արտահայտվում է եռեզր հակադրությամբ՝ *եզակի-երկակի-հոգնակի* (հին հունարեն, հին հնդկերեն, արաբերեն): Որոշ լեզուներում հանդիպում են նաև ավելի բարդ հակադրություններ՝ *եզակի-երկակի-եռակի-քառակի-հոգնակի* (միկրոնեզյան լեզուներ) [Aghayan 1987: 490]:

Թվի քերականական կարգը, ունենալով գրեթե համընդհանուր իմաստային հիմք, տարբեր լեզուներում տարբեր կերպ է արտահայտվում: Որոշ լեզուներում այն արտահայտվում է քանակ ցույց տվող բառերով՝ առանց գոյականի ձևային փոփոխության (դասական տիբեթերեն), որոշ լեզուներում՝ ներքին թեքմամբ (անգլերեն, արաբերեն), այլ լեզուներում՝ օժանդակ բառերով (չինարեն), բառի կամ դրա մի մասի կրկնությամբ (ճապոներեն) կամ հատուկ վերջավորություններով (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Այս բոլոր միջոցները ծառայում են նույն նպատակին՝ արտահայտելու առարկաների քանակային հարաբերությունը [Aghayan 1987: 489]:

Հայերենն ու անգլերենը, ունենալով հնդեվրոպական ընդհանուր ծագում, պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են կառուցվածքային էական փոփոխությունների՝ միաժամանակ պահպանելով նախալեզվյան որոշ առանձնահատկություններ: Ինչպես նշվում է՝ «Հնդեվրոպական լեզուն ունեցել է որոշակի թեքական-համադրական կառուցվածք.

մեկ վերջավորությունն ի վիճակի է եղել արտահայտելու մեկից ավելի քերականական-կարգային իմաստներ, եզակին, երկակին և հոգնակին միևնույն իմաստների արտահայտության համար ունեցել են տարբեր վերջավորություններ, հաճախակի տեղի է ունեցել հիմքի և վերջավորության սահմանային տարրերի ձուլում (ֆուզիա): Սակայն քերականական զանազան մասնիկների գործածությունը առաջացրել է կցականության և վերլուծականության տարրեր, որոնք հետագայում զգալի զարգացում են ապրել առանձին հնդեվրոպական լեզուներում» [5, էջ 40]:

Նախահնդեվրոպական լեզվում թվի կարգը ներկայացված է եղել եզակի-երկակի-հոգնակի հակադրությամբ, իսկ այդ հակադրության իմաստներն արտահայտվել են տարբեր համադրական վերջավորություններով [Djahukyan 1969: 10]:

Զուգադրվող լեզուները չեն պահպանել նախալեզվին բնորոշ թվակարգային եռանդամ համակարգը և այն արտահայտող համադրական ձևերը: Ժամանակակից հայերենում և անգլերենում թվակարգը ներկայանում է եզակի-հոգնակի հակադրությամբ՝ յուրաքանչյուր լեզվին հատուկ արտահայտության միջոցներով: Եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա կամ երևույթ, հոգնակին՝ մեկից ավելի առարկաներ:

Ժամանակակից հայերենում և անգլերենում, ի տարբերություն նախալեզվի, եզակի թիվը որևէ կադապարում չունի, նշույթավորված չէ, հոգնակին հակադրվում է զրո վերջավորությամբ: Հոգնակին, ընդհակառակը, նշույթավորված է և արտահայտվում է հատուկ թվանիշ ձևությամբ, անգլերենում՝ նաև թեքմամբ: Այդ պատճառով թվակարգի ձևավորումը հիմնականում դրսևորվում է որպես հոգնակիակազմություն [Petrosyan 1987: 229]:

Զրո վերջավորության և հոգնակերտ վերջավորությունների հակադրությունը առաջին հերթին ծառայում է բովանդակության միաթվության (եզակիության) և անմիաթվության (հոգնակիության) հակադրության արտահայտմանը: Սակայն որոշ դեպքերում լեզուներում գոյականի եզակի թիվը, մեկ առանձին առարկա ցույց տալուց բացի, կարող է ցույց տալ նաև առարկան որպես տեսակ: Հմմտ.՝ *Մարդն ամենաբանական արարածն է: Դու ճանաչում ես այդ մարդուն: // The whale is a mammal. Do you know that teacher?* Եզակի որոշ կիրառություններում էլ եզակի-հոգնակի հակադրությունը չեզոքանում է, և եզակի ձևը կարող է արտահայտել՝

ա. անորոշ հոգնակիություն՝ *Նա ամեն օր թերթ է գնում: / He takes a bus to work every day.*

բ. հավաքականության իմաստ՝ *Թշնամուց պետք է զգույշ մնալ: / The enemy never sleeps.*

Իր հերթին հոգնակի թիվը, բացի բուն հոգնակիության իմաստից, որոշ դեպքերում կարող է գործածվել անորոշ եզակիի իմաստով: Օրինակ՝ *Նա դատապարտվեց օրենքների խախտման համար: / He was fined for violating safety regulations.*

Թվի կարգի ձևային արտահայտությունը, ինչպես նշվեց վերևում, հիմնականում կատարվում է հոգնակի թվի ձևավորումով, որի միջոցները ստորև կներկայացվեն՝ ըստ դիտարկվող լեզուների:

Ժամանակակից հայերենում հոգնակին կազմվում է *-եր*, *-ներ* համակարգային *և -իկ*, *-այք*, *-ք* ոչ համակարգային մենիմաստ մասնիկներով: Դրանք կարող են կցվել ինչպես անհնչյունափոխ (մաքուր) հիմքերին՝ *քաղաք-քաղաքներ*, *երեխա-երեխաներ*, *մարդ-մարդիկ*, այնպես էլ հնչյունափոխված (ձևավոր) հիմքերին՝ *գիր-գրեր*, *ջուր-ջրեր*, *կին-կանայք* (*ի/(ը)*, *ու/(ը)*, *ի/(ա)*): Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, «Հնչյունափոխությունները այս դեպքում ինքնուրույն իմաստային ծանրաբեռնվածություն չունեն, այլ ավելցուկային միջոցներ են՝ պայմանավորված հնչյունական և պատմական որոշ պայմաններով: Վերջիններս ոչ այլ ինչ են, եթե ոչ թվանիշ հիմքերի կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր» [Djahukyan 1969: 142]:

Անշուշտ, լեզվում ոչ բոլոր հիմքակազմ տարրերը կամ ձևավոր հիմքերը կարող են թվային զուգորդություններ կազմել բերված վերջավորությունների հետ, քանի որ դրանց գործածությունը ենթարկվում է ձևաբանական և դիրքային սահմանափակությունների: Հետևաբար վերոնշյալ հոգնակերտ վերջավորությունները հանդիպում են միայն որոշակի կառուցվածքային տիպի հիմքերի հետ:

Հարց է, թե ինչով են պայմանավորված տվյալ վերջավորությունների գործածության առանձնահատկությունները, կամ ձևավոր հիմքերի ինչպիսի տիպերի հետ են հանդես գալիս այդ վերջավորությունները:

Մենիմաստ *-եր* և *-ներ* հոգնակերտ մասնիկների բաշխումը հիմնականում պայմանավորված է հիմքի վանկաքանակությամբ. միավանկ բառերը սովորաբար ստանում են *-եր*, բազմավանկ բառերը՝ *-ներ*: Օրինակ՝ *ծով-ծովեր*, *գետ-գետեր*, *նստարան-նստարաններ*, *ծաղիկ-ծաղիկներ*:

Ընդհանուր օրինաչափությունից առանձնանում են հետևյալները:

1. **Գրաբարյան ն վերջնահնչյուն ունեցող մի շարք միավանկ բառեր՝** ծուկ-ծկներ, դուռ-դոներ, բեռ-բեռներ, լեռ-լեռներ, եզ-եզներ, մուկ-մկներ և այլն:

2. **Գաղտնավանկով վերջացող մի շարք երկվանկ բառեր**, որոնք ստանում են –եր հոգնակերտ մասնիկը՝ աստղ-եր, դուստր-եր, եզր-եր, ժանր-եր, լիտր-եր, կադր-եր, կայսր-եր, կոճղ-եր, հյուսն-եր և այլն: Երբ նշված բառերը հանդես են գալիս որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչ, ստանում են նույն մասնիկը՝ արքայադուստրեր, գիշանգղեր, գիսաստղեր և այլն:

3. **պարզ բազմավանկ որոշ բառեր**, ինչպես նաև -ազն, -եղն, -ակն, -ուրն երկվանկ վերջնաբաղադրիչով բառերը՝ ստեղն-ստեղներ, եղեգն-եղեգներ, արքայազն-արքայազներ, դյուցազն-դյուցազներ, շողակն-շողակներ, հեփիուրն-հեփիուրներ և այլն:

4. **Ռուս** բառը, որի հոգնակին կազմվում է –ներ մասնիկով (ռուսներ)՝ պայմանավորված բառի բարբառային երկվանկ արտասանությամբ:

5. **Այն բաղադրյալ բառերը, որոնց միավանկ վերջնաբաղադրիչն ունի գոյականական իմաստ և պահպանում է իր անկախ գործածության իմաստը՝** ձեռագրեր, առանձնատներ, գրչատուփեր, նստացույցեր և այլն [Asatryan 1983: 58-60]:

Անձ, տիկին և պարոն բառերը, համակարգային ձևերից բացի, զուգաձևությամբ ունեն նաև հակահամակարգային տարբերակներ՝ անձեր-անձինք, տիկիններ-տիկնայք, պարոններ-պարոնայք: Թվակարգը զուգաձևությամբ են արտահայտում նաև մի շարք բառեր, ինչպես՝ արկղեր/ներ, անգղեր/ներ, գամփոներ/ներ, երկրաշարժեր/ներ, կայազորներ/ներ, լեռնանցքեր/ներ ցուցամատեր/ներ, նորահարսեր/ներ, ջրահարսեր/ներ, վարչապետեր/ներ, քաղաքապետեր/ներ, նահանգապետեր/ներ, ուղենիշեր/ներ, չափանիշեր/ներ, նամականիշեր/ներ, դրամանիշեր/ներ և այլն: Կան նաև բառեր, որոնց հոգնակերտ մասնիկի ընտրությունը պայմանավորված է բազմիմաստությամբ, բաղադրիչների իմաստների երկակի ընկալմամբ (որպես բայարմատ և որպես գոյական), ինչպես նաև բարդ բառերի վերաիմաստավորմամբ: Նման դեպքերում -եր և –ներ վերջավորությունների տարբերակումը հաճախ հանգեցնում է իմաստային տարբերակման: Օրինակ՝ սրտագիրներ - սրտի աշխատանքը գրառող սարքեր, սրտագրեր - սրտի աշխատանքի գրառումը, պատկերը, արևադարձներ-արևադարձային

երկրներ՝ գոտի, *արևադարձեր* -երկրագնդի մակերևույթի երկու երևակայական շրջաններից յուրաքանչյուրը, *կրծքաչափներ*-կրծքավանդակի լայնությունը չափող գործիք, *կրծքաչափեր-կրծքի չափ*, *տոմսարկղներ* - տոմսեր վաճառելու համար նախատեսված շինություն, *տոմսարկղեր*-տոմսերի համար հատկացված արկղ, *անցումանիշներ*-անցումի տեղը ցույց տվող նշան, անցումանիշեր-անցումային նիշ¹:

Այս օրինակները ցույց են տալիս, որ որոշ բառերում հոգնակերտ վերջավորությունը ոչ միայն արտահայտում է թվային հակադրություն, այլև ծառայում է որպես իմաստային տարբերակման միջոց՝ ձևավորելով առանձին բառիմաստներ:

Ժամանակակից գրական հայերենում գոյականների հոգնակի թվի կազմության հիմնական ձևերը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով՝

Աղյուսակ 1. Հոգնակի թվի արտահայտության ձևերը ժամանակակից հայերենում

Վերջավորություն	Ընտրության հիմնական պայման	Օրինակ (եզակի)	Օրինակ (հոգնակի)
-եր	միավանկ հիմքեր (բացառություններով)	<i>ծով</i>	<i>ծովեր</i>
	բաղադրյալ բառեր՝ միավանկ վերջնաբաղադրիչով	<i>գրչափուփ</i>	<i>գրչափուփեր</i>
-ներ	բազմավանկ հիմքեր (բացառություններով)	<i>պափուհան ժամացույց</i>	<i>պափուհաններ ժամացույցներ</i>
-իկ	<i>մարդ</i> հիմքով գոյականներ	<i>մարդ տղամարդ</i>	<i>մարդիկ տղամարդիկ</i>
-այք	<i>կան-</i> և <i>պարոն-</i> հիմքով գոյականներ	<i>կին պարոն</i>	<i>կանայք պարոնայք</i>
-ք	<i>անձ</i> հիմքով գոյականներ	<i>անձ</i>	<i>անձինք</i>

¹ Օրինակները հիմնականում բերված են Դ. Ս. Գյուրջինյանի «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում» բառարան-տեղեկատուից (Gyurjinyan 2007):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում հոգնակիակազմությունը թեև հիմնականում ենթարկվում է որոշակի օրինաչափությունների, այնուամենայնիվ ներառում է պատմականորեն ձևավորված բացառություններ, զուգաձևություններ և իմաստային տարբերակումներ, որոնք հոգակերտ մասնիկների ընտրությունը դարձնում են ոչ միայն ձևաբանական, այլև բառիմաստային երևույթ:

Ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ անգլերենում գոյականների մեծ մասի հոգնակին կազմվում է մասնիկավորմամբ. հոգնակիակազմ հիմքին ավելանում են մենիմաստ-s (*boy-boys, grief-griefs, book-books, paper-papers, list-lists*) կամ -es մասնիկները [Swan 2016:184]: Ծագումնաբանորեն դրանք կապվում են հնդեվրոպական համադրական -s և -es մասնիկների հետ, որոնցից առաջինը անբուն հիմքերի դեպքում արտահայտում էր եզակի ուղղականի, սեռականի և բացառականի իմաստ, իսկ երկրորդը՝ եզակի սեռականի, բացառականի, ինչպես նաև հոգնակի ուղղականի ու կոչականի իմաստ [Djahukyan 1969: 40]:

Ժամանակակից անգլերենում -es հոգնակերտ մասնիկ ստանում են հիմնականում այն բառերը, որոնք ավարտվում են -s, -o, -z, -x, -ss, -ch, -tch, -sh տառերով կամ տառակապակցություններով, օրինակ՝ *bus-buses, tomato-tomatoes, quiz-quizzes, box-boxes, dress-dresses, church-churches* և այլն [Swan 2016: 184]:

Անգլերենում, ինչպես նաև հայերենում, հոգնակիակազմ հիմքերը կարող են պահպանել իրենց սկզբնական ձևը (*desk-desks*) կամ ենթարկվել հնչյունական փոփոխությունների: Եթե գոյականի հիմքը վերջանում է *y* տառով, որին նախորդում է բաղաձայն, ապա-es մասնիկից առաջ հիմքը ենթարկվում է *y->i* հնչյունափոխության, օրինակ՝ *baby-babies, country-countries, fly-flies, family-families* [Swan 2016: 184]: Հոգնակիակազմ հիմքը հնչյունափոխության է ենթարկվում նաև *f*-ով կամ *fe*-ով ավարտվող որոշ գոյականների դեպքում: Տեղի է ունենում *f->v, fe->v* հերթազայություն: Այդ բառերից են՝ *calf-calves, half-halves, knife-knives, leaf-leaves, loaf-loaves, life-lives, self-selves, sheaf-sheaves, shelf-shelves, thief-thieves, wife-wives, wolf-wolves, elf-elves*: Ի տարբերություն հիշյալ բառերի՝ *f*-ով կամ *fe*-ով վերջացող որոշ բառերի հոգնակին կազմվում է՝ անհնչյունափոխ հիմքին ավելացնելով -s մասնիկը, օրինակ՝ *roof-roofs, grief-griefs, safe-safes, proof-proofs, belief-beliefs, gulf-gulfs*: Կան նաև հոգնակին զուգաձևությամբ կազմող գոյականներ, օրինակ՝ *scarf-scarfs/scarves, hoof-hoofs/hooves*,

wharf-wharfs/wharves, handkerchief-handkerchiefs/handkerchieves [Swan 2016: 185]:

Եթե բառը վերջանում է *օ*-ով, որին նախորդում է բաղաձայն, հոգնակիում ստանում է *–es* մասնիկը՝ *cargo-cargoes, potato-potatoes, bravo-bravoes, Innuendo- Innuendoes* և այլն: Այս ընդհանուր օրինաչափությունից շեղվում են մի շարք տեխնիկական տերմիններ (*Cantos, Cooncertos, Folios*) և օտար լեզուներից փոխառած բառեր (*Commandos, Gringos, kimonos*): Եթե գոյականը վերջանում է *օ* տառով, որին նախորդում է ձայնավոր, կամ եթե *օ*-ով վերջացող գոյականը փոխառություն է այլ լեզվից, հոգնակին կազմվում է միայն *–s* մասնիկով՝ *logo-logos, solo-solos, radio-radios, piano-pianos, photo-photos* [Swan 2016: 184]:

Ox, child, brother (կրոնական եղբայրներ) բառերի հոգնակին կազմվում է *–en* կամ *–ren* մասնիկներով՝ *Ox->oxen, child->children, brother->brethren* [Mkhitaryan 2011: 12]:

Ի տարբերություն հայերենի՝ անգլերենում որոշ գոյականների հոգնակին կազմվում է ներքին թեքմամբ (*man-men, tooth-teeth, foot-feet, goose-geese, mouse-mice, louse-lice*), սահմանափակ բառերում (*person-people*) էլ՝ տարարմատությամբ [Swan 2016: 185]:

Անգլերենի առանձնահատկություններից է նաև այն, որ մի շարք գոյականների եզակի և հոգնակի իմաստային հակադրությունը ձևով չի արտահայտվում. թվային տարբերակումը կատարվում է համատեքստում. «*The sheep is grazing in the field*» (եզակի), «*The sheep are grazing in the field*» (հոգնակի): Այդպիսի գոյականներից են՝ *sheep-sheep, deer-deer, fish-fish, swine-swine, means- means, series- series* և այլն [Swan 2016: 186]:

Հայերենում փոխառյալ բառերը հոգնակիակազմության ժամանակ ենթարկվում են հայերենի քերականական օրինաչափություններին՝ *հոնկորներ, ամբիոններ, պոեմներ, քրիստոնյա-ներ* և այլն: Անգլերենում, սակայն, կան լատիներենից և հունարենից փոխառյալ բառեր, որոնք պահպանել են փոխատու լեզուներում ունեցած եզակի և հոգնակի թվերի ձևային հակադրությունը՝ *radius-radii* (*շառավիղ-շառավիղներ*), *genus – genera* (*տեսակ-տեսակներ*), *ameoba-ameobae, medium—media, analysis-analyses, phenomenon-phenomena, appendix-appendices* և այլն [Swan 2016: 186]:

Ժամանակակից անգլերենում գոյականի հոգնակի թվի արտահայտման ձևերը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ 2. Գոյականի հոգնակի թվի արտահայտման ձևերը ժամանակակից անգլերենում

Խումբ	Ընտրության պայմաններ	Հոգնակի արտահայտման միջոց	Օրինակ (եզակի)	Օրինակ (հոգնակի)
Կանոնավոր ձևեր	Ընդհանուր դեպք	-s վերջավորությամբ	<i>boy</i>	<i>boys</i>
-s, -x, -z, -ss, -sh, -ch վերջավորությամբ գոյականներ	Շչական հնչյուններով վերջացող բառեր	-es վերջավորությամբ	<i>bus, box, quiz, dress, match, bench, dish</i>	<i>buses, boxes, quizzes, dresses, matches, benches, dishes</i>
-y վերջավորությամբ գոյականներ (նախորդող բաղաձայնով)	-y → -ies փոփոխություն	-ies վերջավորությամբ	<i>baby</i>	<i>babies</i>
-o վերջավորությամբ գոյականներ (նախորդող բաղաձայնով)	Սովորաբար -es վերջավորությամբ (բացառություններով)	-es վերջավորությամբ	<i>cargo, potato</i>	<i>cargoes, potatoes</i>
-f / -fe վերջավորությամբ գոյականներ	f/fe → ves փոփոխություն (բացառություններով)	-ves վերջավորությամբ	<i>calf, half, knife</i>	<i>calves, halves, knives</i>
Ներքին թեքմամբ կազմվող գոյականներ	Պատմական ներքին թեքում	ներքին թեքում	<i>man, tooth, foot, goose, mouse, louse</i>	<i>men, teeth, feet, geese, mice, lice</i>
Տարարմատ ձևեր	Արմատի ամբողջական փոփոխություն	սուպլետիվ ձև	<i>person</i>	<i>people</i>
Չփոփոխվող ձևեր	Եզակի և հոգնակի ձևերը նույնն են	զրո ձևությ	<i>sheep, deer, fish, swine, series, means</i>	<i>sheep, deer, fish, swine, series, means</i>

Խումբ	Ընտրության պայմաններ	Հոգնակիի արտահայտման միջոց	Օրինակ (եզակի)	Օրինակ (հոգնակի)
Օտար լեզուներից փոխառված ձևեր	Լատիներեն/հունարեն հոգնակիների պահպանում	օտար հոգնակի ձևեր	<i>radius,</i> <i>genus,</i> <i>amoeba,</i> <i>medium,</i> <i>analysis,</i> <i>phenomenon,</i> <i>appendix</i>	<i>radii,</i> <i>genera,</i> <i>amoebae,</i> <i>media,</i> <i>analyses,</i> <i>phenomena,</i> <i>appendices</i>

Ժամանակակից հայերենում հոգնակերտները բառային իմաստի տարբերակում չեն առաջացնում, մինչդեռ անգլերենում կան գոյականներ, որոնց հոգնակին, հակադրվելով եզակիին թե՛ ձևով և թե՛ քերականական իմաստով, ձեռք է բերում նոր բառային իմաստ: Օրինակ՝ *colour-colours* (*գույն-գույներ*) և *colours* (*դրոշակ*), *part-parts* (*մաս-մասեր*) և *parts* (*տեղանք, վայր*), *room-rooms* (*սենյակ-սենյակներ*) և *rooms* (*բնակարան*) և այլն:

Անգլերենը հայերենի համեմատությամբ ունի հոգնակիակազմության մեկ այլ առանձնահատկություն ևս: Բարդ գոյականների հոգնակին կազմելիս փոփոխության է ենթարկվում բառի՝ իմաստային տեսակետից կարևոր բաղադրիչը: Համեմատենք՝ *schoolboy-schoolboys*, *drawback-drawbaks*, *fisherman-fishermen*, *passer-by - passers-by*, *mother-in-law - mothers-in-law*: Երբ բարդ գոյականի առաջին բաղադրիչը *man* կամ *women* բառն է, բարդ բառի երկու բաղադրիչներն էլ դրվում են հոգնակի թվով՝ *man servant-men servansts*, *woman doctor-women doctors* [Thokmajyan 1995: 17]: Ի տարբերություն հայերենի՝ անգլերենում տառային հապավումները կարող են ստանալ հոգնակի –s մասնիկ, օրինակ՝ *MP->MPs* (*խորհրդարանի անդամներ*), *VIP->VIPs* (*շապր կարևոր անձինք*), *OAP->OAPs* (*տարեց թոշակառուներ*), *UFO->UFOs* (*չբացահայտված թռչող օբյեկտներ*) [Mkhitarian 2011: 13]: Հայերենում բացառություն են *բուհ* և *զագս* տառային հապավումները:

Երկու լեզուների զուգադրությունը ցույց է տալիս, որ գոյականի թվի քերականական իմաստի արտահայտությունը ժամանակակից հայերե-

նում ավելի միասնական ու կանոնակարգված բնույթ ունի: Այն հիմնականում դրսևորվում է մասնիկների կցումով, որոնց ընտրությունը պայմանավորված է վանկաքանակությամբ (*գիրք-գրքեր, տուն-տներ, աղջիկ-աղջիկներ*), մինչդեռ անգլերենում թվի քերականական իմաստի արտահայտությունը ավելի բազմաձև է և կրում է պատմական զարգացման տարբեր փուլերի ազդեցությունը: Այն դրսևորվում է հետևյալ եղանակներով. 1. *մասնիկների կցումով* (-s, -es, -ies և այլն), 2. *ներքին թեքումով* (*man → men*), 3. *զրո մասնիկով* (*sheep → sheep*), 4. *տարարմապոխությամբ* (*person → people*), 5. *այլ լեզուներից ժառանգած կամ փոխառած ձևերով* (*phenomenon → phenomena*):

Անհոգնական և անեզական գոյականներ

Զուգադրվող լեզուներում կան բառեր, որոնց առարկայնության գաղափարը դուրս է թվակարգային ոլորտից: Կան բառերի մի շարք խմբեր, որոնք իրենց արտահայտած հատուկ իմաստների պատճառով սովորաբար կամ միշտ գործածվում են եզակի թվով և որպես կանոն հոգնակի ձևեր չեն ունենում, կամ հոգնակի են կազմում միայն հազվադեպ: Այդպիսի բառերը կոչվում են **անհոգնական գոյականներ**:

Ժամանակակից հայերենում այդ խմբին պատկանում են հետևյալները.

1. *-ություն* ածանցով կազմված հավաքական գոյականները՝ *մտավորականություն, ուսանողություն, երիտասարդություն* և այլն: Հոգնակի չունեն նաև *ամանեղեն, ոսկեղեն, արծաթեղեն, բանջարեղեն, երկաթեղեն, կանաչեղեն, դեղորայք* և այլ հավաքական գոյականներ.

2. գործողությունների, հատկությունների անունների մի մասը, որ գործածվում է միայն վերացական նշանակությամբ, օրինակ՝ *ուսում, մանկություն, գերություն, հպարտություն* և այլն: Իսկ *-ում* և *-ություն* ածանցներով կազմված գոյականների մի մասը, որ ունի նաև թանձրացական նշանակություն, ազատ գործածվում է նաև հոգնակի թվով, օրինակ՝ *շարժումներ, հանդիպումներ, զեկուցումներ, հիշողություններ* և այլն.

3. ուսմունք, ուղղություն, հասարակական կառուցվածքի ձև ցույց տվող բառերը, որոնք կազմվում են հայերեն *-ություն* կամ օտար *-իզմ* ածանցներով, օրինակ՝ *քրիստոնեություն, բուդդայականություն, դարվի-նիզմ, կապիտալիզմ, կոմունիզմ* և այլն.

4. նյութի անունները, եթե ցույց չեն տալիս տեսակ՝ *պողպատ, թթվածին, պղինձ, թանաք, կաթ, մածուն, գինի, ոսկի* և այլն.

5. հատուկ անունները, եթե չեն վերաբերում տարբեր անձերի, տեղանունների, նույն ընտանիքի, գերդաստանի անդամների, ամուսինների և այլն:

6. այն անունները, որոնք նշանակում են միայն մեկ եզակի առարկա, ինչպես՝ *Լուսին, Արեգակ, Եվրոպա, Երկրագունդ, Ասիա, Մարս* և այլն:

Ժամանակակից անգլերենում անհոգնական են հետևյալները.

1. նյութերի անունները՝ *iron, sand, chalk, bread, cheese, wine, tea* և այլն.

2. վերացական գոյականները՝ *anger, love, excitement, progress, advice, information* և այլն: Որոշ վերացական գոյակներ՝ *idea, change, suggestion* և այլն, կարող են ունենալ թե՛ եզակի և թե՛ հոգնակի ձևեր: Օրինակ՝ *the waters of the Atlantic, the sands of the Sahara, the blue skies of Italy*.

3. *news* գոյականը և մի շարք գիտությունների անուններ, որոնք վերջանում են *-ics* վերջածանցով՝ *physics, optics* և այլն: Օրինակ՝ *What is the news this morning? Optics is a branch of physics*.

Նույն *-ics* վերջածանցով որոշ գոյականներ՝ *mathematics, phonetics, politics* և այլն, կարող են ընկալվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի իմաստով: Օրինակ՝ *Mathematics is his weak subject. His mathematics are weak*.

Զուգադրվող լեզուներում առանձին խումբ են կազմում նաև **անեզական գոյականները**: Ժամանակակից հայերենում դրանք *-անք, -ենք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված բառերն են, որոնք ցույց են տալիս գերդաստան, ընտանիք, խմբակցություն՝ *Վարդանանք, Գրիգորենք, Վեդունք, պապոնք*: Այդ շարքին են դասվում նաև *-եր, -ներ* մասնիկներով աշխարհագրական անունները՝ *Տեղեր, Կարպապոներ, Նիդեռլանդներ, Ֆիլիպիններ, Հիմալայներ* և այլն [Asatryan 1983: 161-63]:

Անգլերենում այդ խմբին են պատկանում՝ հետևյալները

1. այն գոյականները, որոնք նշանակում են երկու միանման մասերից բաղկացած առարկաներ (գործիքներ կամ հագուստ). *scissors, spectacles, glasses, tongs, scales, trousers, shorts* և այլն:

2. որոշ խաղերի անուններ. *billiards, cads, dominoes, draughts* և այլն:

3. այլ բազմաձև գոյականներ. *riches, clothes, troops, goods, surroundings, savings, belongings, proceedings* և այլն:

Հավաքական գոյականներ

Թվի քերականական իմաստի արտահայտման տեսակետից առան-

ծին խումբ են կազմում **հավաքական գոյականները**, որոնք ցույց են տալիս միասեռ կամ միատեսակ առարկաների ամբողջություն: Ժամանակակից հայերենում դրանք ձևականորեն արտահայտվում են ինչպես պարզ կամ արմատական բառերով՝ *վրառ, ամբոխ, գունդ, ումակ*, այնպես էլ հավաքականակերտ ածանցներով՝ *ամանեղեն, կտորեղեն, դեղորայք, ուսանողություն, նամականի, ավագանի* և այլն:

Այս բառերի մի մասը, արտահայտելով հավաքականության իմաստ, գործածվում է միայն եզակի թվով, մի մասն էլ ունենում է և՛ եզակիի, և՛ հոգնակիի հակադրության ձևեր, ինչպես՝ *գորքեր, ժողովուրդներ, ազգեր, թիմեր*: Եզակի թվով հավաքական գոյականները ենթակա լինելու դեպքում պահանջում են եզակի թվով ստորոգյալ, իսկ հոգնակի ձևով գործածվելիս՝ հոգնակի ստորոգյալ՝ *Ժողովուրդը պայքարում է: Ժողովուրդները պայքարում են*:

Մարդկանց, իսկ երբեմն նաև կենդանիների խումբ ցույց տվող հավաքական գոյականներն անգլերենում կարող են գործածվել երկու կերպ. դրանք կարող են ներկայացնել խումբը որպես մեկ ամբողջություն կամ որպես առանձին անդամների ամբողջություն՝ կախված իմաստային ընկալումից:

ա) Միայն ձևով եզակի, բայց իմաստով հոգնակի ընկալվող հավաքական գոյականներ.

People («մարդիկ»), *police, clergy, cattle* և երբեմն *folk* գոյականներն ունեն միայն եզակի ձև, սակայն սովորաբար պահանջում են հոգնակի բայ-ստորոգյալ, քանի որ դրանցով արտահայտվող խմբի անդամները դիտվում են առանձին-առանձին, օրինակ՝ «*Some people **are** very inquisitive*», «*The police **have** not made any arrests*», «*Cattle **were** allowed to graze on the village common*»: Այս նախադասություններում բայ-ստորոգյալը դրված է հոգնակի թվով, քանի որ խոսքը խմբի անդամների մասին է, ոչ թե խմբի՝ որպես մեկ ամբողջության [Thokmajyan 1995: 18]:

բ) Հավաքական գոյականներ, որոնք կարող են պահանջել և՛ եզակի, և՛ հոգնակի բայ-ստորոգյալ. *Family, crew, team, group, committee, delegation, government, army* *people* («ազգ, ժողովուրդ») գոյականները կարող են ունենալ ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ձևեր՝ *families, crews, teams, groups, committees, delegations, governments, armies, peoples*:

Այս գոյականների եզակի ձևը կարող է համադրվել թե՛ եզակի, թե՛ հոգնակիբայ-ստորոգյալին՝ կախված նրանից, թե խումբը ընկալվում է որպես մեկ ամբողջություն, թե՞ որպես առանձին անդամների միություն [Mkhitaryan 2016: 12]:

1. Բայ-ստորոգյալը դրվում է եզակի թվով, երբ խումբը դիտվում է որպես մեկ ամբողջություն. *His family is well known in their town.*

2. Բայ-ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, երբ խմբի անդամները դիտվում են նառանձին-առանձին. *His family are early risers.*

Եզրակացություններ

1. Ժամանակակից հայերենի և անգլերենի զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյականի թվի քերականական իմաստը երկու լեզուներում էլ արտահայտում է եզակիության և հոգնակիության հակադրությունը, սակայն դրա ձևական իրացման միջոցները պայմանավորված են յուրաքանչյուր լեզվի կառուցվածքային և պատմական առանձնահատկություններով:

2. Հայերենում թվի կարգն արտահայտվում է առավել կանոնակարգված ձևով՝ հիմնականում հոգնակիակազմ մասնիկների միջոցով, մինչդեռ անգլերենում, կանոնավոր մասնիկավորումից բացի, պահպանվել են ներքին թեքմամբ, զրո ձևությով, տարարմատությամբ և այլ անկանոն միջոցներով կազմվող հոգնակիներ:

3. Երկու լեզուներում էլ նկատվում են նախահնդեվրոպական ժառանգության որոշ դրսևորումներ, սակայն թվակարգի արտահայտության միջոցները զարգացել են տարբեր ուղղություններով՝ ձևավորելով ինչպես ընդհանրություններ, այնպես էլ կառուցվածքային էական տարբերություններ:

4. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թվի քերականական իմաստի արտահայտումը պայմանավորված է ոչ միայն ձևաբանական միջոցներով, այլև համատեքստով, բառային իմաստով և գործառական կիրառությամբ, հատկապես այն դեպքերում, երբ ձևական տարբերակում բացակայում է:

5. Երկու լեզուներում էլ առկա են թվակարգից մասնակի կամ ամբողջությամբ դուրս գտնվող բառախմբեր՝ անհոգնական, անեզական և հավաքական գոյականներ, որոնք սահմանափակում են թվի կարգի դասական հակադրության կիրառությունը և ունեն իրենց գործածության առանձնահատկությունները:

6. Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել զուգադրական լեզվաբանության, լեզուների ուսուցման, թարգմանագիտության և ավտոմատ լեզվամշակման ոլորտներում:

Գրականության ցանկ

- [1] Aghayan E.B., Lezvabanut'yan himunqner [Fundamentals of Linguistics]. Yerevan, 1987.
- [2] Asatryan M.Ye., Jamanakakic hajoc lezu [Modern Armenian Language]. Yerevan, 1983.
- [3] Gyurjinyan D.S., Anun khosqi maseri tvi kargy ardi hajerenum, bararan-texekatu [The Category of Number of Nominal Parts of Speech in Modern Armenian, Reference Dictionary]. Yerevan, 2007.
- [4] Djahukyan G.B., Lezvi zargacumy ev karucvacqy [Language Development and Structure]. Yerevan, 1969.
- [5] Jahukyan G.B., Hayoc lezvi patmut'yun [History of the Armenian Language], Yerevan, 1987.
- [6] Michael Swan, *Practical English Usage*, Oxford University Press, 2016.
- [7] Mkhitarian Ye., Hambartsoumyan N., Markaryan A., Anglereni himnakan qerakanut'yun: Dzevabanut'yun [English Grammar: Morphology]. Yerevan, 2011.
- [8] Petrosyan H.Z., Goyakani tvi kargy hayerenum [The Order of Numerals in Armenian]. Yerevan, 1972.
- [9] Petrosyan H.Z., Hayerenagitakan bararan [Dictionary of Armenian Studies]. Yerevan, 1987.
- [10] Thokmajian H. A., Jamanakakic anglereni qerakanut'yun [Modern English Grammar]. Yerevan, 1995.

Լույս է տեսել Վ. Գ. Համբարձումյանի «Ակնարկներ գրական հայերենի պատմության» (Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2026, 486 էջ) աշխատությունը:

Գիրքն ընդգրկում է գրական հայերենի պատմության առանցքային հարցեր, որոնք նախկինում չեն եղել հատուկ ուշադրության առարկա, և որոնց լուծումն ունի կարևոր նշանակություն ընդհանրապես մեր լեզվի և այն կրող հանրության պատմամշակութային ինքնատիպ առաջընթացի վերաբերյալ նոր և ավելի առարկայական պատկերացում ունենալու համար:

Ընդգրկված նյութի, տեսական հիմունքների և ըստ այդմ բնագրային և լեզվական վերլուծությունների առումով այն միանգամայն նորություն է՝ հիմնված հայերենագիտության արդի ձեռքբերումների վերաբերյալ հեղինակի հանդես բերած քննական նկատառումների վրա:

Աշխատանքը բնագրագիտական-լեզվաբանական քննություն է, ներառությունից բացի՝ բաղկացած է երեք մասից՝ գրավոր ժամանակաշրջանի հին, միջին և նոր շրջանների լեզվական ընտրված, մինչև օրս չուսումնասիրված նյութի վերաբերյալ:

Առաջին շրջանում առանձին-առանձին նոր քննության առարկա են հայերենի իբրև ազգային-եկեղեցական մշակույթի դրսևորման, «վիպասանական հայերեն»-ի լեզվական առանձնահատկությունների, «Աստվածաշունչ» գրքի թարգմանության բառապաշարի, բնագրային երկագրությունների, «Յաճախապատում ճառք»-ի հունաբանությունների, Բուզանդի բնագրի մի արտահայտության, մեծանուն մատենագիրներ Աբրահամ Աղբաթանեցու, Թեոդորոս Քոթենավորի, Սահակ Ձորաոփորեցու, Հովհան Ծննեցու, Զաքարիա Ձագեցու երկերի բառապաշարի հարցերը:

Աշխատանքի երկրորդ մասում քննության են առնվում միջին գրական հայերենի՝ իբրև ուշ միջնադարի մշակույթի դրսևորման, «կիլիկյան հայերենի»՝ իբրև միջին գրական նորմավորման տարբերակի, ինչպես նաև Ներսէս Շնորհալու, միջանադարյան անհայտ հեղինակներ Անանունի «Պատմութիւն», Հեթում Նղիրցու «Պատմութիւն» երկերի, Վարդան

Արևելցու «Ժղլանքի» լեզվի և Զիլբերտոս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց»-ի լեզվի վերաբերյալ հարցերը:

Երրորդ մասում կատարվում է գրական հայերենի մշակութային-գործառական արժեքի, նոր գրական լեզվի ընտրության («գրապայքարի»), գրական կանոնարկման գործում Մխիթարյանների դերի, Հակոբ Շամախեցի, Սիմեոն Երևանցի մատենագիրների երկերի, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի, «Յայսմաուրք» ժողովածուի մեջ եղած բառերի, այլև Ղևոնդ Ալիշանի լեզվագիտակա մոտեցումների, Հովհ. Թումանյանի արձակում և Ավ. Իսահակյանի վաղ շրջանի չափաժողոված գործածված բառերի վերաբերյալ քննություն:

Գիրքն ունի հավելված, որ նվիրված է անվանի մխիթարյան քերական Վրթ. Չալոխյանի քերականագիտական հայացքներին, որոնք էլ մեծ դեր են խաղացել հայերենի դասական և ոչ դասական տարբերակների առանձնացման և գնահատության հարցերում:

* *
*

Հայոց լեզվի պատմության բնագավառում մեծ տեղ ունի հայերեն կամ հայերենին այսպես թե այնպես առնչվող ամեն կարգի բառարանների ուսումնասիրությունը՝ բառարանագրությունը: Է. Բ. Աղայանը, միանգամայն իրավամբ, առանձնացնում է ոչ միայն բառարանագրություն, այլև բառարանագիտություն ըմբռնումները (տերմինները):

Մեզ են հասել բազմաթիվ և տարաբնույթ բառարաններ՝ ձեռագիր կամ հնատիպ վիճակով, որ մշակութային մեծ արժեք են: Դրանք տպագիր բառարանների հետ միասին կազմում են հայ բառարանագրության ամբողջությունը: Վերջիններիս բառարանագիտական քննությունը լեզվի պատմաբանի համար գնահատության արժանի իրողություն է:

Հրապարակի վրա է նման մի նոր աշխատություն՝ Ն. Գ. Հովհաննիսյանի ««Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններ (ԺԳ-ԺԸ դարեր)» (Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2026, 242 էջ):

Աշխատանքում ուշադրության առարկա հարցերը քննվում են ոչ թե (ինչպես ընդունված է) գլուխներով, այլ թեման արտացոլող հստակ վերնագրերով. դրանք 9-ն են՝ բացի «Ներածություն. պատմական ակնարկ» առաջին մասից:

Հեղինակն անդրադառնում է ձեռագիր բառարանների կազմությանը և տեսակներին. հոմանիշություն երևույթի վերաբերյալ միջնադարյան քերականական աշխատությունների հեղինակների պատկերացումներին, ձեռագիր բառարաններում ամփոփված բառային միավորների շարքերին, այլև բառակազմական յուրահատկություններին, բառարաններում տեղ գտած բառային տարբերակներին, (զուգաձևերին), բառիմաստային տեղաշարժերին, բառային նորաբանություններին, բարբառային իրողություններին, վերջապես՝ փոխառյալ բառերին և օտար բառային կազմություններին:

Գիրքն ավարտվում է անգլերեն ամփոփումով (էջ 222-2245); Բավականին տպավորիչ է աշխատության գրականության ցանկը (ձեռագրեր, կայքէջի նյութեր, թղթատիպ գրականություն), որ բազմազան է և ընդգրկուն, օգտագործված գիտական բարեխղճությամբ:

Վերը մենք նշեցինք այս ուսումնասիրության թեմատիկ ընդգրկումը 13-18-րդ դդ մեզ հասած հայերեն ձեռագիր հոմանիշների բառարանների վերաբերյալ: Հայ բառարանագրությանը ծանոթ լինելու հանգամանքը մեզ թույլ է տալիս ասելու, որ աշխատության թեմատիկ ընդգրկումը, իբրև բառարանագիտական աշխատության մի նոր մոտեցման դրսևորում, բացառիկ է, աշխատատար, գիտական խոր վերլուծություն ենթադրող, և հեղինակը՝ միջնադարյան բառարանագրության մեր օրերի ջանադիր ուսումնասիրող Ն. Գ. Հովհաննիսյանը հասել է որոշակի ձեռքբերման:

Այս աշխատությունը նպաստ է հայ բառարանագրության պատմությանը:

Վ. Գ. Հ.

2026 թ. հունիսի 18-ին ԿԳՄՍՆ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Ջահուկյանական ընթերցումներ» խորագրով մեկօրյա գիտաժողով՝ առանձին երկու նիստով: Նման խորագրով միջոցառումը ինստիտուտում դարձել է ավանդական, տարիներ շարունակ ինստիտուտի աշխատակիցներին գիտական գործունեության լավ առիթ է ընձեռնում՝ զբաղվելու հայերենի և առհասարակ լեզվաբանության արդիական խնդիրներով:

Գիտաժողովին, ինչպես նաև խորդների դեպքում ևս, զեկուցումներով հանդես են եկել թե՛ ինստիտուտի և թե՛ գիտական այլ հաստատությունների (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան, Երևանի պետական համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ԿԳՄՍՆ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտներ և այլն) շուրջ երկու տասնյակ հայերենագետներ:

Բավականին բազմազան և հետաքրքիր թեմաներ են ընդգրկված եղել՝ հայոց լեզվի նախագրային և գրավոր շրջանների պատմություն, լեզվի քերականական կառուցված-

քի ուսումնասիրությանը վերաբերող հարցեր, իմաստաբանություն, բառարանագրություն, քերականական աշխատությունների վերլուծություն, բարբառագիտություն և այլն:

Բնականաբար, ավելի մեծ թվով մասնակցություն ունեցան լեզվի ինստիտուտի գիտաշատողները, որոնց զեկուցումները հիմնականում առնչում էին նրանց պլանային աշխատանքները, և դա մի տեսական հաշվետու փորձություն է, որը հանձնվում էր գիտաժողովի մասնակիցների դատին:

Գիտաժողովի առաջին նիստում կարդացվեց ինը զեկուցում՝ հետևյալ թեմաներով. «Բանջար բառի իմաստային դրսևորումները հայերենում» (զեկ.՝ Ա. Ամիրխանյան), «Անցողական բայ (սեռ) տերմինը ըստ արևմտահայ դասագրքերի» (զեկ.՝ Ա. Ֆիշենկոյան), «Ճամուկ, ճիրան, ճիւղ և մի քանի այլ բառերի ստուգաբանության շուրջ» (զեկ.՝ Հ. Զաքարյան), «Միջինհայերենյան բառաշերտը Ներսես Շնորհալու հանելուկներում» (զեկ.՝ Հ. Թադևոսյան), «Կոզենի բարբառի բառապաշարի մի շարք հետաքրքրական իրողություններ» (զեկ.՝ Հ. Խաչատրյան), «Արդի հայերենի անցած միջինհայերենյան փոխառությունները» (զեկ.՝ Վ. Խաչատրյան):

յան, Հ. Թադևոսյան), «Շնորհի խոսվածքը» (զեկ.՝ Վ. Կատվալյան), «Իմաստի խաթարումը շիզոֆրենիայի և աբսուրդի գեղագիտության համատեքստում» (զեկ.՝ Ս. Հովհաննիսյան) և «Խոսքաշարային նորաբանությունների բնութագրման ու դասակարգման փորձ» (զեկ.՝ Հ. Բալոյան):

Երկրորդ նիստում կարդացված զեկուցումները ութն էր. «Հովսեփ Սանդալճյանը և ուրարտերենը» (զեկ.՝ Վ. Գ. Համբարձումյան), «Արցախի տեղանվանական համակարգի պարզ կամ արմատական տեղանունները» (զեկ.՝ Լ. Մարգարյան), «Ժամանակակից հայերենի նախադասություն դարձվածային միավորների ձևաիմաստային խմբերը» (զեկ.՝ Շ. Մինասյան), «Բարդուղիմեոս Մարաղացու քերականական դիտողությունները» (զեկ.՝ Տ. Սիրունյան), «Գլոբալիզացիայի և թվային հաղորդակցության ազդեցությունը ժամանակակից հայերենի վրա» (զեկ.՝ Մ. Ստեփոնյան), «Բառի երկկողմանի հոգեբանական բնույթը. ձայնային սիմվոլիկա երևույթի կիրառելիությունը արաբերեն դսավանդելիս» (զեկ.՝ Ս. Տիգրանյան), «*Իմաստային դերեր* և *քերականական դերեր* հասկացությունների ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ» (զեկ.՝ Ս. Ավետյան) և ««Կապույտ ամպերը». հու-

զական տարբերական և կապվածության հոգեբանությունը» (զեկ.՝ զեկ. Ա. Ֆիրյան):

Թեմաների պարզ թվարկումը, անգամ տեղեկատու լինելու ձևի մեջ, որոշակի պատկերացում է տալիս գիտաժողովի թեմատիկ ընդգրկման մասին, թեմաներ, որոնք լեզվաբանության մեջ տարբեր չափերով և ընդգրկումներով արծարծված են, ուստի նրանցում նվազագույնի է հասնում նորույթի շեմը, ինչպես նաև որոշ թեմաներ ամբողջությամբ նորություն էին՝ թե՛ ընդգրկման և թե՛ տեսական վերլուծության առումով:

Գիտաժողովն իր տեղն ունեցավ ներկայիս հայերենագիտության առաջընթացի ճանապարհին:

* * *

2026 թ. հունիսի 30-ին և հուլիսի 1-ին ԿԳՄՄՆ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Բառագիտության հարցեր» ընդհանուր խորագրով հայերենագիտական միջազգային երկօրյա գիտաժողով, որի մասնակիցները զեկուցումներով հանդես էին գալիս առկա և առցանց եղանակով:

Գիտաժողովի ընթացքում հայերենի բառագիտությանն առնչվող տարբեր բնույթի զեկուցումներով հանդես եկան ոչ միայն գիտաշխատողներ, այլև ուսուցիչներ և ուսա-

նողներ ՀՀ գիտակրթական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ (ԿԳՄՍՆ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Ռուս-հայկական համալսարան, Գավառի պետական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարաններ, «Տաթև» գիտակրթական համալիր, Ա. Շահինյանի անվան ֆիզիկա-մաթեմատիկական մասնագիտացված դպրոց, Աստղածորի միջնակարգ դպրոց, Վարդենիկի կրթահամալիր):

Զեկուցումների մեծ մասը նվիրված էր բառարանագրության առանցքային որոշ հիմնահարցերի: Բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի (ԳԱԱ ԼԻ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ) զեկուցումը նվիրված էր ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում դասական գրողների երկերից չվկայված բառերին: Բ. գ. թ. Մ. Քումուսյան (ԳԱԱ ԼԻ) անդրադարձավ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» տեղ գտած պատահական նմանություններին ու կեղծ արմատներին: Զ. Գ. Խալիկյանի և Ա. Ափոշյանի (ԳԱԱ ԼԻ) համատեղ զեկուցումը վերաբերում էր նոր անձնանունների բառարանագրու-

ման կարևորությանը: Բառերի բառարանային բացատրության հոմանշային եղանակին անդրադարձավ Մ. Հ. Ֆելեքյանը (ԵՊՀ, ԳԱԱ ԼԻ): Հ. Գալֆայանի «Առաջնորդ անգլերեն և հայերեն զրուցատրության» աշխատության բառարանագրական արժեքը ներկայացրեց Վ. Մ. Բաղդամյանը (ԳԱԱ ԼԻ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարան):

Զեկուցումների մի մասը վերաբերում էր օտարաբանություններին. օտար բառերի գործածությանը (Մ. Ա Ալեքսանյան. ԿԳՄՍՆ լեզվի կոմիտե), օտար բառերի ոճաստեղծ դերին արևմտահայ երգիծաբանության մեջ (Կ. Լ. Առաքելյանը (ԼԻ) ներկայացրեց դրանց ոճաստեղծ դերը արևմտահայ երգիծաբանության մեջ):

Տերմինների նկարագրականության և պայմանականության հարաբերակցության խնդիրը դիտարկեց Հ.Լ. Զաքարյանը («Տաթև» ԳԿՀ): Ա.Ա. Մկրտումյանը (ԼԻ) ներկայացրեց իր դիտարկումները գիտագործական եզրույթների վերաբերյալ: Վ. Ա. Բարսեղյանի (ԵՊՀ) զեկուցումը վերաբերում էր արդի արևելահայերենում «զենք, զինամթերք» նշանակող գրաբարյան բառերի իմաստային զարգացումներին: Մարդաբանական փոխաբերացումը ժամանակակից հայե-

րենի բուսանուններում (Արցախի բարբառի և անգլերենի համեմատությամբ) քննեցին Լ. Ս. Սանթրոյանը և Լ. Ս. Թովմայանը (Ռուս-հայկական համալսարան):

Քննության առարկա էին նաև հայ դասականների ստեղծագործություններում բառապաշարի հարցերը. հատկական փոխառությունների վերաբերյալ զեկուցեց Ս. Վ. Պապիկյանը (ԼԻ):

Ուրագրավ զեկուցումներ եղան նաև իմաստաբանության վերաբերյալ: Ա. Ս. Գալստյանի և Լ. Գ. Թեյլանի (ԳԱԱ ԼԻ) զեկուցումը վերաբերում էր հայերենի *դնել* բայի իմաստագործառական վերլուծությանը: Արդի հայերենի *երգ* բաղադրիչով կազմությունների իմաստային-գործառական յուրահատկություններին անդրադարձավ Վ. Մ. Խաչատրյանը (ԼԻ): Ա. Հ. Կարապետյանի և Լ. Թոռչյանի (ԳՊՀ) զեկուցումը վերաբերում էր անգլերենում և հայերենում գունանշող բառերի իմաստաբանական առանձնահատկություններին: Առողջապահությանը, բժշկությանը վերաբերող բառերի փոխաբերական գործածություններն արդի հայերենում ներկայացրեց Հ. Ս. Բալոյանը («Պատմաբանասիրական հանդես» խմբագրություն), իսկ Ռ. Ա. Մովսեսյանը (ԳԱԱ ԼԻ) դիտարկեց ռազմական ոլորտի բառերի բառա-

շերտային տեղաշարժը Ղարաբաղի բարբառում:

Ն. Մ. Սիմոնյանն (ԼԻ) իր զեկուցման մեջ անդրադարձավ հայալեզանական բառային մի քանի զուգաբանությունների, Ն. Գ. Խաչատրյանը (ԼԻ) ներկայացրեց ավելորդաբանությունը: Վ. Ա. Ներսիսյանի (ԼԻ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ԳՊՀ) զեկուցումը վերաբերում էր Էդ. Աղայանի աշխատություններում: Բառակազմության տեսական հարցերի քննությանը: Արցախի վարչատարածքային միավորների անվանումների տարածամանակյա քննությամբ հանդես եկավ Լ. Գ. Մարգարյանը (ԳԱԱ ԼԻ):

Գիտաժողովին մասնակցեցին նաև հետազոտող ուսուցիչներ: Ա. Ն. Սարումյանը (Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ մասնագիտացված դպրոց) ներկայացրեց բառի ընտրության նշանակությունը խոսքում: Դպրոցում բառագիտության ուսուցման մարտահրավերներին և լուծումներին անդրադարձան Ա. Ս. Դավթյանը (Վարդենիկի կրթահամալիր) և Ե. Է. Արշակյանը (Աստղածորի միջն. դպրոց):

Գիտաժողովի բոլոր նիստերն ընթացան ակտիվ քննարկումներով, սուր հարցադրումներով: Ներկաները նշեցին, որ բոլոր զեկուցումներն էլ հետաքրքիր էին, և անհրաժեշտ է դրանք հրապարակել:

ԱՐՏԱԿ ՎԱՐՂԱՆՅԱՆ

Տաղանդավոր մտավորական Արտակ Վարդանյանը ծնվել է 1951 թ. Նախիջևանի Ազնաբերդ գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան, ավարտել է պոլիտեխնիկական ինստիտուտի կիրճենետիկայի ֆակուլտետը: Գրականության, մշակույթի լեզվի նկատմամբ հակումները նրան տանում են հասարակական գիտություններ՝ լրագրություն, թարգմանություններ, գրական-ստեղծագործական աշխատանք, վերջապես լեզվաբանություն, մասնավորապես հայ բարբառագիտություն:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում նա մասնագիտանում է հայ բարբառների ուսումնասիրության ոլորտում, գրում է «Վայոց ձորի խոսվածքների լեզվաշխարհագրական բնութագիրը» թեմայով թեկնածուական ատենախոսություն: Հետագայում հեղինակում է գիտական մի շարք հոդվածներ՝ նվիրված Վայոց ձորի և նրան հարակից տարածքների խոսվածքների հնչյունաբանական, բառագիտական և շարահյուսական իրողությունների քննությանը:

Հեղինակելով «Վայոց ձորի միջբարբառը» (Ե., 20045 թ.), «Հյուսիսային Գողթնի միջբարբառ» (Ե., 2021 թ.) մենագրությունները՝ Ա. Վարդանյանը որոշակի կապ է տեսնում հիշյալ տարածքների խոսվածքների և Արարատյան ու Ջուղայի բարբառների միջև:

Վերջին տարիներին (2018-2026 թթ.) աշխատում էր լեզվի ինստիտուտում: Գիտության, մշակույթի վերաբերյալ լայն պատկերացումների տեր գրող-գիտնականը նկատելի ավանդ է ունեցել լեզվի ինստիտուտի գործունեության մեջ, իբրև հայ բարբառագիտության բաժնի աշխատակից՝ մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների, հանդես է եկել ուշագրավ զեկուցումներով, իսկ գրական-ստեղծագործական աշխատանքում ունի իր ներդրումը:

Ա. Վարդանյանը նաև գրականության մարդ էր, գրել է մանկական-ուսուցողական բնույթի սեղմ պատմվածքներ՝ ժողովրդական պատումներով թաթախված, հեղինակել է արձակ գործեր, հուշագրական աշխատանքներ: Այս ամենը նշան է այն բանի, որ նա հանդիսանում էր Հայաստանի գրողների միության անդամ, որին հաճախ էի տեսնում վերջինի նիստերին և ժողովներին:

Հանդարտ և ներքին հոգածություն ունեցող մտավորական էր, աշխատանքին նվիրված ու ամենօրյա գործի տեր: Ա. Վարդանյանի անունը և գործը մնալու են հայ լեզվաբանության մեջ և գրական աշխարհում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Գ. Համբարձումյան, Հնդեվրոպական ատամնային բաղաձայնների առանձնացումը հայերենում և թոխարական լեզուներում	3
Միքայելյան Ս. Ա. «Գլուխ» և «սիրտ» սոմատիկ բառերի լեզվամշակութային և իմաստաբանական առանձնահատկությունները հայերենում և արաբերենում	14
Սիրունյան Տ. Ղ., Սարգսյան Ռ. Գ. Լատինական gerundium-ը և supinum-ը հայերենի լատինատիպ քերականություններում.....	28

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բարսեղյան Ա. Բացահայտչի գնահատումը հայ շարահյուսագիտության մեջ	43
Սավոյան Գ. Վ. Գերմաներենի, հայերենի և ռուսերենի կրկնավոր բաղադրությունների զուգադրական քննություն	53
Խաչատրյան Ն. Գ. «Դեպքում» կապի գործածությունը ժամանակակից հայերենի պաշտոնական և լրագրողական խոսքում	69

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Բաղդամյան Վ. Մ. Հայերեն բառապաշարի ընդգրկումը Մ. Սիմեոնյանի «Անգլերեն-հայերեն բառարանում».....	85
Ղազարյան Հ. Գոյականի թվի քերականական իմաստի դրսևորումները ժամանակակից հայերենում և անգլերենում	96
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	115
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	118

CONTENTS

Articles: V. Hambardzumyan. The reflexes of Indo-European dental consonants in Armenian and the Tocharian languages.- 3. S. Mikayelyan, Linguocultural and semantic features of the somatisms “head” and “heart” in Armenian and Arabic. -14. T. Sirunyan, R. Sargsyan, The Latin Gerundium and Supinum in the latinizing grammars of Armenian.- 28. **D i s c u s s i o n s:** A. Barseghyan, Annotation of evaluative constructions in armenian Syntax.- 53. G. Savoyan, Kontrastive analyse der paarformeln im Deutschen, Armenischen und Russischen.-53. N. Khachatryan, The use of the postposition «depqum» in contemporary Armenian media language.- 69. **R e p o r t s:** V. Baghranyan, Peculiarities of Armenian lexicon in M. Simeonean’s “english–armenian” dictionary- 85. H. Ghazaryan, The Manifestation of the Grammatical meaning of noun number in Modern Armenian and English-96. **Book reviews**- 115. **Science News** - 118.

СОДЕРЖАНИЕ

С т а т ь и: В. Амбарцумян, Рефлексы индоевропейских дентальных согласных в армянском и тохарских языках- 3. С. Микаелян, Лингвокультурные и семантические особенности соматизмов „голова“ и „сердце“ в армянском и арабском языках- 14. Т. Сирумян, Р. Саргсян, Латинские gerundium и supinum в латинизирующих грамматиках армянского языка- 28. **Д и с к у с с и и обсуждения:** А. Барсегян Оценки приложения в армянском синтаксисе- 43. Г. Савоян, Сравнительный анализ именных редупликаций в немецком, армянском и русском языках. Н. Хачатрян, Употребление послелога «դիպրով» в современном армянском медиаязыке- 69. **С о о б щ е н и я:** В. Баграмян, Особенности армянской лексики в “англо–армянском” словаре М. Симеоняна- 85. А. Газарян, Проявления грамматического значения числа имени существительного в современном армянском и английском языках- 96. **К н и ж н о е обозрение** - 115. **Н а у ч н а я ж и з н ь** - 118.

Ի Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն»

հանդեսը, որի առաջի նիսամարը լույս է տեսել 2003 թ.:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ lezu.lezvabanutyun@gmail.com

К С В Е Д Е Н И Ю

Институт языка имени Р. Ачаряна издает журнал “Язык и языкознание”, первый номер

которого был издан в 2003г.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: lezu.lezvabanutyun@gmail.com

A C K N O W L E D G E M E N T

Language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics

»magazine, the first number of which was published in 2003.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: lezu.lezvabanutyun@gmail.com

ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(Հայերենագիտական հանդես)

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

1 (34)
2026

Գլխավոր խմբագիր Վ. Գ. Համբարձումյան

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Հ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափեր՝ 60x84^{1/16} տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: